

# **Կոնվենցիա ճանապարհային նշանների և ազդանշանների մասին (Վիեննա, 1968թ., նոյեմբերի 8)**

Գլուխ I. Ընդհանուր դրույթներ (էջ 1)

Գլուխ II. Ճանապարհային նշաններ և ազդանշաններ

Գլուխ III. Լուսային ճանապարհային ազդանշաններ

Գլուխ IV. Ճանապարհների գծանշում

Գլուխ V. Ճանապարհային այլ նշաններ և ազդանշաններ

Գլուխ VI. Եզրափակիչ դրույթներ

Հավելված 1. Նախազգուշացնող նշաններ՝ բացառությամբ խաչմերուկների և երկաթուղային գծանցների մոտ տեղադրված նշանների

Բաժին Ա. Նախազգուշացնող նշանների տարատեսակներ

Բաժին Բ. Նախազգուշացնող նշանների պայմանանշանները և ցուցումներ այդ նշանների օգտագործման մասին

Հավելված 2. Խաչմերուկներում անցումի առավելության իրավունքը կարգավորող նշաններ, խաչմերուկների մոտ տեղադրվող նախազգուշացնող նշաններ և ճանապարհների նեղ հատվածներում անցումի առավելության իրավունքը կարգավորող նշաններ

Բաժին Ա. Խաչմերուկներում անցումի առավելության իրավունքը կարգավորող նշաններ

Բաժին Բ. Խաչմերուկների մոտ տեղադրված նախազգուշացնող նշաններ

Բաժին Գ. Ճանապարհների նեղ հատվածներում անցումի առավելության իրավունքը կարգավորող նշաններ

Հավելված 3. Երկաթուղային գծանցներին վերաբերող նշաններ

Բաժին Ա. Նախազգուշացնող նշաններ

Բաժին Բ. Երկաթուղային գծանցներին անմիջական հարևանությամբ տեղադրված նշաններ

Բաժին Գ. Երկաթուղային գծանցներին մոտ տեղադրված լրացուցիչ նշաններ

Հավելված 4. Պարտադիր պահանջներ ցույց տվող նշաններ՝ բացառությամբ անցումի, կանգառի և կայանումի առավելության իրավունքին վերաբերող նշանների

Բաժին Ա. Արգելող կամ սահմանափակող նշաններ

Բաժին Բ. Թելադրող նշաններ

Հավելված 5. Ա-Ձ բաժինների նշանների և պայմանանշանների ընդհանուր բնութագրերը

(Է բաժնի բնութագրերի և պայմանանշանների վերաբերյալ տես այդ բաժինը)

Բաժին Ա. Ուղղությունների նախնական ցուցիչ նշաններ

Բաժին Բ. Ուղղությունների ցուցիչ նշաններ

Բաժին Գ. Անվանումների ցուցիչ նշաններ

Բաժին Դ. Հաստատող նշաններ

Բաժին Ե. Հետիոտնային անցում

Բաժին Զ. Փոխադրամիջոցների վարորդներին օգտակար ցուցումներ տվող այլ նշաններ

Բաժին Է. Այնպիսի օբյեկտներ ցույց տվող նշաններ, որոնք օգտակար կարող են լինել ճանապարհներից օգտվողների համար

Հավելված 6. Կանգառին և կայանումին վերաբերող նշաններ

Բաժին Ա. Կանգառը և կայանումը սահմանափակող նշաններ

Բաժին Բ. Կայանումին վերաբերող օգտակար ցուցումներ տվող նշաններ

Հավելված 7. Լրացուցիչ ցուցանակներ

Հավելված 8. Ճանապարհների գծանշումը

Տես նաև Կոնվենցիա ճանապարհային երթևեկության մասին (Վիեննա, 1968թ., նոյեմբերի 8)

Պայմանավորվող կողմերը ընդունելով, որ ճանապարհային նշանների, ազդանշանների և պայմանանշանների միօրինակությունը և ճանապարհների միջազգային գծանշումները անհրաժեշտ են միջազգային ճանապարհային երթևեկությունը դյուրացնելու և ճանապարհների անվտանգությունը բարձրացնելու համար, համաձայնության են եկել հետևյալի շուրջ.

## **Գլուխ I**

### **Ընդհանուր դրույթներ**

#### **Հոդված 1**

#### **Սահմանումներ**

Սույն կոնվենցիայի դրույթները կիրառելիս ստորև թվարկվող տերմինները գործածվում են սույն հոդվածում տրվող նշանակությամբ.

ա) Պայմանավորվող կողմի **«ազգային օրենսդրություն»** տերմինը նշանակում է տվյալ Պայմանավորվող կողմի տարածքում գործող ազգային կամ տեղական օրենքների ու կանոնների ամբողջություն:

բ) **«Բնակելի կետ»** տերմինը նշանակում է կառուցապատված տարածք, որի ելքն և մուտքը հատուկ նշված են համապատասխան նշաններով կամ որը որևէ այլ կերպ սահմանված է ազգային օրենսդրությունում:

գ) **«Ճանապարհ»** տերմինը նշանակում է ցանկացած ճանապարհի ամբողջ օտարված հողաշերտը՝ բաց երթևեկության համար:

դ) **«Ճանապարհի երթևեկելի հատված»** տերմինը նշանակում է ճանապարհի այն մասը, որը սովորաբար օգտագործվում է փոխադրամիջոցների երթևեկության համար. ճանապարհը կարող է

ունենալ մի քանի երթևեկելի հատվածներ՝ հստակ սահմանագատված մասնավորապես բաժանարար գոտիով կամ տարբեր հարթությունների վրա գտնվող:

ե) «**Շարժման գոտի**» տերմինը նշանակում է ճանապարհի երթևեկելի հատվածում առանձնացված երկայնակի գոտիներից յուրաքանչյուրը՝ նշված կամ չնշված երկայնակի գծանշումների միջոցով, որը բավականաչափ լայնություն ունի մի շարքով ավտոմեքենաների (մոտոցիկլետներից տարբեր) շարժման համար:

զ) «**Խաչմերուկ**» տերմինը նշանակում է միևնույն հարթությունում ճանապարհների ցանկացած հատում, միացում կամ ճյուղավորում, ներառյալ այդպիսի հատումները, միացումներն ու ճյուղավորումները ընդգրկող տարածքը:

է) «**Երկաթուղային գծանց**» տերմինը նշանակում է ճանապարհի միևնույն մակարդակում ցանկացած հատում երկաթգծի կամ տրամվայի այն ուղիների հետ, որոնք անկախ պաստառ ունեն:

ը) «**Ավտոմայրուղի**» տերմինը նշանակում է հատուկ ավտոփոխադրամիջոցների համար նախատեսված և կառուցված ճանապարհ, որը չի սպասարկում մերձճանապարհային սեփականություններին և որը՝

- i) բացառությամբ առանձին հատվածների կամ ժամանակային կարգով շարժման երկու ուղղությունների համար ունի առանձին երթևեկելի հատվածներ՝ միմյանցից առանձնացված բաժանարար գոտիով՝ չնախատեսված շարժման համար, կամ բացառիկ դեպքերում ուրիշ միջոցներով,
- ii) միևնույն մակարդակում չի հատվում ո՛չ ճանապարհների, ո՛չ երկաթուղային կամ տրամվայի ուղիների, ո՛չ հետիոտնային արահետների հետ,
- iii) հատուկ նշված է իբրև ավտոմայրուղի:

թ) Փոխադրամիջոցը համարվում է՝

- i) «**կանգնած**», եթե բերված է անշարժ վիճակի մի ժամանակահատվածում, որը անհրաժեշտ է մարդկանց նստեցնելու կամ իջեցնելու և կամ բեռնելու կամ բեռնաթափելու համար,
- ii) «**կայանման մեջ**», եթե այն անշարժ վիճակում է ոչ բնավ ճանապարհից մի այլ օգտվողի կամ որևէ խոչընդոտի բախվելուց խուսափելու և կամ երթևեկության կանոնները կատարելու համար, և եթե նրա կանգնելը մարդկանց նստեցնելու կամ իջեցնելու կամ էլ բեռնելու կամ բեռնաթափելու համար անհրաժեշտ ժամանակային սահմանափակում չունի:

Սակայն Պայմանավորվող կողմերը կարող են վերոհիշյալ «ii» ենթակետում սահմանված պայմաններում անշարժ վիճակում գտնվող փոխադրամիջոցները «կանգնած» համարել, եթե այդ վիճակի տևողությունը չի գերազանցում ազգային օրենսդրությամբ սահմանված ժամանակը, և կարող են վերոհիշյալ «i» ենթակետում սահմանված պայմաններում անշարժ վիճակում գտնվող փոխադրամիջոցները համարել «կայանման մեջ», եթե այդ վիճակի տևողությունը գերազանցում է ազգային օրենսդրությամբ սահմանված ժամանակը:

ժ) «**Հեծանիվ**» տերմինը նշանակում է ցանկացած փոխադրամիջոց, որը առնվազն երկու անիվ ունի և շարժման մեջ է դրվում բացառապես այդ փոխադրամիջոցի վրա գտնվող անձանց մկանային եռանդուժի շնորհիվ, մասնավորապես ոտնակների կամ դեկալծակների միջոցով:

ժա) «Կախովի շարժիչով հեծանիվ» տերմինը նշանակում է ցանկացած ..... եռանիվ փոխադրամիջոց՝ օժտված ներքին այրման շարժիչով՝ 50 խսմ-ը (3,05 խ.դյույմը) չգերազանցող

ծավալի գլանագլխարկով, որի առավելագույն կառուցվածքային արագությունը չի գերազանցում 50 կմ/ժ-ը (30 մղոն/ժ): Սակայն Պայմանավորվող կողմերը կարող են իրենց ազգային օրենսդրության համաձայն կախովի շարժիչով հեծանիվ չհամարել այն փոխադրամիջոցները, որոնք օգտագործման առումով հեծանիվների բնութագրեր, մասնավորապես ոտնակների միջոցով շարժման մեջ դնելու հնարավորություն չունեն, կամ որոնք իրենց առավելագույն կառուցվածքային արագությամբ, կշռով կամ շարժիչի որոշ բնութագրերով գերազանցում են հաստատված սահմանները: Սույն սահմանման ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ Պայմանավորվող կողմերի համար՝ ճանապարհային երթևեկությանը վերաբերող իրենց օրենսդրությունը կիրառելիս կախովի շարժիչով հեծանիվները լիովին հավասարեցնելու հեծանիվներին:

ժբ) «Մոտոցիկլետ» տերմինը նշանակում է շարժիչ ունեցող ցանկացած երկանիվ փոխադրամիջոց՝ սայլակով կամ առանց սայլակի: Պայմանավորվող կողմերը կարող են իրենց ազգային օրենսդրությունում մոտոցիկլետներին հավասարեցնել այն եռանիվ փոխադրամիջոցները, որոնց քաշը, առանց բեռնվածության, չի գերազանցում 400 կգ-ը (900 ֆունտը): «Մոտոցիկլետ» տերմինը չի ընդգրկում կախովի շարժիչով հեծանիվները, սակայն Պայմանավորվող կողմերը սույն կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան հայտարարություն անելու պարագայում կարող են սույն կոնվենցիան կիրառելիս մոտոցիկլետները հավասարեցնել կախովի շարժիչով հեծանիվներին:

ժգ) «Մեխանիկական փոխադրամիջոց» տերմինը նշանակում է ցանկացած ինքնագնաց ճանապարհային փոխադրամիջոց՝ բացառությամբ կախովի շարժիչով հեծանիվների այն Պայմանավորվող կողմերի տարածքներում, որոնք դրանք չեն հավասարեցնում մոտոցիկլետներին, ինչպես նաև բացառությամբ ռելսային փոխադրամիջոցների:

ժդ) «Ավտոմեքենա» տերմինը նշանակում է մեխանիկական փոխադրամիջոց, որը սովորաբար օգտագործվում է ճանապարհներով մարդկանց կամ բեռներ փոխադրելու համար կամ ճանապարհներին այն փոխադրամիջոցները քարշակելու համար, որոնք օգտագործվում են մարդկանց կամ բեռները փոխադրելու համար: Այս տերմինն ընդգրկում է տրոլեյբուսները, այսինքն՝ ոչ ռելսային փոխադրամիջոցները՝ միացված էլեկտրալարերին, և չի ընդգրկում այնպիսի փոխադրամիջոցներ, ինչպիսիք են գյուղատնտեսական տրակտորները, որոնց օգտագործումը ճանապարհներով մարդկանց կամ բեռներ փոխադրելու կամ ճանապարհներին մարդկանց կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող փոխադրամիջոցները քարշակելու նպատակով սոսկ օժանդակ գործառույթ է:

ժե) «Կցասայլ» տերմինը նշանակում է ցանկացած փոխադրամիջոց՝ նախատեսված մեխանիկական փոխադրամիջոցով քարշակելու համար. այս տերմինն ընդգրկում է նաև կիսակցասայլերը:

ժզ) «Կիսակցասայլ» տերմինը նշանակում է ցանկացած կցասայլ՝ նախատեսված ավտոմեքենային այնպես կցելու համար, որ դրա մի մասը հեմվի ավտոմեքենայի վրա, և վերջինս կրի կցասայլի և դրա բեռան քաշի նշանակալի մասը:

ժէ) «Վարորդ» («քշող») տերմինը նշանակում է այն անձը, որը կառավարում է փոխադրամիջոցը, ավտոմեքենան և այլն (ներառյալ հեծանիվները) կամ ճանապարհով անասուն, նախիր, լծկան, բեռնակիր կամ հեծկան կենդանիներ է քշում:

ժը) «Թույլատրելի առավելագույն քաշ» տերմինը նշանակում է բեռնված փոխադրամիջոցի առավելագույն քաշ, որը հայտարարվել է թույլատրելի պետության այն իրավասու մարմինների կողմից, որոնցում գրանցվում է փոխադրամիջոցը:

ժթ) «Բեռով քաշ» տերմինը նշանակում է բեռնված փոխադրամիջոցի, վարորդի(ների) և ուղևորների փաստացի քաշը:

ի) «Շարժման ուղղություն» և «շարժման ուղղությանը համապատասխանող» տերմինները նշանակում են աջ կողմը, եթե գործող ազգային օրենսդրության համաձայն փոխադրամիջոցի

վարորդը ուրիշ փոխադրամիջոցի հանդիպելիս պետք է ճանապարհ տա ձախ կողմից, հակառակ դեպքում այդ տերմինները նշանակում են ձախ կողմը:

իս) Վարորդի համար «գիջել ճանապարհը» ուրիշ փոխադրամիջոցներին նշանակում է, որ վարորդը չպետք է շարունակի կամ վերականգնի շարժումը կամ խուսանավում անի, եթե դա ուրիշ փոխադրամիջոցների վարորդներին կարող է ստիպել հանկարծակի փոխել շարժման ուղղությունը կամ արագությունը:

## **Հոդված 2**

### **Կոնվենցիայի հավելվածները**

Սույն կոնվենցիայի հետևյալ հավելվածները նրա անքակտելի մասն են:

Հավելված 1. Նախագգուշացնող նշաններ՝ բացառությամբ խաչմերուկների և երկաթուղային գծանցների մոտ տեղադրված նշանների

Հավելված 2. Խաչմերուկներում անցումի առավելության իրավունքը կարգավորող նշաններ, խաչմերուկների մոտ տեղադրվող նախագգուշացնող նշաններ և ճանապարհների նեղ հատվածներում անցումի առավելության իրավունքը կարգավորող նշաններ

Հավելված 3. Երկաթուղային գծանցներին վերաբերող նշաններ

Հավելված 4. Պարտադիր պահանջներ ցույց տվող նշաններ՝ բացառությամբ անցումի, կանգառի և կայանումի առավելության իրավունքին վերաբերող նշանների

Հավելված 5. Տեղեկատու-ցուցիչ նշաններ՝ բացառությամբ կայանմանը վերաբերող նշանների

Հավելված 6. Կանգառին և կայանումին վերաբերող նշաններ

Հավելված 7. Լրացուցիչ ցուցանակներ

Հավելված 8. Ծանապարհների գծանշումը

Հավելված 9. Այն ազդանշանային նշանների, պայմանանշանների և ցուցանակների գունավոր պատկերումը, որոնց մասին խոսվում է 1-7-րդ հավելվածներում

### **Պայմանավորվող կողմերի պարտավորությունները**

## **Հոդված 3**

1. ա) Սույն կոնվենցիայի Պայմանավորվող կողմերը ընդունում են նրանում հաստատված ճանապարհային նշանների, ազդանշանների և ճանապարհների գծանշումների համակարգը և պարտավորվում են կենսագործել այն հնարավորինս կարճ ժամկետում: Այդ նպատակով՝

- i) երբ սույն կոնվենցիան ազդանշանային նշան, պայմանանշան կամ գծանշում է սահմանում պահանջը ցույց տալու կամ ճանապարհից օգտվողներին որոշակի տեղեկատվություն հաղորդելու համար, Պայմանավորվող կողմերը պարտավորվում են ներկա հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում սահմանված ժամկետների սահմաններում չկիրառել ուրիշ ազդանշանային նշան, ուրիշ պայմանանշան կամ ուրիշ գծանշում տվյալ պահանջը կամ տեղեկատվությունը հաղորդելու համար,
- ii) երբ սույն կոնվենցիան ազդանշանային նշան, պայմանանշան կամ գծանշում չի նախատեսում պահանջը ցույց տալու կամ ճանապարհից օգտվողներին որոշակի տեղեկատվություն հաղորդելու համար, Պայմանավորվող կողմերը կարող են այդ նպատակով օգտվել իրենց ընտրած ազդանշանային նշաններից, պայմանանշաններից կամ գծանշումներից, պայմանով, որ տվյալ ազդանշանային նշանը, պայմանանշանը

կամ գծանշումը կոնվենցիայով նախատեսված չեն այլ նշանակությամբ ցուցումների համար, և պայմանով, որ դրանք համապատասխանեն կոնվենցիայով հաստատված համակարգին:

բ) Երթևեկության հսկողության բարելավման համար և պայմանավորված փորձեր անցկացնելու անհրաժեշտությամբ՝ մինչև սույն կոնվենցիայի փոփոխություններ առաջարկելը Պայմանավորվող կողմերը կարող են փորձարկման և ժամանակային կարգով ճանապարհների որոշ հատվածներում շեղումներ թույլ տալ սույն կոնվենցիայի դրույթներից:

2. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են ոչ ուշ, քան սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրից չորս տարի անց, փոխարինել կամ լրացնել իրենց տարածքում գտնվող այն բոլոր ազդանշանային նշանները, պայմանանշանները, հարմարանքները և գծանշումները, որոնք, ըստ սույն կոնվենցիայով հաստատված համակարգի, իրենց արտաքին տեսքով կարող են սույն կոնվենցիայով տրված ազդանշանային նշանների, պայմանանշանների, հարմարանքների և գծանշումների նշանակությունից տարբեր ցուցումներ տալ:

3. Պայմանավորվող կողմերը պարտավորվում են սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից սկսած տասնհինգ տարվա ընթացքում փոխել իրենց տարածքում գտնվող այն բոլոր ազդանշանային նշանները, պայմանանշանները, հարմարանքներն ու գծանշումները, որոնք չեն համապատասխանում սույն կոնվենցիայով հաստատված համակարգին: Այդ ժամանակաընթացքում, որպեսզի ճանապարհներից օգտվողները ընտելանան սույն կոնվենցիայով հաստատված համակարգին, կարելի է սույն կոնվենցիայով նախատեսված ազդանշանային նշաններին և պայմանանշաններին զուգահեռ օգտագործել նախկին ազդանշանային նշաններն ու պայմանանշանները:

4. Սույն կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող Պայմանավորվող կողմերի վրա դրվող պարտավորություն մեկնաբանվել՝ ընդունելու սույն կոնվենցիայով սահմանված ազդանշանային նշանների բոլոր տեսակները: Ընդհակառակը՝ Պայմանավորվող կողմերն իրենք են իրենց ընդունելիք ազդանշանային նշաններն ու գծանշումները սահմանափակում անհրաժեշտ նվազագույնով:

#### **Հոդված 4**

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել, որպեսզի արգելվի՝

ա) նշանի, դրա հենարանի կամ երթևեկությունը կարգավորող ցանկացած այլ հարմարանքի վրա տեղադրել որևէ բան, որը առնչություն չունի տվյալ նշանին կամ հարմարանքին. սակայն, եթե Պայմանավորվող կողմերը կամ նրանց տարածքային ստորաբաժանումները թույլ են տալիս նյութական շահույթ չհետապնդող որևէ ընկերակցության տեղադրել տեղեկատու-ցուցիչ նշաններ, նրանք կարող են թույլ տալ, որ տվյալ ընկերակցության խորհրդանիշը դրվի տվյալ նշանի կամ դրա հենարանի վրա՝ պայմանով, որ դա չդժվարացնի նշանի ընկալումը,

բ) տեղադրել պլակատներ, ազդագրեր, գծանշում կատարել կամ հարմարանքներ տեղադրել, որոնք կա՛մ կարող են ընկալվել իբրև ազդանշանային նշաններ, կա՛մ երթևեկությունը կարգավորող ուրիշ հարմարանքներ, կա՛մ կարող են նվազեցնել դրանց տեսանելիությունը կամ արդյունավետությունը, կա՛մ կուրացնել ճանապարհից օգտվողներին, կա՛մ շեղել նրանց ուշադրությունը՝ դրանով իսկ վտանգ առաջացնելով ճանապարհային երթևեկության համար:

#### **Գլուխ II**

#### **Ճանապարհային նշաններ և ազդանշաններ**

#### **Հոդված 5**

1. Սույն կոնվենցիայով նախատեսվող համակարգում տարբերվում են ազդանշանային նշանների հետևյալ կարգերը.

ա) Վտանգի մասին նախազգուշացնող նշաններ. այդ նշանների նպատակն է տեղեկացնել ճանապարհից օգտվողներին ճանապարհներին գոյություն ունեցող վտանգների և դրանց բնույթի մասին:

բ) Պարտադիր պահանջ նշանակող նշաններ. այդ նշանների նպատակն է տեղեկացնել ճանապարհներից օգտվողներին այն պարտականությունների, սահմանափակումների և հատուկ արգելքների մասին, որոնց պետք է հետևեն. դրանք խմբավորվում են հետևյալ ենթախմբերում՝

- i) անցումի առավելության իրավունքի նշաններ,
- ii) արգելող կամ սահմանափակող նշաններ,
- iii) թելադրող նշաններ:

գ) Տեղեկատու-ցուցիչ նշաններ. այդ նշանների նպատակն է ճանապարհներից օգտվողներին իրենց հետագա ընթացքի մասին անհրաժեշտ տեղեկատվություն կամ ուրիշ օգտակար ցուցումներ տալ. դրանք խմբավորվում են հետևյալ ենթախմբերում՝

- i) ուղղությունների նախնական տեղեկատու-ցուցիչ նշաններ,
- ii) ուղղությունների տեղեկատու-ցուցիչ նշաններ,
- iii) երթուղային մակնիշներ,
- iv) անվանումների տեղեկատու-ցուցիչ նշաններ,
- v) հաստատող նշաններ,
- vi) ուրիշ նշաններ, որոնք փոխադրամիջոցների վարորդներին օգտակար խորհուրդներ են տալիս,
- vii) ուրիշ նշաններ՝ այնպիսի օբյեկտներ ցույց տվող, որոնք կարող են օգտակար լինել ճանապարհներից օգտվողներին:

2. Այն դեպքերում, երբ սույն կոնվենցիան մի քանի նշանների մեջ ընտրություն անելու հնարավորություն է տալիս՝

ա) Պայմանավորվող կողմերը պարտավորվում են իրենց ամբողջ տարածքում կիրառել միայն մեկ նշան կամ պայմանանշան,

բ) Պայմանավորվող կողմերը պետք է փորձեն համաձայնության հասնել տարածաշրջանային մակարդակում, որպեսզի ընտրվի միևնույն նշանը կամ պայմանանշանը,

գ) սույն կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները կիրառելի են այն ազդանշանային նշանների կամ այնպիսի նշանների դեպքում, որոնք ընտրված չեն եղել:

## **Հոդված 6**

1. Նշանները տեղադրվում են այնպես, որ այն վարորդները, որոնց համար նախատեսված են դրանք, հեշտությամբ և ժամանակին տեսնեն: Սովորաբար դրանք տեղադրվում են ճանապարհի այն կողմում, որը համապատասխանում է շարժման ուղղությանը, սակայն դրանք կարող են տեղադրվել կամ կրկնվել ճանապարհի անցումային հատվածում: Շարժմանը համապատասխանող ուղղության կողմում տեղադրված ցանկացած նշան պետք է կրկնվի անցումային հատվածում կամ ճանապարհի հակառակ կողմում, եթե տեղի պայմաններն այնպիսին են, որ այդ նշանը չի կարող ժամանակին նկատվել

փոխադրամիջոցների այն վարորդների կողմից, որոնց համար նախատեսված է տվյալ նշանը:

2. Յուրաքանչյուր նշանի ազդեցությունը տարածվում է երթևեկության համար բաց ճանապարհի ամբողջ երթևեկելի հատվածի լայնությամբ այն վարորդների համար, որոնց համար այն նախատեսված է: Սակայն նշանի ազդեցությունը կարող է սահմանափակվել երթևեկության մեկ կամ մի քանի գոտիներով՝ սահմանազատված երթևեկելի հատվածի երկայնակի գծանշումով:
3. Եթե, իրավասու մարմինների կարծիքով, այս կամ այն նշանը՝ տեղադրված առանձին երթևեկելի հատվածներով ճանապարհի եզրին, անարդյունավետ է, կարող է տեղադրվել բաժանարար գոտում, և այդ դեպքում այն կարելի է չկրկնել ճամփեզրին:
4. Հանձնարարվում է ազգային օրենսդրությունում նախատեսել.

ա) Նշանները տեղադրվում են այնպես, որ չխանգարեն երթևեկելի հատվածով անցնող փոխադրամիջոցների շարժմանը, իսկ ճամփեզրերին տեղադրված նշանները հնարավորինս չպետք է խանգարեն հետիոտների շարժմանը: Ծանապարհի՝ նշանը տեղադրված կողմի եզրաշերտի մակարդակի և նշանի ստորին եզրի միջև տարածությունը պետք է հնարավորինս միօրինակ լինի միևնույն ճանապարհի միևնույն կարգի նշանների համար:

բ) Նշանների չափսերը պետք է այնպիսին լինեն, որ հեռվից լավ տեսանելի լինեն և դրանց մոտենալիս հեշտությամբ տարբերակվեն. սույն կետի «գ» ենթակետի դրույթներին առնչվող վերապահությամբ այդ չափսերը որոշվում են փոխադրամիջոցների սովորական արագության հաշվառմամբ:

գ) Նախազգուշացնող և պարտադիր պահանջ նշանակող նշանների չափսերը պետք է ստանդարտացվեն յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի տարածքում: Որպես կանոն, ազդանշանային նշանների յուրաքանչյուր տեսակի համար հաստատվում են չորս կարգի չափսեր՝ փոքր, բնականոն, մեծ և շատ մեծ: Փոքր չափսերի նշաններ պետք է տեղադրվեն այն դեպքում, երբ պայմանները բնականոն չափի նշաններ տեղադրելու հնարավորություն չեն տալիս, կամ երբ հնարավոր է միայն փոքր արագությամբ երթևեկությունը: Դրանք կարող են տեղադրվել նաև նախորդ նշանը կրկնելու համար: Մեծ չափի նշանները պետք է տեղադրվեն շատ լայն և մեծ արագության ճանապարհներին: Շատ մեծ չափսերի նշանները պետք է տեղադրվեն գերարագ երթևեկության ճանապարհներին, մասնավորապես ավտոմայրուղիներին:

## **Հոդված 7**

1. Հանձնարարվում է ազգային օրենսդրությունում նախատեսել հետևյալը. որպեսզի ճանապարհային նշանները, մասնավորապես նախազգուշացնող և պարտադիր պահանջ նշանակող նշանները, բացառությամբ բնակելի կետերի լուսավորված փողոցներում կանգառը կամ կայանումը կարգավորող նշանների, լավ տեսանելի լինեն և հեշտությամբ կարդացվեն գիշերը, հարկ է լուսավորել դրանք կամ օգտագործել լույսն անդրադարձնող նյութեր կամ հարմարանքներ, պայմանով, որ դա չի հանգեցնի ճանապարհներից օգտվողների կուրացմանը:

2. Սույն կոնվենցիայի ոչ մի դրույթ չի արգելում միայն որոշ ժամերին կամ օրերին վերաբերող տեղեկություն կամ նախազգուշացում հաղորդելու համար օգտագործել նշաններ, որոնք տեսանելի են միայն այն ժամանակ, երբ գործում է դրանք բովանդակող տեղեկատվությունը:

## **Հոդված 8**

1. Միջազգային նշանների ըմբռնումը հեշտացնելու համար սույն կոնվենցիայով հաստատված նշանների և ազդանշանների համակարգը հիմնված է նշանների յուրաքանչյուր կարգի համար



բնորոշ ձևերի ու գույների վրա, ինչպես նաև բոլոր դեպքերում, եթե դա հնարավոր է թվում, գրաֆիկական նշանների, ոչ թե գրառումների վրա: Եթե Պայմանավորվող կողմերը անհրաժեշտ են համարում նախատեսվող նշանների մեջ որոշ փոփոխություններ մտցնել, ապա այդ փոփոխությունները չպետք է փոխեն ազդանշանային նշանների հիմնական բնութագիրը:

2. Այն Պայմանավորվող կողմերը, որոնք ցանկանում են, սույն կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «ii» ենթակետերի դրույթների համաձայն, ընդունել ազդանշանային նշան կամ պայմանանշան՝ չնախատեսված կոնվենցիայով, պետք է փորձեն իրական համաձայնության հասնել տվյալ ազդանշանային նշանի կամ պայմանանշանի կապակցությամբ:

3. Սույն կոնվենցիայի ոչ մի դրույթ չի արգելում ազդանշանային նշանների մեկնաբանումը հեշտացնելու նպատակով գրառում ավելացնել ուղղանկյուն ցուցանակի վրա՝ տեղադրված ազդանշանային նշանի տակ կամ ազդանշանային նշանը պարունակող վահանակի մեջ. նման գրառումը կարող է տեղադրվել բուն նշանի վրա այն դեպքում, եթե դա չի դժվարացնում այդ նշանի ընկալումը այն վարորդների կողմից, որոնք չեն կարող հասկանալ գրառումը:

4. Այն դեպքում, երբ իրավասու մարմինները նպատակահարմար են են համարում ճշգրտել ազդանշանային նշանի կամ պայմանանշանի նշանակությունը կամ սահմանափակել պարտադիր պահանջ նշանակող նշանների ազդեցությունը ճանապարհից որոշ կարգի օգտվողներով կամ որոշ ժամանակահատվածներով, և երբ անհրաժեշտ ցուցումները չեն կարող տրվել լրացուցիչ նշաններով կամ թվերով սույն կոնվենցիայի հավելվածներում սահմանված պայմաններում, նշանի տակի ուղղանկյուն ցուցանակի վրա գրառում է տեղադրվում, ընդ որում դա չի բացառում գրառումը նույն այդ ցուցանակի վրա մեկ կամ մի քանի գրաֆիկական նշաններով փոխարինելու կամ լրացնելու հնարավորությունը:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերում մատնանշվող գրառումները կատարվում են ազգային լեզվով կամ ազգային լեզուներից որևէ մեկով կամ մի քանիսով, նաև, եթե համապատասխան Պայմանավորվող կողմը նպատակահարմար համարի, ուրիշ լեզուներով, մասնավորապես Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական լեզուներով:

## **Նախագգուշացնող նշաններ**

### **Հոդված 9**

1. Սույն կոնվենցիայի 1-ին հավելվածի Ա բաժնում տրված են նախագգուշացնող նշանների տարատեսակները, իսկ այդ հավելվածի Բ բաժնում տրված են այդ ազդանշանային նշանների վրա դրվող պայմանանշանները, ինչպես նաև բերված են այդ նշանների օգտագործմանը վերաբերող որոշ ցուցումներ: Սակայն խաչմերուկին մոտենալը նախագգուշացնող նշաններն ու պայմանանշանները նկարագրված են սույն կոնվենցիայի 2-րդ հավելվածում, իսկ երկաթուղային գծանցներին մոտենալը նախագգուշացնող պայմանանշանները նկարագրված են 3-րդ հավելվածում: Սույն կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, յուրաքանչյուր պետություն տեղյակ է պահում Գլխավոր քարտուղարին այն մասին, թե ինչ տարատեսակ է ընտրել նախագգուշացնող նշանների համար. A (a ինդեքսով) կամ A (b ինդեքսով):

2. Նախագգուշացնող նշանները չպետք է անհարկի կրկնվեն, սակայն այդպիսի նշանները հարկ է տեղադրել ճանապարհային այն հնարավոր վտանգները նշելու համար, որոնք ժամանակին նկատելու համար անհրաժեշտ զգուշավորություն ցուցաբերող վարորդը կարող է դժվարության հանդիպել:

3. Նախագգուշացնող նշանները պետք է վտանգավոր հատվածից այնպիսի հեռավորությամբ տեղադրվեն, որը ապահովի դրանց առավելագույն արդյունավետությունը ինչպես ցերեկը, այնպես էլ գիշերը՝ պայմանավորված ճանապարհի և արագության պայմաններով,

մասնավորապես փոխադրամիջոցների սովորական արագությամբ և այնպիսի հեռավորությամբ, որտեղից նշանը տեսանելի է:

4. Ազդանշանային նշանի և վտանգավոր հատվածի տարածությունը կարող է ցույց տրվել սույն կոնվենցիայի 7-րդ հավելվածի 1-ին տարատեսակի լրացուցիչ ցուցանակում, որը տեղադրվում է նշված հավելվածի դրույթների համաձայն. այդ ցուցումը պետք է տրվի այն դեպքում, երբ վարորդները չեն կարող որոշել նշանի և վտանգավոր հատվածի հեռավորությունը, որը կարող է նրանց ակնկալածից միանգամայն տարբեր լինել:
5. Նախագգուշացնող նշանները մասնավորապես կարող են կրկնվել ավտոմայրուղիներում կամ դրանց հավասարեցված ճանապարհներին: Եթե նախագգուշացնող նշանները կրկնվում են, ապա նշանի և վտանգավոր հատվածի հեռավորությունը պետք է ցույց տրվի սույն հոդվածի 4-րդ կետի դրույթների համաձայն: Սակայն բացովի կամուրջներից և երկաթուղային գծանցներից առաջ դրվող նախագգուշացնող նշանների առնչությամբ Պայմանավորվող կողմերը կարող են սույն կետի դրույթների փոխարեն կիրառել 35-րդ հոդվածի 3-րդ կետի կամ սույն կոնվենցիայի 1-ին հավելվածի Բ բաժնի 5-րդ կետի դրույթները:
6. Եթե նախագգուշացնող նշանը տեղադրվում է ճանապարհի բավական երկար հատվածում առկա վտանգը ցույց տալու համար (օրինակ՝ մի շարք վտանգավոր շրջադարձեր, ճանապարհի երթևեկելի հատված վատ վիճակում) և եթե ցանկալի է համարվում նշել այդ հատվածի երկարությունը, համապատասխան ցուցումը տրվում է սույն կոնվենցիայի 7-րդ հավելվածի 2-րդ տարատեսակի լրացուցիչ ցուցանակով, որը տեղադրվում է նշված հավելվածի դրույթների համաձայն:

### **Պարտադիր պահանջներ նշանակող նշաններ՝ բացառությամբ կանգառին կամ կայանումին վերաբերող նշանների**

#### **Հոդված 10**

#### **Անցումի առավելության իրավունքի նշաններ**

1. Այն ազդանշանային նշանները, որոնց նպատակը ճանապարհներից օգտվողներին խաչմերուկներում առավելության անցումի հատուկ կանոնների մասին տեղեկացնելն է, հանդիսանում են սույն կոնվենցիայի 2-րդ հավելվածի Ա բաժնում նկարագրված B,1, B,3 և B,4 նշանները: ճանապարհներից օգտվողներին ճանապարհի նեղ հատվածներում առավելության անցումի կանոնների մասին տեղեկացնելու նպատակ հետապնդող նշանները B,5-ը և B,6-ն են՝ նկարագրված 2-րդ հավելվածի Գ բաժնում:
2. B,1 «Գլխավոր ճանապարհի հատում» ազդանշանային նշանը կիրառվում է ցույց տալու համար, որ այն խաչմերուկում, որտեղ տեղադրված է այդ ազդանշանային նշանը, վարորդները պետք է ճանապարհը զիջեն այն ճանապարհով ընթացող փոխադրամիջոցներին, որին մոտենում են իրենք:
3. B, 2 ազդանշանային նշանը՝ «Անցումը առանց կանգառի արգելված է», կիրառվում է ցույց տալու համար, որ այն խաչմերուկն անցնելուց առաջ, որտեղ տեղադրված է այդ ազդանշանային նշանը, վարորդները պետք է կանգ առնեն և ճանապարհը զիջեն այն փոխադրամիջոցներին, որոնք անցնում են այն ճանապարհով, որին մոտենում են իրենք: Սույն կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, յուրաքանչյուր պետություն տեղեկացնում է Գլխավոր քարտուղարին այն մասին, թե «Անցումը առանց կանգառի արգելված է» նշանի ինչ տարատեսակ է ընտրել. B,2 (a ինդեքսով) B, 2 (b ինդեքսով):
4. B,2 ազդանշանային նշանը կարող է տեղադրվել խաչմերուկից դուրս այն դեպքում, երբ իրավասու մարմինները անհրաժեշտ համարեն վարորդներին ցուցում տալ, որ նրանք

պետք է նշանին մոտենալիս կանգ առնեն և շարունակեն շարժվել միայն համոզվելուց հետո, որ վտանգ չեն ստեղծի:

5. B,1 և B,2 նշանները տեղադրվում են անմիջապես խաչմերուկին մոտ, հնարավորության սահմաններում այն տեղում, որտեղ փոխադրամիջոցները պետք է կանգ առնեն կամ այդտեղից հետո չպետք է առաջ անցնեն՝ նախապես ճանապարհը չզիջելով ուրիշ փոխադրամիջոցների:
6. A նշանը՝ A,23 կամ A,24 պայմանանշանով, կարող է օգտագործվել իբրև նախնական ազդանշանի նշան, որը տեղադրվում է համապատասխանաբար B,1 կամ B,2 նշաններից առաջ: Սակայն այն պետություններում, որոնք կիրառում են A նշանը (a ինդեքսով)՝ որպես նախազգուշացնող նշան, B,1 կամ B,2 նշաններից առաջ տեղադրվող նախազգուշակա նշանները կարող են լինել այն նույն նշանները, որոնք լրացվում են սույն կոնվենցիայի 7-րդ հավելվածում հիշատակվող 1-ին տարատեսակի լրացուցիչ ցուցանակով:
7. B,3 «Գլխավոր ճանապարհ» նշանը կիրառվում է ճանապարհներից օգտվողներին ցույց տալու համար, որ գլխավոր և ուրիշ ճանապարհների հատման կետերում ուրիշ ճանապարհներով շարժվող կամ այդ ճանապարհներից դուրս եկող փոխադրամիջոցների վարորդները պարտավոր են ճանապարհը զիջել գլխավոր ճանապարհով անցնող փոխադրամիջոցներին: Այդ նշանը կարող է տեղադրվել ճանապարհի սկզբում և կրկնվել յուրաքանչյուր հատումից հետո. բացի դրանից, այն կարող է տեղադրվել մինչև հատումը կամ հատման կետում: Եթե ճանապարհին տեղադրված է B,3 ազդանշանային նշան, ապա B,4 ազդանշանային նշանը՝ «Գլխավոր ճանապարհի վերջը», պետք է տեղադրվի այն վայրի մոտակայքում, որտեղ ճանապարհը դադարում է առաջնահերթություն ունենալ ուրիշ ճանապարհների նկատմամբ: B,4 նշանը կարող է կրկնվել մեկ կամ մի քանի անգամ մինչև առաջնահերթության դադարման տեղը. նման դեպքերում այդ վայրից առաջ տեղադրված նշանը կամ նշանները լրացվում են 7-րդ հավելվածի 1-ին տարատեսակի ցուցանակով:
8. Եթե խաչմերուկին մոտենալը ցույց տալու համար ճանապարհին տեղադրվում է ազդանշանային նշան՝ A 22 պայմանանշաններից մեկով, կամ եթե խաչմերուկում ճանապարհը հանդիսանում է գլխավոր ճանապարհ՝ որպես այդպիսին նշված B, 3 ազդանշանային նշաններով՝ համաձայն սույն հոդվածի 7-րդ կետի դրույթների, մյուս բոլոր ճանապարհներին խաչմերուկներում պետք է տեղադրվեն B,1 կամ B,2 նշաններ. սակայն B,1 կամ B, 2 նշանները պարտադիր չէ տեղադրել այնպիսի ճանապարհներին, ինչպիսիք են գյուղականները կամ սայլուղիները, որոնցով շարժվելիս վարորդները, անգամ այդ նշանների բացակայության դեպքում, պետք է խաչմերուկում զիջեն ճանապարհը: B,2 նշանը պետք է տեղադրվի միայն այն դեպքում, երբ իրավասու մարմինները անհրաժեշտ համարեն փոխադրամիջոցների վարորդների համար կանգառ սահմանել, մասնավորապես այն նկատառումով, որ այդ փոխադրամիջոցների վարորդների համար դժվար տեսանելի են խաչմերուկի այս կամ այն կողմն ընկած ճանապարհահատվածները, որոնց մոտենում են իրենք:

## **Հոդված 11**

### **Արգելող կամ սահմանափակող նշաններ**

Արգելող կամ սահմանափակող նշանները, բացառությամբ կանգառին կամ կայանումին վերաբերող նշանների, իրենց նշանակության մեկնաբանության հետ մեկտեղ նկարագրված են սույն կոնվենցիայի 4-րդ հավելվածի Ա բաժնում: Այդ բաժնում նկարագրված են նաև այդ արգելքների և սահմանափակումների կամ դրանցից մեկի վերջը նշանակող նշանները:

## **Հոդված 12**

## **Թելադրող նշաններ**

1. Թելադրող նշանները՝ իրենց նշանակության մեկնաբանությամբ, նկարագրված են 4-րդ հավելվածի Բ բաժնում:

## **Հոդված 13**

**Ընդհանուր ցուցումներ, որոնք վերաբերում են սույն կոնվենցիայի 4-րդ հավելվածում նկարագրված ազդանշանային նշաններին:**

1. Արգելող, սահմանափակող և թելադրող նշանները տեղադրվում են անմիջականորեն այն վայրի մոտ, որտեղ ուժի մեջ է մտնում պահանջը, սահմանափակումը կամ արգելքը, և կարող են կրկնվել, եթե իրավասու մարմինները դա անհրաժեշտ համարեն: Սակայն այն դեպքում, երբ իրավասու մարմինները դա ցանկալի համարեն վատ տեսանելիության պատճառով կամ այն նպատակով, որ ճանապարհներից օգտվողները նախապես զգուշացվեն, այդ նշանները կարող են տեղադրվել այն վայրից համապատասխան հեռավորության վրա, որտեղ ուժի մեջ է մտնում պահանջը, սահմանափակումը կամ արգելքը: Այն վայրից առաջ դրվող նշանի տակ, որտեղ ուժի մեջ է մտնում պահանջը, սահմանափակումը կամ արգելքը, տեղադրվում է լրացուցիչ ցուցանակ՝ համապատասխան 7-րդ հավելվածի 1-ին տարատեսակի:
2. Պարտադիր պահանջ նշանակող նշանները՝ տեղադրված բնակելի կետի անվանման ցուցանակի կողքին կամ անմիջապես դրանից հետո, ցույց են տալիս, որ պահանջները կիրարկվում են ամբողջ բնակելի կետում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ բնակելի կետի ճանապարհների որոշ հատվածներում տեղադրված ուրիշ նշանները այլ պահանջ են բովանդակում:

**Տեղեկատու-ցուցիչ նշաններ՝ բացառությամբ կայանումին վերաբերող նշանների**

## **Հոդված 14**

1. Սույն կոնվենցիայի 5-րդ հավելվածում նկարագրված են այն նշանները, որոնք օգտակար ցուցումներ են տալիս ճանապարհից օգտվողներին, բացառությամբ այն նշանների, որոնք վերաբերում են կայանումին, կամ բերված են այդպիսի նշանների տարատեսակներ. այդ հավելվածը բովանդակում է նաև որոշ հրահանգներ դրանց օգտագործման մասին:
2. «i»-«v» ցուցումներ տվող նշանների գրառումները՝ թվարկված 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետում, լատինական այբուբենից չօգտվող երկրներում դրվում են ինչպես ազգային լեզվով, այնպես էլ լատինական տառերով, որոնք հնարավորինս արտահայտում են ազգային լեզվով բառերի տառադարձությունն ու արտասանությունը:
3. Լատինական այբուբենից չօգտվող երկրներում լատինական տառերով գրված բառերը կարող են դրվել ինչպես ազգային լեզվով տեքստ պարունակող նշանի, այնպես էլ լրացուցիչ նշանի վրա:
4. Նշանի վրա պետք է դրվեն գրառումներ՝ ոչ ավելի, քան երկու լեզվով:

## **Հոդված 15**

**Ուղղությունների նախնական ցուցիչ նշաններ**

Ուղղությունների նախնական ցուցիչ նշանները տեղադրվում են խաչմերուկից այնպիսի հեռավորության վրա, որը ճանապարհի ու արագության պայմաններում, մասնավորապես փոխադրամիջոցների սովորական արագության և այն հեռավորության պարագայում, որից երևում է այդ նշանը, ապահովում է դրանց առավելագույն արդյունավետությունը ինչպես ցերեկը, այնպես էլ գիշերը. այդ հեռավորությունը բնակելի կետերում կարող է չգերազանցել 50 մ-ը (55 յարդը), բայց ավտոմայրուղիներում և արագընթաց շարժման ճանապարհներին այն 500 մ-ից պակաս չպետք է լինի (550 յարդից): Այդ նշանները կարող են կրկնվել: Նշանի տակ տեղադրված լրացուցիչ ցուցանակի վրա կարող է ցույց տրվել նշանի և խաչմերուկի միջև ընկած հեռավորությունը. այդ հեռավորությունը կարող է ցույց տրվել նաև բուն նշանի ստորին մասում:

## **Հոդված 16**

### **Ուղղությունների ցուցիչ նշաններ**

1. Ուղղությունների միևնույն ցուցիչ նշանում կարող են նշվել մի քանի բնակելի կետերի անուններ. այդ դեպքում այդ անունները՝ մեկը մյուսի տակ, նշվում են ազդանշանային նշանների վրա: Մի բնակելի կետի անունի համար ավելի մեծ տառեր կարելի է օգտագործել, քան մյուս բնակելի կետերի համար միայն այն դեպքում, եթե տվյալ բնակելի կետը ամենախոշորն է:
2. Եթե նշանների վրա նշված են հեռավորություններ, համապատասխան թվերը պետք է բնակելի կետի անվան հետ միևնույն մակարդակի վրա դրվեն: Սլաքի ձև ունեցող ուղղությունների ցուցիչ նշանների վրա այդ թվերը պետք է դրվեն բնակելի կետի անվան և սլաքի սույր ծայրի միջև. ուղղանկյան ձև ունեցող նշանների վրա դրանք պետք է դրվեն բնակելի կետի անունից հետո:

## **Հոդված 17**

### **Երթուղային մակնիշներ**

Այն նշանները, որոնք օգտագործվում են ճանապարհները նշելու համար կա՛մ թվերից, տառերից և կա՛մ տառերի ու թվերի համադրությունից բաղկացած համարների, կա՛մ ճանապարհների անունների միջոցով, կարող են բաղկացած լինել այդ համարից կամ անվանումից՝ ամփոփված ուղղանկյուն կամ վահանակաձև շրջանակի մեջ: Սակայն ճանապարհների դասակարգման համակարգ ունեցող Պայմանավորվող կողմերը կարող են այդ շրջանակը փոխարինել դասակարգման պայմանանշանով:

## **Հոդված 18**

### **Անվանումների ցուցիչ նշաններ**

1. Անվանումների ցուցիչ նշանները կարող են օգտագործվել երկու պետությունների սահմանը կամ միևնույն երկրի երկու վարչական միավորների սահմանը նշելու կամ էլ բնակելի կետի, գետի, լեռնանցքի, տեղի և այլնի անվանումը նշելու համար:
2. E,9 (a ինդեքսով) կամ E,9 (b ինդեքսով) նշանները տեղադրվում են բնակելի կետի մուտքի մոտ, E,9 (c ինդեքսով) կամ E,9 (d ինդեքսով) նշանները տեղադրվում են բնակելի կետի ելքի մոտ: Ազգային օրենսդրությունը կարող է նախատեսել՝ այդ նշանները ճանապարհներից օգտվողներին ցույց տան, որ E,9 (a ինդեքսով) կամ E,9 (b ինդեքսով) նշաններից մինչև E,9 (c ինդեքսով) կամ E,9 (d ինդեքսով) նշանները կիրառվում են տվյալ երկրի տարածքում գտնվող բնակելի կետերում գործող երթևեկության կանոնները, բացառությամբ այն դեպքերի, երբ բնակելի կետի ճանապարհի որոշ հատվածներում ուրիշ

կանոնները թելադրվում են ուրիշ նշաններով. սակայն B,4 նշանը միշտ պետք է տեղադրվի B,3 ազդանշանային նշան ունեցող գլխավոր ճանապարհներից այն դեպքում, երբ անցումի առավելության իրավունքը կորցնում է ուժը բնակելի կետում:

3. Անվանումների այն ցուցիչ նշանները, որոնք բնակելի կետի անվանումից տարբեր ցուցումներ են տալիս, պետք է նկատելիորեն, մասնավորապես գույնով, տարբերվեն E,9 (a ինդեքսով) - E,9 (d ինդեքսով) նշաններից:

## **Հոդված 19**

### **Հաստատող նշաններ**

Հաստատող նշանները նպատակ ունեն հաստատել ճանապարհի ուղղությունը, երբ իրավասու մարմինները դա անհրաժեշտ են համարում, օրինակ՝ խոշոր բնակելի կետերի ելքատեղի դեպքում: Դրանց վրա ցույց են տրվում մեկ մի քանի բնակելի կետերի անուններ, ինչպես որ նախատեսված է սույն կոնվենցիայի 16-րդ հոդվածի 1-ին կետում: Հեռավորությունը ցույց տալու դեպքում համապատասխան թվերը տեղադրվում են բնակելի կետի անունից հետո:

## **Հոդված 20**

E,11 (a ինդեքսով) կամ E,11 (b աստիճանում) նշանը տեղադրվում է հետիոտնային անցումներում, այնտեղ, որտեղ իրավասու մարմինները դա նպատակահարմար են համարում:

## **Հոդված 21**

### **Տարբեր ցուցիչ նշաններին վերաբերող ընդհանուր ցուցումներ**

1. Սույն կոնվենցիայի 15-20-րդ հոդվածներում հիշատակվող ցուցիչ նշանները տեղադրվում են այնտեղ, որտեղ դա իրավասու մարմինները նպատակահարմար են համարում: Ուրիշ ցուցիչ նշանները տեղադրվում են 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն, այնտեղ, որտեղ դա իրավասու մարմինները անհրաժեշտ են համարում. մասնավորապես F,2-F,7 նշանները տեղադրվում են միայն այն ճանապարհներից, որտեղ վերանորոգման կետերը (վթարի դեպքում), վառելիքալցման, գիշերելու և սննդի կետերը միմյանցից մեծ հեռավորության վրա են:
2. Տեղեկատու-ցուցիչ նշանները կարող են կրկնվել: Նշանի տակ տեղադրված լրացուցիչ ցուցանակը կարող է ցույց տալ նշանի և այն տեղի հեռավորությունը, որի առկայությունն է ցույց տալիս այդ նշանը. այդ հեռավորությունը կարող է նշվել նաև բուն նշանի ստորին մասում:

## **Կանգառին և կայանումին վերաբերող նշաններ**

### **Հոդված 22**

Սույն կոնվենցիայի 6-րդ հավելվածի Ա բաժնում նկարագրված են կանգառը կամ կայանումը արգելող կամ սահմանափակող նշանները, իսկ Բ բաժնում նկարագրված են այլ նշաններ, որոնք օգտակար ցուցումներ են տալիս կայանումի վերաբերյալ. այդ հավելվածում տրվում է տվյալ նշանների նշանակությունը, ինչպես նաև ընդգրված են դրանց օգտագործմանը վերաբերող որոշ հրահանգներ:

### Գլուխ III

#### Լուսային ճանապարհային ազդանշաններ

#### Հոդված 23

#### Ազդանշաններ՝ նախատեսված փոխադրամիջոցների երթևեկության կարգավորման համար

1. Սույն հոդվածի 12-րդ կետի դրույթներին հետևելու պարագայում որպես փոխադրամիջոցների երթևեկությունը կարգավորող լուսային ազդանշաններ, բացի այն ազդանշաններից, որոնք նախատեսված են բացառապես ընդհանուր օգտագործման փոխադրամիջոցների համար, կարող են օգտագործվել միայն ստորև նշված լույսերը, որոնք հետևյալ նշանակությունն ունեն:

##### ա) Չթարթող լույսեր

- i) **Կանաչ լույսը** նշանակում է անցումի թույլտվություն, սակայն խաչմերուկում երթևեկությունը կարգավորելու համար նախատեսված կանաչ լույսը վարորդներին անցումի թույլտվություն չի տալիս, եթե այն ուղղությամբ, որով նրանք մտադիր են շարժվել, այնպիսի խցանում կառաջանա, որի դեպքում, հավանաբար, խաչմերուկ մտնելով նրանք չկարողանան ազատել այն ազդանշանների հերթագայության ժամանակ:
- ii) **Կարմիր լույսը** նշանակում է անցումի արգելք. փոխադրամիջոցները չպետք է հատեն կանգառի գիծը կամ, եթե կանգառի գիծ չկա, առաջ անցնել լուսացույցից. եթե լուսացույցը տեղադրված է խաչմերուկի մեջտեղում կամ հակառակ կողմում, նրանք չպետք է տվյալ խաչմերուկում դուրս գան խաչմերուկ կամ հետիոտնային անցում:
- iii) **Գեղին լույս**, որը միանում է առանձին կամ կարմիր լույսի հետ միաժամանակ. երբ այն կիրառվում է առանձին, դա նշանակում է, որ ոչ մի փոխադրամիջոց չպետք է հատի կանգառի գիծը կամ անցի լուսացույցը, բացառությամբ այն դեպքերի, երբ լույսի միացման պահին փոխադրամիջոցն արդեն այնքան մոտ է գտնվում, որ երթևեկության անվտանգության պահանջներից ելնելով՝ չի կարող կանգնել կանգառի գծի կամ լուսացույցի առաջ: Եթե ազդանշանը գտնվում է խաչմերուկի մեջտեղում կամ խաչմերուկից հետո, դեղին լույսը նշանակում է, որ ոչ մի փոխադրամիջոց չպետք է մտնի տվյալ խաչմերուկ կամ հետիոտնային անցում, բացառությամբ այն դեպքերի, երբ լույսի միացման պահին փոխադրամիջոցն այնքան մոտ է գտնվում, որ երթևեկության անվտանգության պահանջներից ելնելով՝ չի կարող կանգնել մինչև խաչմերուկ մտնելը: Գեղին լույսը կարմիր լույսի միաժամանակ միացման դեպքում նշանակում է ազդանշանի ցուցումների անհապաղ հերթափոխ, սակայն այն չի փոխում անցումի՝ կարմիր լույսով թելադրվող արգելքը:

##### բ) Թարթող լույսեր

- i) **Մեկ կարմիր թարթող լույսը** կամ միևնույն հենասյան վրա միևնույն բարձրությամբ և միևնույն ուղղությամբ տեղադրված երկու փոխառփոխ թարթող կարմիր լույսերը, որոնցից մեկը միանում է, երբ մյուսն անջատվում է, նշանակում են, որ փոխադրամիջոցները չպետք է հատեն կանգառի գիծը կամ, եթե կանգառի գիծ չկա, լուսացույցից առաջ անցնեն. այդ լույսերը կիրառվում են միայն երկաթուղային զծանցներում, բացովի կամուրջներ անցնելիս կամ նավ-լաստանավերի նավահանգիստներում, ինչպես նաև անցումի արգելք ցույց տալու համար, երբ հրշեջ ավտոմեքենաներ են ճանապարհի մտնում կամ թռչող սարք է մոտենում, որի հետագիծը՝ ոչ մեծ բարձրությամբ, հատում է ավտոճանապարհը:

- ii) **Դեղին թարթող** լույսը կամ երկու փոխառփոխ թարթող դեղին լույսերը նշանակում են, որ վարորդները կարող են շարունակել ընթացքը, բայց այդուհանդերձ պետք է հատուկ զգուշություն ցուցաբերեն:
2. Եռագույն համակարգի լուսային ազդանշանները բաղկացած են երեք չթարթող լույսերից, այն է՝ կարմիր, դեղին և կանաչ. կանաչ լույսը պետք է միանա միայն կարմիրի և դեղինի անջատվելուց հետո:
  3. Երկգույն համակարգի լուսային ազդանշանները բաղկացած են կարմիր և կանաչ չթարթող լույսերից: Կարմիր և կանաչ լույսերը չպետք է միաժամանակ միանան: Երկգույն համակարգի լուսային ազդանշանները կիրառվում են միայն որպես հարաբերական ժամկետում առկա հարմարանքների փոխարինման ժամանակավոր սարքեր՝ նախատեսված սույն կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետի վերապահությամբ:
  4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված եռագույն և երկգույն համակարգերի լույսերը դասավորվում են ուղղահայաց կամ հորիզոնական:
  5. Այն դեպքերում, երբ լույսերը ուղղահայաց են դասավորվում, կարմիր լույսը տեղադրվում է վերևում: Եթե լույսերը հորիզոնական են դասավորվում, կարմիր լույսը տեղադրվում է շարժման ուղղությանը համապատասխանող կողմի հակառակ կողմում:
  6. Եռագույն համակարգի դեպքում դեղին լույսը տեղադրվում է մեջտեղում:
  7. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում նշված եռագույն և երկգույն համակարգերի ազդանշաններում բոլոր լույսերը պետք է շրջանաձև լինեն: Սույն հոդվածի 1-ին կետում նշված կարմիր թարթող լույսերը նույնպես պետք է շրջանաձև լինեն:
  8. Դեղին թարթող լույսը կարող է առանձին տեղադրվել. հանդարտ երթևեկության ժամերին այդ լույսը կարող է նաև փոխարինել եռագույն համակարգի լույսերին:
  9. Երբ եռագույն համակարգի կանաչ լույսը մեկ կամ մի քանի սլաքներ է ունենում, այդ սլաքի կամ սլաքների միացումը նշանակում է, որ փոխադրամիջոցները կարող են շարժվել միայն սլաքներով ցույց տրվող ուղղությամբ կամ ուղղություններով: Եթե սլաքները ուղիղ շարժվելու թույլտվություն են ցույց տալիս, ապա դրանց սուր ծայրը պետք է դեպի վեր ուղղված լինի:
  10. Երբ եռագույն համակարգի ազդանշանը լրացված է սլաք կամ սլաքներ ունեցող մեկ կամ մի քանի կանաչ լույսերով, այդ լրացուցիչ սլաքի կամ սլաքների միացումը (անկախ այն հանգամանքից, թե եռագույն համակարգի լույսերից որն է այդ պահին միացած) նշանակում է, որ փոխադրամիջոցները կարող են շարունակել շարժումը սլաքով կամ սլաքներով ցույց տրված ուղղությամբ կամ ուղղություններով. դա նշանակում է նաև, որ եթե փոխադրամիջոցները գտնվում են այն գոտում, որը նախատեսված է բացառապես սլաքով նշված ուղղությամբ շարժման համար, կամ որով պետք է իրականացվի այդ շարժումը, դրանց վարորդները (պայմանով, որ զիջեն ճանապարհը այն ուղղությամբ շարժվող փոխադրամիջոցներին, որով մտադիր են շարունակել ընթացքը, և պայմանով, որ չեն վտանգի հետիոտների անվտանգությունը) պետք է հետևեն նշված ուղղությանը այն դեպքերում, երբ իրենց փոխադրամիջոցների կանգառը կարող է խոչընդոտել ուրիշ փոխադրամիջոցների շարժմանը, որոնք գտնվում են իրենցից հետո նույն գոտում: Այդ լրացուցիչ կանաչ լույսերը գերադասելի է տեղադրել սովորական կանաչ լույսի մակարդակում:
  11. Երբ կանաչ կամ կարմիր լույսերը տեղադրվում են երթևեկության մի քանի գոտիներ ունեցող ճանապարհի երկայնակի գծերով նշված գոտիների վրա, կարմիր լույսը նշանակում է երթևեկության արգելք այն գոտիով, որի վրա այն տեղադրված է, իսկ կանաչ լույսը նշանակում է երթևեկության թույլտվություն այդ գոտիով: Այդ կերպ տեղադրված



կարմիր լույսը պետք է երկու թեք խաչվող շերտագծերի ձև ունենա, իսկ կանաչ լույսը՝ վար ուղղված սլաքի ձև:

12. Ազգային օրենսդրությունը կարող է լուսնասպիտակ դանդաղ թարթող լույս նախատեսել որոշ երկաթուղային գծանցներում, որը անցումի թույլտվություն է նշանակում:
13. Եթե լուսային ճանապարհային ազդանշանները նախատեսվում են միայն հեծանիվների վարորդների համար, շփոթությունից խուսափելու անհրաժեշտության դեպքում ազդանշանի վրա կարող է հեծանիվի ուրվանկար պատկերվել կամ կարող է փոքր չափսերի ազդանշան օգտագործվել՝ լրացված հեծանիվի պատկերով ուղղանկյուն ցուցանակով:

## **Հոդված 24**

### **Ազդանշաններ՝ նախատեսված միայն հետիոտների համար**

1. Որպես միայն հետիոտների համար նախատեսված լուսային ազդանշաններ կարող են օգտագործվել սոսկ ստորև նշված լույսերը, որոնք հետևյալ նշանակությունն ունեն:

ա) Չթարթող լույսեր

- i) Կանաչ լույսը նշանակում է հոտիոտների շարժման թույլտվություն:
- ii) Գեղին լույսը նշանակում է հետիոտների շարժման արգելում, սակայն նրանց, ովքեր արդեն մտել են երթևեկելի հատված, թույլ է տալիս վերջացնել անցումը:
- iii) Կարմիր լույսը արգելում է հետիոտներին մտնել երթևեկելի հատված:

բ) Թարթող լույսեր

Կանաչ թարթող լույսը նշանակում է, որ հետիոտների՝ երթևեկելի հատվածով անցնելու ժամանակը սպառվում է, և անհապաղ հայտնվելու է կարմիր լույսը:

2. Հետիոտների համար նախատեսված լուսային ազդանշանները պետք է գերազանցապես երկլույս համակարգերի լինեն՝ բաղկացած երկու լույսից, այն է՝ կարմիր և կանաչ լույսերից: Սակայն դրանք կարող են նաև եռագույն համակարգի լինել՝ ընդգրկելով երեք գույն, այն է՝ կարկիր, դեղին և կանաչ: Երբեք չպետք է միաժամանակ երկու լույս միանա:

3. Լույսերը պետք է ուղղահայաց դասավորվեն, ընդ որում կարմիր լույսը միշտ պետք է վերևում լինի, իսկ կանաչը՝ միշտ ներքևում: Կարմիր լույսը գերազանցաբար պետք է անշարժ հետիոտնի կամ հետիոտների ուրվանկարի ձև ունենա, իսկ կանաչ լույսը՝ շարժվող հետիոտնի կամ հետիոտների:
4. Հետիոտնային լուսացույցերի կառուցվածքը և տեղադրման ձևը պետք է բացառեն դրանց՝ որպես փոխադրամիջոցների շարժման կարգավորման համար նախատեսված լուսային ազդանշանների ընկալումը վարորդների կողմից:

## **Գլուխ IV**

### **Ճանապարհների գծանշումը**

## **Հոդված 25**

Երթևեկելի հատվածի պայմանանշանները (ճանապարհների գծանշում) կիրառվում են այն դեպքերում, երբ իրավասու մարմինները երթևեկության կարգավորման, ճանապարհից օգտվողներին նախազգուշացնելու կամ կողմնորոշելու նկատառումով դրանք անհրաժեշտ են համարում: Այդ պայմանանշանները կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ ճանապարհային ուրիշ ազդանշանային նշանների համադրությամբ, այնպես, որ զորացնեն կամ ճշգրտեն դրանց ցուցումները:

## Հոդված 26

1. Երկայնակի գծանշումը՝ բաղկացած երթևեկելի հատվածով ձգվող անընդհատ գծից, նշանակում է, որ բոլոր փոխադրամիջոցներին արգելվում է անցնել դրանից կամ քշել դրա վրայով. նմանապես, երբ գծանշումը բաժանում է երթևեկության երկու ուղղությունները, այն նշանակում է, որ ոչ մի փոխադրամիջոց չպետք է ընթանա գծանշումի մյուս կողմով, որը վարորդի համար հանդիսանում է շարժման ուղղությանը համապատասխանող երթևեկելի հատվածի հակառակ կողմը: Երկայնակի գծանշումը՝ բաղկացած երկու անընդհատ գծից, համանման նշանակություն ունի:
2. ա) Երկայնակի գծանշումը՝ բաղկացած ճանապարհի երթևեկելի հատվածով ձգվող ընդհատվող գծից, արգելող նշանակություն չունի, բայց նախատեսված է՝
  - i) կամ շարժման գոտիների սահմանագատման, ինչպես նաև երթևեկության հոսքերի ուղղությունների բաժանման,
  - ii) կամ անընդհատ գծին մոտենալու և դրանով թելադրվող արգելքի մասին կամ հատուկ վտանգ ներկայացնող այլ հատվածի մոտենալու մասին նախազգուշացնելու համար:

բ) Այն ընդհատվող գծերում, որոնք օգտագործվում են սույն կետի «ա», «ii» ենթակետում շարադրված նպատակներով, գծիկերի միջև երկարության և գծիկի երկարության հարաբերությունը զգալիորեն ավելի փոքր պետք է լինի, քան այն ընդհատվող գծերում, որոնք օգտագործվում են նույն կետի «ա», «i» ենթակետում շարադրված նպատակներով:
3. Այն դեպքերում, երբ ճանապարհի երթևեկելի հատվածում ընդհատվող գծի կողքին տարված երկայնակի գծանշումը բաղկացած է անընդհատ գծից, վարորդները պետք է ղեկավարվեն միայն այն գծի ցուցումներով, որը իրենց կողմում է գտնվում: Այդ դրույթը չի խոչընդոտում թույլատրելի վազանց կատարող վարորդներին կրկին վերադառնալ շարժման ուղղությանը համապատասխանող գոտի:
4. Սույն հոդվածի դրույթները կիրարկելու դեպքում երկայնակի գծանշում չեն հանդիսանում այն երկայնակի գծերը, որոնք նշում են ճանապարհի երթևեկելի հատվածի եզրերը, որպեսզի ասպահովեն դրանց առավել տեսանելիությունը, կամ այն գծերը, որոնք միացած լինելով լայնակի գծերին, նշում են ճանապարհի երթևեկելի հատվածում կայանումի համար նախատեսված տեղերը:

## Հոդված 27

1. Լայնակի գծանշումը՝ բաղկացած շարժման մի կամ մի քանի գոտիների ամբողջ լայնությամբ ձգվող անընդհատ գծից կամ երկու զուգահեռ անընդհատ գծերից, նշում է փոխադրամիջոցների կանգառի գիծը՝ թելադրված սույն կոնվենցիայի 10-րդ հոդվածի 3-րդ կետում նշված B,2 «Առանց կանգառի անցումը արգելված է» ազդանշանային նշանով: Այդպիսի գծանշումը կարող է կիրառվել նաև այն կանգառի գիծը ցույց տալու համար, որը կարող է թելադրվել ճանապարհային լուսային ազդանշանի, ճանապարհային երթևեկության կարգավորման լիազորություն ունեցող անձի միջոցով կամ երկաթուղային գծանցից առաջ: Գնապարհի երթևեկելի հատվածում B,2 ազդանշանային նշանն ուղեկցող գծանշումից առաջ կարող է դրվել «Կանգ» (Stop) բառը:

2. Այն դեպքերում, երբ տեխնիկապես հնարավոր է, սույն հոդվածի 1-ին կետում նշված լայնակի գծանշումը պետք է արվի ամեն անգամ, երբ տեղադրվում է B,2 նշանը:

- iv) Լայնակի գծանշումը՝ բաղկացած շարժման մի կամ քանի գոտիների ամբողջ լայնությամբ տարված մեկ ընդհատվող կամ երկու կողք կողքի ընդհատվող գծերից, նշում է այն գիծը, որը փոխադրամիջոցները սովորաբար չպետք է հատեն, երբ նրանք պարտավոր են ճանապարհը զիջել սույն կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետում նշված B,1 «Գլխավոր ճանապարհի հատում» նշանի համաձայն: Այդ գծանշումից առաջ B,1 նշանը դնելու համար ճանապարհի երթևեկելի հատվածում կարող է պատկերվել եռանկյունի՝ հոծ երիզով, որի կողմերից մեկը զուգահեռ է գծանշումին, իսկ հակադիր գագաթը ուղղված է դեպի մոտեցող փոխադրամիջոցների կողմը:
- v) Հետիոտնային անցումները նշելու համար նախընտրելի է բավական լայն շերտեր գծել՝ զուգահեռ ճանապարհի երթևեկելի հատվածի առանցքին:
- vi) Հեծանվորդների անցումը նշելու համար գծվում են կամ լայնակի գծեր, կամ ուրիշ գծանշում է արվում, որը հնարավոր չէ ընկալել որպես հետիոտնային անցումներում արվող գծանշում:

## Հոդված 28

1. Ճանապարհի երթևեկելի հատվածի գծանշումների ուրիշ տեսակներ, ինչպիսիք են սլաքները, զուգահեռ կամ շեղ գծերը և կամ գրառումները, կարող են կիրառվել ազդանշանային նշանների ցուցումները կրկնելու կամ էլ ճանապարհից օգտվողներին այնպիսի ցուցումներ տալու համար, որոնք չեն կարող բավարար կերպով տրվել ազդանշանային նշանների միջոցով: Նշագծումների այդպիսի տեսակները օգտագործվում են մասնավորապես կայանումի վայրերի կամ գոտիների, ավտոբուսների կամ տրոլեյբուսների կանգառների տեղերի սահմանները նշելու համար, որտեղ կայանելն արգելված է, ինչպես նաև խաչմերուկներին մոտենալիս շարքերում նախնական վերադասավորում նշանակելու համար: Սակայն եթե երկայնակի գծանշումներով շարժման գոտիների բաժանված երթևեկելի հատվածում սլաք կա, վարորդները պետք է շարունակեն ընթացքը այն գոտում ցույց տրված ուղղությամբ կամ ուղղություններից մեկով, որով նրանք շարժվում են:
2. Սույն կոնվենցիայի՝ հետիոտնային անցումներին վերաբերող 27-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներին հետևելու պարագայում ճանապարհի երթևեկելի հատվածի զոնայի կամ ճանապարհի երթևեկելի հատվածի մակարդակից քիչ բարձրացող զոնայի գծանշումը զուգահեռ շեղ գծերով՝ եզրագծված անընդհատ կամ ընդհատվող շերտով, նշանակում է, որ անընդհատ շերտի առկայության դեպքում փոխադրամիջոցները չպետք է մտնեն այդ զոնան, իսկ ընդհատվող շերտերի առկայության դեպքում փոխադրամիջոցները կարող են մտնել այդ այդ զոնան միայն դեպքում, եթե դա բացարձակապես անվտանգ է կամ եթե անհրաժեշտ է երթևեկելի հատվածի հակառակաց կողմից լայնակի կողմը անցնելու համար:
3. Զիգզագաձև գիծը երթևեկելի հատվածի եզրին նշանակում է կայանման արգելում երթևեկելի հատվածի մատնանշված կողմից այդ գծի ամբողջ երկարությամբ:

## Հոդված 29

1. Սույն կոնվենցիայի 26-28-րդ հոդվածներում նշված գծանշումը ճանապարհի երթևեկելի հատվածում կարող է արվել ներկով կամ ցանկացած այլ միջոցով, պայմանով, որ այն նույնքան արդյունավետ լինի:
2. Եթե ճանապարհի երթևեկելի հատվածի գծանշումը ներկով է արվում, այն պետք է դեղին կամ սպիտակ գույնի լինի. սակայն կարող է օգտագործվել կապույտ գույնը այն գծանշումի համար, որը նշում է թույլատրելի կամ սահմանափակ կայանման տեղը: Եթե Պայմանավորվող կողմի տարածքում կիրառվում են երկու գույներն էլ՝ դեղին և սպիտակ, ապա նույն կարգի գծանշումները պետք է լինեն նույն գույնի: Սույն կետի դրույթների կիրարկման դեպքում «սպիտակ» տերմինը ներառում է «արծաթագույն» և «բաց մոխրագույն» երանգները:
3. Գծանշման մեջ ընդգրկված գրառումները, պատկերները և սլաքները դնելիս հարկ է հաշվի առնել դրանց չափսերի մեծացման անհրաժեշտությունը փոխադրամիջոցների շարժման ուղղությամբ այն նկատառումով, որ այդ գրառումները, պատկերները և սլաքները տեսանելի լինեն վարորդներին շատ մեծ անկյան տակ:
4. Հանձնարարվում է, որ ճանապարհային գծանշումը՝ նախատեսված շարժվող փոխադրամիջոցների համար, լուսաանդրադարձնող լինի այն դեպքում, երբ դա պահանջում է ինտենսիվ երթևեկությունը, ինչպես նաև վատ լուսավորության, լուսավորության լիակատար բացակայության դեպքերում:

### **Հոդված 30**

Սույն կոնվենցիայի 8-րդ հավելվածը բովանդակում է այն հանձնարարականների ամբողջությունը, որոնք վերաբերում են ճանապարհների գծանշումների սխեմաներին կամ նկարներին:

### **Գլուխ V**

#### **Ճանապարհային այլ նշաններ և ազդանշաններ**

### **Հոդված 31**

#### **Վերանորոգման աշխատանքների ազդանշաններ**

1. Ճանապարհի երթևեկելի հատվածի այն տեղամասերի սահմանները, որտեղ վերանորոգման աշխատանքներ են տարվում, պետք է հստակ նշվեն ազդանշանային նշաններով:
2. Պայմանավորված վերանորոգման աշխատանքների ծավալով և շարժման ինտենսիվությամբ՝ ճանապարհի երթևեկելի հատվածի այն տեղամասերի սահմանները նշելու համար, որտեղ վերանորոգման աշխատանքներ են տարվում, տեղադրվում են ընդհատվող կամ անընդհատ արգելապատնեշներ՝ ներկված հերթագայող սպիտակ և կարմիր, դեղին և կարմիր, սեև և սպիտակ կամ սև և դեղին շերտերով, բացի դրանից, գիշերը, եթե արգելապատնեշները օժտված չեն լուսաանդրադարձնող հատկությամբ, տեղադրվում են լույսեր կամ լուսաանդրադարձնող հարմարանքներ: Լուսաանդրադարձնող հարմարանքները և չթարթող լույսերը պետք է կարմիր կամ մուգ դեղին գույնի լինեն, իսկ թարթող լույսերը՝ մուգ դեղին: Սակայն.

ա) լույսերը և հարմարանքները կարող են սպիտակ գույնի լինել, եթե դրանք տեսանելի են միայն շարժման մի ուղղությամբ և նշում են տեղամասի սահմանները այդ շարժման հակադարձ ուղղության կողմում:

բ) լույսերը և հարմարանքները կարող են լինել սպիտակ կամ բաց դեղին գույնի, եթե դրանք նշում են շարժման երկու ուղղությունները բաժանող տեղամասի սահմանները:

## Հոդված 32

### Նշագծում լույսերի կամ լուսասանդրադարձնող հարմարանքների միջոցով

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր ամբողջ տարածքում երթևեկելի հատվածի եզրերի նշման նպատակով կիրառվող լուսերի կամ լուսասանդրադարձնող հարմարանքների համար պետք է կիրառի միևնույն գույնը կամ գույների միևնույն համակարգը:

## Երկաթուղային գծանցներ

### Հոդված 33

1. ա) Եթե երկաթուղային գծանցի մոտ ազդանշանային համակարգ է տեղադրված գնացքների մոտենալը կամ ուղեփակոցի կամ կիսաուղեփակոցների մոտալուս փակվելը զգուշացնելու համար, այն պետք է բաղկացած լինի թարթող կարմիր լույսից կամ փոխ առ փոխ թարթող կարմիր լույսերից, ինչպես որ նախատեսված է սույն կոնվենցիայի 23-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում: Սակայն՝
  - i) կարմիր թարթող լույսերը կարող են լրացվել կամ փոխարինվել կարմիր-դեղին-կանաչ եռագույն համակարգի լուսային ազդանշանով՝ նկարագրված սույն կոնվենցիայի 23-րդ հոդվածի 2-րդ կետում, կամ այնպիսի ազդանշանով, որում բացակայում է կանաչ լույսը, եթե ճանապարհին՝ երկաթուղային գծանցի մոտ, տեղադրված են ուրիշ եռագույն լուսային ազդանշաններ կամ եթե երկաթուղային գծանցում ուղեփակոցներ են տեղադրված.
  - ii) հողային ճանապարհների՝ բավական թույլ երթևեկությամբ, և հետիոտնային արահետներում կարող է կիրառվել միայն ձայնային ազդանշանը:
- բ) Բոլոր դեպքերում լուսային ազդանշանային համակարգը կարող է լրացվել ձայնային ազդանշանով:

2. Լուսացույցերը տեղադրվում են ճանապարհի երթևեկելի հատվածի եզրին՝ շարժման համապատասխան ուղղությամբ: Պայմանավորված հանգամանքներով, օրինակ՝ ազդանշանների տեսանելիության պայմաններով կամ շարժման ինտենսիվությամբ, լույսերը պետք է կրկնվեն ճանապարհի հակառակ կողմում: Սակայն, եթե տեղի պայմանների թելադրանքով նախընտրելի է դիտվում, լույսերը կարող են կրկնվել ճանապարհի երթևեկելի հատվածի մեջտեղի անվտանգության կոդյակում կամ տեղադրվել ճանապարհի երթևեկելի հատվածի վրա:

3. Սույն կոնվենցիայի 10-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, B,2 «Անցումն առանց կանգառի արգելված է» ազդանշանային նշանը կարող է տեղադրվել առանց ուղեփակոցի, կիսաուղեփակոցի կամ լուսային ազդանշանի երկաթուղային գծանցի մոտ՝ նախազգուշացնելով գնացքների մոտենալու մասին: Եթե երկաթուղային գծանցում տեղադրված է այդ նշանը, վարորդները պետք է կանգնեցնեն իրենց փոխադրամիջոցները կանգառի գծի մոտ կամ կանգառի գծի բացակայության դեպքում՝ նշանի մոտ և շարունակեն շարժումը համոզվելուց հետո միայն, որ անցումին գնացք չի մոտենում:

## Հոդված 34

1. Երկաթուղու յուրաքանչյուր կողմում շախմատաձև դասավորված ուղեփակոցներով կամ կիսաուղեփակոցներով երկաթուղային գծանցներում այդ ուղեփակոցների կամ կիսաուղեփակոցների հորիզոնական դրությունը նշանակում է, որ ճանապարհից յուրաքանչյուր օգտվող պարտավոր է կանգ առնել իրեն մոտ գտնվող ուղեփակոցի կամ կիսաուղեփակոցի առաջ. ուղեփակոցների շարժումը հորիզոնական դիրքի բերելու համար և կիսաուղեփակոցների շարժումը միևնույն նշանակությունն ունեն:

2. Սույն կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված կարմիր լույսի կամ կարմիր լույսերի միացումը կամ ձայնային ազդանշանի արձակումը՝ հիշատակված նույն կետում, նշանակում է, որ ճանապարհից ոչ մի օգտվող իրավունք չունի հատել կանգառի գիծը կամ, եթե կանգառի գիծ չկա, անցնել լուսացույցից: 33-րդ հոդվածի 1-ին կետի «ա» «i» ենթակետում հիշատակված եռագույն համակարգի դեղին լույսի միացումը նշանակում է, որ ճանապարհից ոչ մի օգտվող իրավունք չունի հատել կանգառի գիծը կամ, եթե կանգառի գիծ չկա, անցնել լուսացույցից, բացառությամբ այն դեպքերի, երբ դեղին լույսի միացման պահին փոխադրամիջոցները այնքան մոտ են գտնվում ազդանշանին, որ չեն կարող կանգ առնել դրա առաջ՝ առանց վտանգ առաջացնելու:

### Հոդված 35

1. Երկաթուղային գծանցների ուղեփակոցները և կիսաուղեփակոցները պետք է հստակ ներկված լինեն հերթագայող կարմիր և սպիտակ, կարմիր և դեղին, սև և սպիտակ կամ դեղին և սև շերտերով: Սակայն դրանք կարող են ներկվել միայն սպիտակ կամ միայն դեղին գույնով այն պայմանով, որ մեջտեղում մեծ կարմիր սկավառակ տեղադրվի:
2. Ուղեփակոց կամ կիսաուղեփակոց չունեցող յուրաքանչյուր երկաթուղային գծանցի մոտ՝ երկաթուղու անմիջական հարևանությամբ, պետք է տեղադրվի 3-րդ հավելվածում նկարագրված B,7 ազդանշանային նշան: Գնացքների մոտենալը նախազգուշացնող լուսացույցի կամ B,2 «Անցումն առանց կանգառի արգելված է» նշանի առկայության դեպքում B,7 ազդանշանային նշանը տեղադրվում է B,2 նշանի հենարանի կամ լուսացույցի սյան վրա: B,7 ազդանշանային նշանի տեղադրումը պարտադիր չէ՝

ա) ավտոճանապարհների և երկաթուղագծերի հատման կետերում, ուր երկաթուղային երթևեկությունն իրականացվում է շատ փոքր արագությամբ, իսկ ճանապարհային երթևեկությունը կարգավորվում է երկաթուղային փոխադրամիջոցները ուղեկցող անձով, որը ձեռքով անհրաժեշտ ազդանշաններ է տալիս.

բ) երկաթուղագծերի և ոչ մեծ երթևեկությամբ հողային ճանապարհների ու հետիոտնային արահետների հատման կետերում:

3. Սույն կոնվենցիայի 3-րդ հավելվածում նկարագրված A, 26 կամ A,27 պայմանանշան ունեցող ցանկացած նախազգուշացնող նշանի տակ կարող է տեղադրվել ուղղանկյուն վահանակ՝ ուղղահայաց երկար կողմով և սպիտակ կամ դեղին հիմնագույնի վրա երեք շեղ կարմիր շերտերով, բայց այդ դեպքում նշանի և երկաթուղու միջև ընկած տարածության մոտավորապես մեկ երրորդում և երկու երրորդում տեղադրվում են լրացուցիչ նշաններ՝ բաղկացած նույնաձև վահանակից, որի սպիտակ կամ դեղին հիմնագույնի վրա համապատասխանաբար մեկ կամ երկու կարմիր շեղ շերտեր են ներկված: Այդ նշանները կարող են կրկնվել ճանապարհի երթևեկելի հատվածի հակառակ կողմում: Սույն կետում հիշատակված վահանակները նկարագրված են սույն կոնվենցիայի 3-րդ հավելվածի Գ բաժնում:

### Հոդված 36

1. Պայմանավորված երկաթուղային գծանցներում ծագող հատուկ վտանգով՝ Պայմանավորվող կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել, որպեսզի՝

ա) յուրաքանչյուր երկաթուղային գծանցից առաջ տեղադրված լինի A,26 կամ A,27 պայմանանշաններից որևէ մեկով ազդանշանային նշաններից որևէ մեկը, սակայն կարելի է ոչ մի նշան չտեղադրել՝

- i) հատուկ դեպքերում, որոնք կարող են լինել բնակելի կետերում,
- ii) հողային և գյուղական ճանապարհներում, որոնցով մեխանիկական փոխադրամիջոցների երթևեկությունը շատ հազվադեպ է իրականացվում.

բ) բոլոր երկաթուղային գծանցները կահավորված լինեն ուղեփակոցներով կամ կիսաուղեփակոցներով և կամ ազդանշանային համակարգով, որոնք նախագուշացնեն գնացքների մոտենալը, բացառությամբ այն դեպքերի, երբ երկաթգիծը տեսանելի է ճանապարհից օգտվողներին տվյալ գծանցի երկու կողմերից այնպես, որ մասնավորապես գնացքների մեծ արագությունը հաշվի առնելով՝ գծանցին այս կամ այն կողմից մոտեցող ճանապարհային փոխադրամիջոցի վարորդը, եթե գնացքը երևա, կարողանա ժամանակին կանգ առնել մինչև երկաթուղային գծանցն անցնելը, ինչպես նաև այնպես, որ ճանապարհից օգտվողները, որոնք գնացքը երևալու պահին արդեն գտնվում են գծանցի վրա, կարողանան ժամանակին անցնել դրանից. սակայն Պայմանավորվող կողմերը կարող են շեղումներ թույլ տալ սույն կետի դրույթներից այն երկաթուղային գծանցներում, որտեղ գնացքների արագությունն առանձնապես մեծ չէ կամ ճանապարհային մեխանիկական փոխադրամիջոցների երթևեկությունը աննշան է.

գ) բոլոր երկաթուղային գծանցները՝ ուղեփակոցներով կամ կիսաուղեփակոցներով, որոնք գործողության մեջ են դրվում այն պահակակետից, որից ուղեփակոցները կամ կիսաուղեփակոցները չեն երևում, ապահովված լինեն գնացքների մոտենալը նախագուշացնող և սույն կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված ազդանշանային համակարգերից մեկով.

դ) բոլոր երկաթուղային գծանցները՝ ուղեփակոցներով կամ կիսաուղեփակոցներով, որոնք գնացքը մոտենալիս ավտոմատ կերպով գործողության մեջ են դրվում, սարքավորված լինեն գնացքների մոտենալը նախագուշացնող և սույն կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված ազդանշանային համակարգերից մեկով.

ե) ուղեփակոցները և կիսաուղեփակոցները լավ տեսանելի լինելու համար պատված լինեն լուսասանդրադարձնող նյութերով կամ սարքավորվեն լուսասանդրադարձնող հարմարանքներով և, անհրաժեշտության դեպքում, գիշերը լուսավորվեն. բացի դրանից, որպեսզի գիշերային ինտենսիվ երթևեկությամբ ավտոճանապարհներին երկաթուղային գծանցներից առաջ տեղադրված նախագուշացնող նշանները պատված լինեն լուսասանդրադարձնող նյութերով կամ սարքավորվեն լուսասանդրադարձնող հարմարանքներով և, անհրաժեշտության դեպքում, գիշերը լուսավորվեն.

զ) ճանապարհի երթևեկելի հատվածի մեջտեղում՝ կիսաուղեփակոցներով սարքավորված երկաթուղային գծանցների մոտ, հնարավորության դեպքում երկայնակի գծանշում անցկացվի, որը արգելի երկաթուղային գծանցներին մոտեցող փոխադրամիջոցներին անցնել շարժման հակառակ ուղղության երթևեկելի հատվածի կողմը կամ նույնիսկ շարժման երկու ուղղությունները բաժանող ուղղորդող կղզյակներ կառուցվեն:

- 2. Սույն հոդվածի դրույթները չեն կիրարկվում սույն կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2-րդ կետի վերջին դարձվածքով նախատեսված դեպքերում:

## **Գլուխ VI**

### **Ամփոփիչ դրույթներ**

#### **Հոդված 37**

1. Սույն կոնվենցիան Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական հաստատություններում, մինչև 1969թ. դեկտեմբերի 31-ը բաց է Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետությունների կամ ցանկացած մասնագիտացված հաստատության անդամների կամ Միջուկային էներգիայի միջազգային գործակալության անդամների կամ Միջազգային դատարանի կողմերի կամ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից սույն կոնվենցիայի անդամ դառնալու հրավեր ստացած ցանկացած ուրիշ պետությունների ստորագրման համար:
2. Սույն կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերացման վկայագրերը ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

*ԽՍՀՄ-ը սույն կոնվենցիան վավերացրել է ԽՍՀՄ ԳԽ նախագահության 1974թ. ապրիլի 29-ի թիվ 5939-VIII հրամանով՝ վերապահությամբ և հայտարարություններով:*

3. Սույն կոնվենցիան բաց է մնում սույն հոդվածի 1-ին կետում նշված պետություններից ցանկացածի ստորագրման համար: Միանալու մասին փաստաթղթերը ի պահ են տրվում Գլխավոր քարտուղարին:

### **Հոդված 38**

*Տես՝ ԽՍՀՄ հայտարարությունը՝ արված սույն կոնվենցիան ստորագրելիս*

1. Յուրաքանչյուր պետություն սույն կոնվենցիան ստորագրելիս, վավերացնելիս կամ դրան միանալիս կամ հետագայում ցանկացած պահի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտագրի միջոցով կարող է հայտարարել, որ կոնվենցիան կիրարկելի է դառնում այն ամբողջ տարածքում կամ տարածքների մի մասում, որի արտաքին հարաբերությունների համար ինքը պատասխանատու է: Կոնվենցիան սկսում է կիրարկվել հայտագրում նշված տարածքում կամ տարածքներում նշված հայտագիրը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից 30 օր հետո կամ հայտագրած պետությունում կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահին, եթե դա ավելի ուշ տարեթիվ է:
2. Սույն հոդվածի 1-ին կետում հիշատակվող յուրաքանչյուր հայտագրող պետություն պետք է այն տարածքների անունից, որոնց հանձնարարությամբ ինքը մնան հայտագիր է արել, սույն կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հայտարարություններ բովանդակող հայտագիր ուղարկի:
3. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հայտարարություն կատարող յուրաքանչյուր պետություն կարող է հետագայում ցանկացած պահի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտագրի միջոցով հայտարարել, որ կոնվենցիան դադարում է կիրարկվել հայտագրում նշված տարածքում այդ հայտագիրը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրվանից մեկ տարի անցնելուց հետո:

### **Հոդված 39**

1. Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման կամ միացման մասին տասնհինգերորդ փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից տասներկու ամիս անցնելուց հետո:
2. Սույն կոնվենցիան վավերացնող կամ դրան միացող յուրաքանչյուր պետության նկատմամբ վավերացման կամ միացման մասին տասնհինգերորդ փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կողմից վավերացման



վկայագիրը կամ միացման մասին տասնհինգերորդ փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից տասներկու ամիս անցնելուց հետո:

#### **Հոդված 40**

Սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Պայմանավորվող կողմերի հարաբերություններում այն չեղյալ է դարձնում և փոխարինում է Ճանապարհային նշանների և ազդանշանների միօրինակություն մտցնելու մասին կոնվենցիան, որը բաց է ստորագրման համար Ժնևում 1931թ. մարտի 30-ից և Ճանապարհային նշանների ու ազդանշանների մասին արձանագրությունը՝ բաց ստորագրման համար Ժնևում 1949թ. սեպտեմբերի 19-ից:

*Հիշյալ փաստաթղթի ճշգրիտ անվանումը.*

Կոնվենցիա ճանապարհային ազդանշանային համակարգի միասնականացման մասին (Ժնև, 1931թ., մարտի 30)

#### **Հոդված 41**

1. Սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց մի տարի անց յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է կոնվենցիայի մեկ կամ մի քանի ուղղումներ առաջարկել: Առաջարկված ցանկացած ուղղումի բնագիրը բացատրական մեմորանդումի հետ միասին առաքվում է Գլխավոր քարտուղարին, որը ուղարկում է այն բոլոր Պայմանավորվող կողմերին: Պայմանավորվող կողմերը հնարավորություն ունեն այդ փաստաթուղթը առաքելու օրվանից հետո տասներկուամսյա ժամկետում ծանուցել այն մասին՝ ա) ընդունում են արդյոք ուղղումը, բ) մերժում են արդյոք ուղղումը կամ գ) ցանկանում են արդյոք, որպեսզի այդ ուղղումը քննարկելու համար խորհրդաժողով հրավիրվի: Գլխավոր քարտուղարը առաջարկված ուղղումի բնագիրը ուղարկում է նաև սույն կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետում նշված մյուս բոլոր պետություններին:

2. ա) Ցանկացած առաջարկված ուղղում՝ առաքված նախորդ կետի համաձայն, համարվում է ընդունված, եթե վերը նշված տասներկուամսյա ժամկետի ընթացքում Պայմանավորվող կողմերի նվազ քան մեկ երրորդը տեղեկացնում է Գլխավոր քարտուղարին այն մասին, որ իրենք մերժում են ուղղումը կամ ցանկանում են այդ ուղղումը քննարկելու համար խորհրդաժողով գումարել: Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին տեղյակ է պահում առաջարկված ուղղումի յուրաքանչյուր ընդունման կամ մերժման մասին և խորհրդաժողով գումարելու մասին յուրաքանչյուր դիմումի մասին: Եթե սահմանված տասներկուամսյա ժամկետում Պայմանավորվող կողմերի մեկ երրորդից պակաս կողմերից են նման մերժումներ կամ խնդրանքներ ստացվում, Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին տեղեկացնում է այն մասին, որ բոլոր Պայմանավորվող կողմերի համար, բացառությամբ նրանց, որոնք սահմանված ժամկետի ընթացքում մերժել են ուղղումը կամ դիմել են այն քննարկելու համար խորհրդաժողով գումարելու խնդրանքով, այդ ուղղումը ուժի մեջ է մտնում նախորդ կետում նշված տասներկուամսյա ժամկետը լրանալուց վեց ամիս հետո.

բ) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որը վերոհիշյալ տասներկուամսյա ժամկետի ընթացքում մերժել է առաջարկված ուղղումը կամ խնդրել է դրա քննարկման համար խորհրդաժողով գումարել, կարող է այդ ժամկետը լրանալուց հետո ցանկացած ժամանակ ծանուցել Գլխավոր քարտուղարին ուղղումն ընդունելու մասին, և Գլխավոր քարտուղարը այդ ծանուցագիրը առաքում է մնացած բոլոր Պայմանավորվող կողմերին: Ուղղումի ընդունման մասին նման ծանուցագրեր ուղարկված Պայմանավորվող կողմերի համար ուղղումը ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից դրանք ստանալուց վեց ամիս հետո:

3. Եթե առաջարկված ուղղումը չի ընդունվել սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, և եթե սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված տասներկուամսյա ժամկետի ընթացքում Պայմանավորվող կողմերի ընդհանուր թվի նվազ քան կեսը տեղեկացնում է Գլխավոր քարտուղարին այն մասին, որ մերժում է ուղղումը, և եթե բոլոր Պայմանավորվող կողմերի առնվազն մեկ երրորդը, բայց ոչ պակաս, քան մեկ տասներորդը, տեղեկացնում է այն մասին, որ ընդունում է այն կամ ցանկանում է խորհրդաժողով գումարել այդ ուղղումը

քննարկելու համար, Գլխավոր քարտուղարը խորհրդաժողով է գումարում առաջարկված ուղղումը կամ սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն իրեն ներկայացված ցանկացած առաջարկություն քննարկելու համար:

4. Եթե խորհրդաժողովը գումարվում է սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն, Գլխավոր քարտուղարը հրավիրում է մասնակցելու սույն կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետություններին: Գլխավոր քարտուղարը դիմում է խորհրդաժողովին հրավիրված բոլոր պետություններին՝ խնդրելով խորհրդաժողովից առնվազն վեց ամիս առաջ ներկայացնել ցանկացած առաջարկություն, որը ցանկալի է նրանց ի լրումն առաջարկված ուղղումի քննարկել խորհրդաժողովում, և այդ առաջարկությունների մասին խորհրդաժողովը սկսվելուց առնվազն երեք ամիս առաջ ծանուցում է խորհրդաժողովին հրավիրված բոլոր պետություններին:
5. ա) Սույն կոնվենցիայի ցանկացած ուղղում համարվում է ընդունված, եթե այն ընդունվում է խորհրդաժողովում ներկայացված պետությունների երկու երրորդի մեծամասնության կողմից, պայմանով, որ այդ մեծամասնությունը ընդգրկում է խորհրդաժողովին ներկա բոլոր Պայմանավորվող կողմերի առնվազն երկու երրորդը: Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին տեղյակ է պահում ուղղումն ընդունվելու մասին, և այն բոլոր Պայմանավորվող կողմերի համար ուժի մեջ է մտնում նման ծանուցագրից հետո տասներկու ամիս անցնելուց հետո, բացառությամբ այն Պայմանավորվող կողմերի, որոնք այդ ժամկետի ընթացքում հայտնում են Գլխավոր քարտուղարին ուղղումը մերժելու մասին.  
բ) վերոհիշյալ տասներկուամսյա ժամկետում ուղղումը մերժող յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ ծանուցել Գլխավոր քարտուղարին ուղղումը ընդունելու մասին, և Գլխավոր քարտուղարը տեղյակ է պահում այդ մասին մնացած բոլոր Պայմանավորվող կողմերին: Ուղղումը ընդունելու մասին ծանուցած Պայմանավորվող կողմի համար այն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումը ստանալուց վեց ամիս հետո կամ վերոհիշյալ տասներկուամսյա ժամկետը լրանալուց հետո, եթե այդ ժամկետը ավելի ուշ է լրանում:
6. Եթե առաջարկված ուղղումը սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն ընդունված չի համարվում, և եթե չեն ապահովվում խորհրդաժողով գումարելու պայմանները՝ նախատեսված սույն հոդվածի 3-րդ կետով, առաջարկված ուղղումը համարվում է մերժված:

#### **Հոդված 42**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր հայտագրի միջոցով չեղյալ հայտարարել սույն կոնվենցիան: Չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում այդ հայտագիրը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց մեկ տարի հետո:

#### **Հոդված 43**

Սույն կոնվենցիան կորցնում է ուժը, եթե Պայմանավորվող կողմերի թիվը տասներկու ամսին հաջորդող ցանկացած ժամանակամիջոցի ընթացքում հինգից պակաս է կազմում:

#### **Հոդված 44**

*Տես ԽՄՀՄ վերապահումը՝ արված սույն կոնվենցիան ստորագրելիս*

Երկու կամ մի քանի Պայմանավորվող կողմերի միջև ծագած վեճը սույն կոնվենցիայի կիրարկման կամ մեկնաբանման շուրջ, որը կողմերը չեն կարող լուծել բանակցությունների միջոցով կամ

կարգավորման այլ միջոցներով, կարող է ցանկացած շահագրգիռ Պայմանավորվող կողմի խնդրանքով հանձնվել Միջազգային դատարան:

#### Հոդված 45

Սույն կոնվենցիայի ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի իբրև խոչընդոտ որևէ Պայմանավորվող կողմի համար՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության հետ համատեղելի և ստեղծված դրությունը սահմանափակող միջոցներ ձեռնարկելու, որոնք նա անհրաժեշտ համարի իր արտաքին և ներքին անվտանգությունը ապահովելու համար:

#### Հոդված 46

1. Յուրաքանչյուր պետություն կարող է սույն կոնվենցիան ստորագրելիս կամ իր վավերացման վկայագիրը կամ միացման մասին փաստաթուղթը ի պահ հանձնելիս հայտարարել, որ իրեն կապված չի համարում սույն կոնվենցիայի 44-րդ հոդվածի հետ: Մյուս Պայմանավորվող կողմերը կապված չեն համարվում 44-րդ հոդվածին նման հայտարարություն անող ցանկացած Պայմանավորվող կողմի առնչությամբ:
2. ա) Իր վավերացման վկայագիրը կամ միացման մասին փաստաթուղթը ի պահ հանձնելու պահին յուրաքանչյուր պետություն Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտագրի միջոցով հայտարարում է այն մասին, թե՝
  - i) A (a ինդեքսով) կամ A (b ինդեքսով) տարատեսակներից որն է ընտրում որպես նախազգուշացնող նշան (9-րդ հոդված, 1-ին կետ),
  - ii) B,2 կամ B,2 (b ինդեքսով) տարատեսակներից որն է ընտրում որպես «Անցումն առանց կանգառի արգելված է» նշան (10-րդ հոդված, 3-րդ կետ) սույն կոնվենցիան կիրարկելու նպատակով:

Հետագայում ցանկացած պահի յուրաքանչյուր պետություն կարող է Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտագրի միջոցով փոփոխել իր ընտրությունը՝ իր հայտարարությունը փոխարինելով մի ուրիշով:

բ) Իր վավերացման վկայագիրը կամ միացման մասին փաստաթուղթը ի պահ հանձնելու պահին յուրաքանչյուր պետություն կարող է Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտագրի միջոցով հայտարարել, որ սույն կոնվենցիան կիրարկելու նպատակով կախովի շարժիչով հեծանիվը հավասարեցնում է մոտոցիկլետին (1-ին հոդված, «i» կետ):

Հետագայում ցանկացած պահի յուրաքանչյուր պետություն կարող է Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտագրի միջոցով հետ վերցնել իր հայտարարությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված հայտարարությունները ուժի մեջ են մտնում Գլխավոր քարտուղարի կողմից հայտագիրը ստանալուց վեց ամիս հետո կամ հայտարարություն արած պետության համար կոնվենցիան ուժի մեջ մտնելու պահին, եթե դա ավելի ուշ տարեթիվ է:
4. Սույն կոնվենցիայի և նրա հավելվածների վերապահումները, որոնք սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված վերապահումից տարբեր են, թույլատրվում են դրանք գրավոր ձևով ներկայացնելու պայմանով և եթե դրանք արվում են մինչև վավերացման վկայագիրը կամ միացման մասին փաստաթուղթը ի պահ հանձնելը, պայմանով, որ դրանք հաստատվեն վավերացման վկայագրում կամ միացման մասին փաստաթղթում: Գլխավոր քարտուղարը տեղեկացնում է նշված վերապահումների մասին սույն կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետություններին:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որը սույն հոդվածի 1-ին և 4-րդ կետերի համաձայն վերապահում կամ հայտարարություն է անում, կարող է ցանկացած պահի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտագրի միջոցով հետ վերցնել իր վերապահումը:

6. Սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան ցանկացած վերապահում՝

ա) վերոհիշյալ վերապահումը անող Պայմանավորվող կողմի համար տվյալ վերապահման շրջանակներում փոխում է կոնվենցիայի այն դրույթները, որոնք վերաբերում են դրան.

բ) նույն չափով փոխում է այդ դրույթները մյուս Պայմանավորվող կողմերի համար վերապահում անող Պայմանավորվող կողմի հետ փոխհարաբերություններում:

#### **Հոդված 47**

Սույն կոնվենցիայի 41-րդ և 46-րդ հոդվածներով նախատեսված հայտարարությունների, հայտագրերի և ծանուցագրերի հետ մեկտեղ Գլխավոր քարտուղարը 37-րդ հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետություններին տեղեկացնում է՝

ա) կոնվենցիայի ստորագրումների, վավերացումների և դրան միացումների մասին՝ համաձայն 37-րդ հոդվածի,

բ) հայտարարությունների մասին՝ համաձայն 38-րդ հոդվածի,

գ) սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարեթվերի մասին՝ համաձայն 39-րդ հոդվածի,

դ) սույն կոնվենցիայի ուղղումներն ուժի մեջ մտնելու տարեթվերի մասին՝ համաձայն 41-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի,

ե) չեղյալ հայտարարումների մասին՝ համաձայն 42-րդ հոդվածի,

զ) սույն կոնվենցիայի ուժը կորցնելու մասին՝ համաձայն 43-րդ հոդվածի:

#### **Հոդված 48**

Սույն կոնվենցիայի բնագիրը՝ կազմված անգլերենով, իսպաներենով, չինարենով, ռուսերենով և ֆրանսերենով մեկական օրինակից, ընդ որում բոլոր հինգ բնագրերը հավասարապես իսկական են համարվում, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը սահմանված կարգով հաստատված պատճենները առաքում է սույն կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետություններին:

Ի վավերացումն որի ներքոստորագրյալ ներկայացուցիչները՝ սահմանված կարգով լիազորված իրենց կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն կոնվենցիան:

Ի կատար է ածվել Վիեննայում հազար ինը հարյուր վաթսուցուհինգ թվականի նոյեմբեր ամսի ութերորդ օրը:

/ստորագրություններ/

Համաձայն սույն կոնվենցիայի 2-րդ հոդվածի, ներքոշարադրյալ հավելվածները նրա անքակտելի մասն են համարվում:

**Մանապարհային նշանների և ազդանշանների մասին կոնվենցիայի  
(Վիեննա, 1968թ., նոյեմբերի 8)**

**Հավելված 1**

**Նախազգուշացնող նշաններ՝ բացառությամբ խաչմերուկների կամ երկաթուղային  
գծանցների մոտ տեղադրված նշանների**

**Ծանոթություն:** Խաչմերուկների մոտ տեղադրված նախազգուշացնող նշանների մասին տես 2-րդ հավելվածի Բ բաժնում: Երկաթուղային գծանցների մոտ տեղադրված նախազգուշացնող նշանների մասին տես 3-րդ հավելվածի Ա և Գ բաժիններում:

**Բաժին Ա**

**Նախազգուշացնող նշանների տարատեսակներ**

Նախազգուշացնող նշանների տարատեսակներ են հանդիսանում A (a ինդեքսով) կամ A (b ինդեքսով) տարատեսակները: A տարատեսակը (a ինդեքսով) իրենից ներկայացնում է հավասարակողմ եռանկյունի, որի մի կողմը հորիզոնական է, իսկ դրան հակադիր գագաթը ուղղված է դեպի վեր. հիմնագույնը պետք է լինի սպիտակ կամ դեղին գույնի, եզրաշերտը՝ կարմիր: A (b ինդեքսով) տարատեսակը իրենից ներկայացնում է քառակուսի, որի անկյունագծերից մեկը ուղղահայաց է. հիմնագույնը պետք է դեղին գույնի լինի, երիզը, որը իրենից նեղ շերտ է ներկայացնում, սև գույնի: Այդ նշանների վրա պայմանանշանները (ուրիշ ցուցումների բացակայության դեպքում) պետք է լինեն սև կամ մուգ կապույտ գույնի:

A (a ինդեքսով) բնականոն չափսերի նշանների համար կողմի երկարությունը մոտավորապես կազմում է 0,9 մ (3 ֆուտ). A (a ինդեքսով) փոքր չափսերի նշանների համար՝ ոչ պակաս քան 0,6 մ (2 ֆուտ): A (b ինդեքսով) բնականոն չափսերի նշանների համար կողմի երկարությունը մոտավորապես կազմում է 0,6 մ (2 ֆուտ), A փոքր չափսերի նշանների համար՝ ոչ պակաս, քան 0,4 մ (1 ֆուտ 4 դյույմ):

A (a ինդեքսով) և A (b ինդեքսով) տարատեսակների ընտրության մասին տես կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետում և 9-րդ հոդվածի 1-ին կետում:

**Բաժին Բ**

**Նախազգուշացնող նշանների պայմանանշանները և ցուցումներ այդ նշանների օգտագործման մասին**

**1. Վտանգավոր շրջադարձ կամ վտանգավոր շրջադարձեր**

Վտանգավոր շրջադարձին կամ իրար հաջորդող շրջադարձերին մոտենալու մասին նախազգուշացնելու համար, պայմանավորված հանգամանքներով, օգտագործվում է հետևյալ նշաններից որևէ մեկը.

A, 1 (a ինդեքսով) ձախ շրջադարձ,

A, 1 (b ինդեքսով) աջ շրջադարձ,

A, 1 (c ինդեքսով) երկակի կամ ավելի քան երկու շրջադարձ՝ միմյանց հաջորդող, առաջին շրջադարձը՝ դեպի ձախ,

A, 1 (d ինդեքսով) երկակի կամ ավելի քան երկու շրջադարձ՝ միմյանց հաջորդող, առաջին շրջադարձը՝ դեպի աջ:

## **2. Կտրուկ վայրէջք**

Մեծ թեքությամբ վայրէջքին մոտենալը նախազգուշացնելու համար օգտագործվում է A (a ինդեքսով) նշանի տարատեսակի A, 2 (a ինդեքսով) պայմանանշանը և A (b ինդեքսով) նշանի տարատեսակի A, 2 (b ինդեքսով) պայմանանշանը:

A, 2 (a ինդեքսով) պայմանանշանի ձախ կողմը զբաղեցնում է ազդանշանային նշանի վահանակի ձախ անկյունը, իսկ դրա հիմքը՝ այդ վահանակի ամբողջ լայնությունը: A, 2 (a ինդեքսով) և A, 2 (b ինդեքսով) պայմանանշաններում թիվը ցույց է տալիս թեքությունը տոկոսներով. այդ ցուցումը կարող է փոխարինվել հարաբերությամբ (1:10):

Սակայն Պայմանավորվող կողմերը կարող են A, 2 (a ինդեքսով) կամ A, 2 (b ինդեքսով) պայմանանշանների փոխարեն (հնարավորության սահմաններում հաշվի առնելով, սակայն, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի դրույթները) ընտրել A, 2 (c ինդեքսով) պայմանանշանը, եթե նրանք ընդունել են A (a ինդեքսով) նշանի տարատեսակը, և A, 2 (d ինդեքսով) պայմանանշանը, եթե նրանք ընդունել են A (b ինդեքսով) նշանի տարատեսակը:

## **3. Կտրուկ վերելք**

Կտրուկ վերելքին մոտենալը նախազգուշացնելու համար օգտագործվում է A, 3 (a ինդեքսով) պայմանանշանը A (a ինդեքսով) նշանի տարատեսակի հետ և A, 3 պայմանանշանը A (b ինդեքսով) նշանի տարատեսակի հետ:

A, 3 (a ինդեքսով) պայմանանշանի աջ կողմը զբաղեցնում է ազդանշանային նշանի վահանակի աջ անկյունը, իսկ դրա հիմքը՝ այդ վահանակի ամբողջ լայնությունը: A, 3 (a ինդեքսով) և A, 3 (b ինդեքսով) պայմանանշաններում թիվը ցույց է տալիս վերելքը տոկոսներով. այդ ցուցումը կարող է փոխարինվել հարաբերությամբ (1:10):

Սակայն Պայմանավորվող կողմերը, որոնք կտրուկ վայրէջքի համար կընտրեն A, 2 (c ինդեքսով) պայմանանշանը, կարող են A, 3 (a ինդեքսով) պայմանանշանի փոխարեն ընտրել A, 3 (c ինդեքսով) պայմանանշանը, իսկ այն Պայմանավորվող կողմերը, որոնք կընտրեն A, 2 (d ինդեքսով) պայմանանշանը, կարող են A, 3 (b ինդեքսով) պայմանանշանի փոխարեն ընտրել A, 3 (d ինդեքսով) պայմանանշանը:

## **4. Ճանապարհի նեղացում**

Ճանապարհի նեղացմանը մոտենալը նախազգուշացնելու համար օգտագործվում է A, 4 (a ինդեքսով) պայմանանշանը կամ տվյալ վայրի կոնֆիգուրացիան առավել հստակ ցույց տվող պայմանանշանը, ինչպես օրինակ՝ A, 4 (b ինդեքսով):

## **5. Բացվող կամուրջ**

Բացվող կամուրջին մոտենալը նախազգուշացնելու համար օգտագործվում է A, 5 պայմանանշանը:

A,5 պայմանանշանով նախագուշացնող նշանի տակ կարող է տեղադրվել A, 29 (a ինդեքսով) տարատեսակի ուղղանկյուն ցուցանակ՝ նկարագրված 3-րդ հավելվածի Գ բաժնում, բայց այդ դեպքում A,5 պայմանանշանով նշանի և բացովի կամուրջի հեռավորության մոտավորապես մեկ երրորդում և երկու երրորդում տեղադրվում են A, 29 (b ինդեքսով) և A, 29 (c ինդեքսով) տարատեսակների ցուցանակներ՝ նկարագրված վերոհիշյալ հավելվածում:

#### **6. Ելք դեպի առափ կամ ափ**

Նախագուշացնելու համար, որ ճանապարհը տանում է առափ կամ ափ, օգտագործվում է A,6 պայմանանշանը:

#### **7. Անհարթ ճանապարհ**

Փոսերին, կորնթարդ կամուրջներին կամ թումբերին և կամ ճանապարհի վատ վիճակում գտնվող երթևեկելի հատվածներով վայրերին մոտենալը նախագուշացնելու համար օգտագործվում է A, 7 (a ինդեքսով) պայմանանշանը:

Կորնթարդ կամուրջները կամ թումբերը նշելու համար A, 7 (a ինդեքսով) պայմանանշանը կարող է փոխարինվել A, 7 (b ինդեքսով) պայմանանշանով: Փոսերը նշելու համար A, 7 (a ինդեքսով) պայմանանշանը կարող է փոխարինվել A, 7 (c ինդեքսով) պայմանանշանով:

#### **8. Սայթաքուն ճանապարհ**

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախագուշացնելու համար, ուր սայթաքելու հավանականությունը կարող է շատ մեծ լինել, օգտագործվում է A,8 պայմանանշանը:

#### **9. Մանրախճի արտանետում**

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախագուշացնելու համար, ուր կարող է մանրախճի արտանետում լինել, օգտագործվում է A,9 (a ինդեքսով) պայմանանշանը՝ A (a ինդեքսով) նշանի տարատեսակի հետ և A,9 (b ինդեքսով) պայմանանշանը՝ A (b ինդեքսով) նշանի տարատեսակի հետ:

Չախակողմյան շարժման դեպքում պայմանանշանն ուղղված է դեպի հակառակ կողմը:

#### **10.Քարերի անկում**

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախագուշացնելու համար, ուր քարերի անկման և դրա հետևանքով ճանապարհին քարեր լինելու վտանգ կա, օգտագործվում է A,10 (a ինդեքսով) պայմանանշան A (a ինդեքսով) նշանի տարատեսակի հետ և A,10 (b ինդեքսով) պայմանանշան՝ A (b ինդեքսով) նշանի տարատեսակի հետ:

Երկու դեպքում էլ պայմանանշանի աջ կողմը զբաղեցնում է ազդանշանային նշանի վահանակի աջ անկյունը:

Պայմանանշանը կարող է ուղղված լինել դեպի հակառակ կողմը:

#### **11. Հետիոտնային անցում**

Հետիոտնային անցումին մոտենալը նախազգուշացնելու համար, որը նշված է ճանապարհային գծանշումով կամ E, 11 (a ինդեքսով) կամ E, 11 նշանով, օգտագործվում է A,11 պայմանանշան, որը երկու տարատեսակ ունի՝ A,11 (a ինդեքսով) և A,11 (b ինդեքսով):

Պայմանանշանը կարող է ուղղված լինել դեպի հակառակ կողմը:

## **12. Երեխաներ**

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախազգուշացնելու համար, որով հաճախ են երեխաներ անցնում, օրինակ՝ ելքը դպրոցից կամ խաղահրապարակից, օգտագործվում է A,12 պայմանանշան: Պայմանանշանը կարող է ուղղված լինել դեպի հակառակ կողմը:

## **13. Հեծանվորդների ճանապարհ մտնելը**

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախազգուշացնելու համար, որով հաճախ են հեծանվորդներ ընթանում կամ այն հատում, օգտագործվում է A,13 պայմանանշանը: Պայմանանշանը կարող է ուղղված լինել դեպի հակառակ կողմը:

## **14. Անասուններ քշելու տեղը և այլ կենդանիների հայտնվելը**

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախազգուշացնելու համար, ուր վտանգ կա, որ կենդանիներ անցնեն, օգտագործվում է պայմանանշան՝ բաղկացած ամենից հաճախ հանդիպող ընտանի կամ վայրի կենդանու ուրվանկարից, ինչպես օրինակ՝

ընտանի կենդանու համար A,14 (a ինդեքսով) պայմանանշանը,

վայրի կենդանու համար՝ A,14 (b ինդեքսով):

Պայմանանշանը կարող է ուղղված լինել դեպի հակառակ կողմը:

## **15. Վերանորոգման աշխատանքներ**

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախազգուշացնելու համար, ուր ճանապարհային աշխատանքներ են տարվում, օգտագործվում է A,15 պայմանանշանը:

## **16. Լուսային ազդանշանային համակարգ**

Եթե անհրաժեշտ է համարվում նախազգուշացնել այն վայրին մոտենալը, որում երթևեկությունը կարգավորվում է եռագույն լույսերով, այն դեպքերում, երբ ճանապարհից օգտվողները չեն կարող կանխատեսել, որ մոտենում են մնան տեղի, օգտագործվում A,16 պայմանանշանը: A,16 պայմանանշանի երեք տարատեսակ գոյություն ունի՝ A,16 (a ինդեքսով), A,16 (b ինդեքսով) և A,16 (c ինդեքսով), որոնք համապատասխանում են եռագույն համակարգի լույսերի դասավորությանը՝ նկարագրված սույն կոմպլեքսի 23-րդ հոդվածի 4-6 կետերում: Այդ պայմանանշանը ներառում է երեք գույնի լույս, այսինքն՝ այն գույնի լույսերի, որոնց մոտենալն էլ այն նախազգուշացնում է:

## **17. Թռիչքա-վայրէջքային գոտի**

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախազգուշացնելու համար, որից վեր կարող են ոչ մեծ բարձրությամբ թռչող սարքեր թռչել՝ թռիչք կամ վայրէջք կատարելով թռիչքա-վայրէջքային գոտում, օգտագործվում է A, 17 պայմանանշանը: Պայմանանշանը կարող է ուղղված լինել դեպի հակառակ կողմը:



## 18. Կողային քամի

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախազգուշացնելու համար, ուր հաճախ է ուժեղ կողային քամի փչում, օգտագործվում է A,18 պայմանանշանը: Պայմանանշանը կարող է ուղղված լինել դեպի հակառակ կողմը:

## 19. Երկկողմանի երթևեկություն

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախազգուշացնելու համար, ուր ժամանակավոր կամ մշտական երկկողմանի երթևեկություն է տարվում մի երթևեկելի հատվածում, այն դեպքում, երբ նախորդ տեղամասում այն տարվել է միակողմանի երթևեկությամբ ճանապարհով կամ մի քանի երթևեկելի հատվածներով ճանապարհով՝ նախատեսված մի ուղղությամբ շարժման համար, օգտագործվում է A,19 պայմանանշանը:

Այդ պայմանանշանով նշանը պետք է կրկնվի տվյալ հատված մտնելիս և, բացի դրանից, տվյալ հատվածում այնքան հաճախ, որքան անհրաժեշտ կդիտվի: Չախակողմյան շարժման դեպքում սլաքները պետք է ուղղված լինեն դեպի հակառակ կողմը:

## 20. Այլ վտանգներ

Ճանապարհի այն հատվածին մոտենալը նախազգուշացնելու համար, ուր վերը 1-19 կետերում նշված կամ 2-րդ և 3-րդ հավելվածներում նշված պայմանանշաններով չնախատեսված վտանգ գոյություն ունի, կարող է օգտագործվել A, 20 պայմանանշանը:

Սակայն Պայմանավորվող կողմերը կարող են ընդունել կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի «ա» «ii» ենթակետի դրույթներին համապատասխան գրաֆիկական պայմանանշաններ:

A, 20 նշանը կարող է կիրառվել մասնավորապես երկաթուղու հատումը նախազգուշացնելու համար, որում երկաթուղային երթևեկությունը իրականացվում է շատ փոքր արագությամբ, իսկ ճանապարհային երթևեկությունը կարգավորվում է երկաթուղային փոխադրամիջոցներ ուղեկցող անձի կողմից, որը ձեռքով անհրաժեշտ ազդանշաններ է տալիս:

**Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին կոնվենցիայի (Վիեննա, 1968թ., նոյեմբերի 8)**

**Հավելված 2**

**Խաչմերուկներում անցումի առավելության իրավունքը կարգավորող նշաններ,**

**խաչմերուկների մոտ տեղադրվող նախազգուշացնող նշաններ և**

**ճանապարհների նեղ հատվածներում անցումի առավելության իրավունքը կարգավորող նշաններ**

**Ծանոթություն:** Եթե խաչմերուկում՝ գլխավոր ճանապարհին ընդգրկող, վերջինիս ուղղությունը փոխվում է, խաչմերուկին մոտենալը նախազգուշացնող նշանների կամ անցումի առավելության իրավունքը կարգավորող և խաչմերուկում կամ դրանից առաջ տեղադրված նշանների տակ կարող է ցուցանակ դրվել, որը խաչմերուկի սխեմայով ցույց տա գլխավոր ճանապարհի ուղղությունը:

## **Բաժին Ա**

### **Խաչմերուկներում անցումի առավելության իրավունքը կարգավորող նշաններ**

#### **1. «Գլխավոր ճանապարհի հատում» նշան**

«Գլխավոր ճանապարհի հատում» նշանը հանդիսանում է B,1-ը: Այն հավասարակողմ եռանկյան ձև ունի, որի մի կողմը հորիզոնական դիրքով է, իսկ դրա հակադիր գագաթը ուղղված է վար. հիմնագույնը պետք է լինի սպիտակ և դեղին գույնի, իսկ եզրաշերտը՝ կարմիր գույնի, նշանի վրա պայմանանշաններ չկան:

Բնականոն չափսի նշանների համար եռանկյան կողմի երկարությունը կազմում է մոտ 0,9 մ (3 ֆունտ), փոքր չափսի նշանների համար՝ 0,6 մ-ից (2 ֆունտից) ոչ պակաս:

#### **2. «Անցումն առանց կանգառի արգելված է» նշան**

«Անցումն առանց կանգառի արգելված է» նշանը հանդիսանում է B,2-ը, որ ընդգրկում է երկու տարատեսակ:

B,2 (a ինդեքսով) տարատեսակը պետք է լինի ութանկյուն՝ կարմիր հիմնագույնով, որի վրա սպիտակ տառերով անգլերեն կամ համապատասխան պետության լեզվով գրված լինի «Կա՛նգ» բառը: Բառի տառերի բարձրությունը պետք է հավասար լինի ցուցանակի բարձրության առնվազն մեկ երրորդին:

B,2 (b ինդեքսով) տարատեսակը պետք է լինի շրջանաձև՝ սպիտակ և դեղին հիմնագույնով. դրա ներսում տեղադրվում է B,1 նշանը՝ առանց գրառման, բացի դրանից, վերին մասում մեծ սև կամ կապույտ տառերով անգլերեն կամ համապատասխան պետության լեզվով գրված է «Կանգ» բառը:

B,2 (a ինդեքսով) բնականոն չափսի նշանի բարձրությունը և B,2 բնականոն չափսի նշանի տրամագիծը պետք է կազմեն մոտ 0,9 մ (3 ֆունտ), համապատասխանաբար փոքր չափսերի նշանների բարձրությունը և տրամագիծը պետք է լինեն ոչ պակաս, քան 0,6 մ (2 ֆունտ):

B,2 (a ինդեքսով) և B,2 (b ինդեքսով) նշանների միջև ընտրության վերաբերյալ տես կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետում և 10-րդ հոդվածի 3-րդ կետում:

#### **3. «Գլխավոր ճանապարհ» նշան**

«Գլխավոր ճանապարհ» նշանը հանդիսանում է B,3-ը: Այն քառակուսու ձև ունի, որի անկյունագծերից մեկը ուղղահայաց դիրք ունի. քառակուսին շրջանակված է սև երիզով. մեջտեղում տեղադրված է դեղին կամ նարնջագույն քառակուսի՝ սև երիզով. երկու քառակուսիների միջև տարածությունը պետք է սպիտակ գույնի լինի:

Բնականոն չափսերի նշանների համար քառակուսու կողմերի երկարությունը կազմում է մոտ 0,5 մ (1 ֆունտ 8 դյույմ), փոքր չափսերի նշանների համար՝ ոչ պակաս, քան 0,35 մ (1 ֆունտ 2 դյույմ):

#### **4. «Գլխավոր ճանապարհի վերջը» նշան**

«Գլխավոր ճանապարհի վերջը» նշանը հանդիսանում է B,4-ը: Այդ նշանը բաղկացած է վերը նկարագրված B,3 նշանից, որին ավելացված է սև կամ մոխրագույն կենտրոնական շերտ՝ ուղղահայաց քառակուսու ստորին ձախ կողմին և վերին աջ կողմին, կամ մի շարք սև կամ մոխրագույն գուգահեռ գծիկներ՝ ձևավորելով վերոհիշյալ շերտը:

## **Բաժին Բ**

### **Խաչմերուկների մոտ տեղադրվող նախազգուշացնող նշաններ**

#### **1. Նշաններ**

Խաչմերուկների մոտ տեղադրվող նախազգուշացնող նշանները պետք է համապատասխանեն A (a ինդեքսով) կամ A (b ինդեքսով) տարատեսակներին՝ նկարագրված 1-ին հավելվածի Ա բաժնում:

#### **2. Պայմանանշաններ**

Պայմանանշանները պետք սև կամ կապույտ լինեն:

ա) Այն պայմանանշանների առնչությամբ, որոնք դրվում են A (a ինդեքսով) կամ A (b ինդեքսով) նշանների վրա, տարբերում են հետևյալ դեպքերը.

- i) Խաչմերուկ, որով անցումի առավելության իրավունքը որոշվում է առավելության անցումի՝ պետությունում գործող համընդհանուր ընդունված կանոնով. օգտագործվում է A,21 (a ինդեքսով) պայմանանշանը A (a ինդեքսով) նշանի տարատեսակի հետև A,21 (b ինդեքսով) պայմանանշանը A (b ինդեքսով) նշանի տարատեսակի հետ:

A,21 (a ինդեքսով) և A,21 (b ինդեքսով) պայմանանշանները կարող են փոխարինվել խաչմերուկի բնույթն առավել հստակ ցույց տվող պայմանանշաններով, ինչպես օրինակ՝ A,21 (c ինդեքսով), A,21 (d ինդեքսով), A,21 (e ինդեքսով), A,21 և A,21 (g ինդեքսով):

- ii) Այն ճանապարհը հատելիս, որից օգտվողները պետք է զիջեն ճանապարհը, օգտագործվում է A,22 (a ինդեքսով) պայմանանշանը:

A,22 (a ինդեքսով) պայմանանշանը կարող է փոխարինվել խաչմերուկի բնույթն առավել հստակ ցույց տվող պայմանանշաններով, ինչպես օրինակ՝ A,22 (b ինդեքսով) և A,22 (c ինդեքսով): Այդ պայմանանշանները կարող են կիրառվել ճանապարհին միայն այն դեպքում, եթե ճանապարհին կամ ճանապարհներին, որոնց հետ նա ձևավորում է նշվող խաչմերուկը, տեղադրված է B,1 կամ B,2 նշանը, կամ եթե այդ ճանապարհների բնույթն այնպիսին է (օրինակ գյուղական կամ հողային ճանապարհները), որ ազգային օրենսդրությունից ելնելով՝ դրանցով գնացող վարորդները, անգամ այդ նշանների բացակայության դեպքում, պետք է խաչմերուկում զիջեն ճանապարհը: Այդ պայմանանշանների օգտագործումը այն ճանապարհներին, որտեղ տեղադրված է B,3 նշանը, կասեցնում և փակվելի որոշ բացառիկ դեպքերով:

- iii) Այն ճանապարհի հատումը, որից օգտվողները պետք է զիջեն ճանապարհը:

Եթե խաչմերուկում տեղադրված է «Գլխավոր ճանապարհի հատում» B,1 նշանը, ապա կիրառվում է A,23 պայմանանշանը:

Եթե խաչմերուկում տեղադրված է «Անցումն առանց կանգառի արգելված է» (B,2) նշանը, կիրառվում է A,24 (a ինդեքսով) և A,24 (b ինդեքսով) պայմանանշաններից այն, որը համապատասխանում է B,2 նշանի տարատեսակին:

Սակայն A (a ինդեքսով) ազդանշանային նշանի և իր պայմանանշանների փոխարեն կարող են կիրառվել B,1 կամ B,2 նշաններ՝ համապատասխան սույն կոմպենցիայի 10-րդ հոդվածի 6-րդ կետի:

iv) Շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկ. օգտագործվում է A,25 պայմանանշանը: Չախակողմյան երթևեկության դեպքում սլաքների ուղղությունը պետք է հետադարձ լինի:

բ) Այն դեպքերում, երբ երթևեկությունը խաչմերուկում կարգավորվում է լուսային ազդանշաններով, ի լրումն սույն Բ բաժնում նկարագրված նշանների, կարող է զետեղվել A (a ինդեքսով) և A (b ինդեքսով) նշան՝ 1-ին հավելվածի Բ բաժնում նկարագրված A,16 պայմանանշանով:

## **Բաժին Գ**

### **Ճանապարհների նեղ հատվածներում անցումի առավելության իրավունքը կարգավորող նշաններ**

#### **1. Հանդիպակաց փոխադրամիջոցին առաջնայնություն տվող նշան**

Եթե ճանապարհի նեղ հատվածում, ուր հանդիպակաց ընթացքը դժվար կամ անհնարին է, շարժումը կանոնակարգվում է, և եթե այդ կանոնակարգումը կատարվում է մի ուղղությամբ շարժմանը առաջնայնություն տալով, ոչ թե լուսային ճանապարհային ազդանշաններ տեղադրելով, քանի որ վարորդները հստակ կարող են տեսնել անցումը դրա ամբողջ երկարությամբ թե՛ ցերեկը և թե՛ գիշերը, B,5 «Առաջնայնություն հանդիպակաց փոխադրամիջոցին» նշանը տեղադրվում է դեմքով դեպի անցումի այն կողմի շարժմանը, որտեղ առաջնայնություն չկա: Այդ նշանը դեպի ճանապարհի նեղ հատված անցումի արգելք է ցույց է տալիս այնքան ժամանակ, քանի դեռ հնարավոր չէ անցնել այդ հատվածով՝ առանց հարկադրելու կանգ առնել հանդիպակաց փոխադրամիջոցների վարորդներին:

Այդ նշանը պետք է շրջանաձև լինի՝ սպիտակ կամ դեղին հիմնագույնով և կարմիր երիզով. այն ուղղություն նշանակող սլաքը, որով առաջնայնություն է տրվում, պետք է սև գույնի լինի, իսկ մյուս ուղղությունը նշանակող սլաքը՝ կարմիր գույնի:

Չախակողմյան երթևեկությամբ պետություններում սլաքների դասավորությունը հակառակը պետք է լինի:

#### **2. Հանդիպակաց փոխադրամիջոցի նկատմամբ առաջնայնություն տվող նշան**

Զգուշացնելու համար վարորդներին, որ ճանապարհի նեղ հատվածում նրանք օգտվում են հանդիպակաց փոխադրամիջոցի նկատմամբ առաջնայնությունից, օգտագործվում է B,6 նշանը:

Այդ նշանը ուղղանկյան ձև ունի՝ երկնագույն հիմնագույնով. դեպի վեր ուղղված սլաքը պետք է սպիտակ գույնի լինի, իսկ մյուսը՝ կարմիր:

Չախակողմյան շարժման դեպքում սլաքների դասավորությունը հակառակը պետք է լինի:

Երբ ճանապարհին օգտագործվում է B,6 նշանը, ճանապարհի նեղ հատվածի մյուս կողմում պարտադիր կարգով տեղադրվում է B,5 նշանը՝ նախատեսված հակառակ ուղղությամբ շարժվող փոխադրամիջոցների համար:

### **Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին կոնվենցիայի**

(Վիեննա, 1968թ., նոյեմբերի 8)

Հավելված 3

### **Երկաթուղային գծանցներին վերաբերող նշաններ**

#### **Բաժին Ա**

#### **Նախազգուշացնող նշաններ**

Տեղադրման ենթակա նշաններն են՝ A (a ինդեքսով) կամ A (b ինդեքսով), որոնք նկարագրված են 1-ին հավելվածի Ա բաժնում: Նշանի վրա գետեղվող պայմանանշանների առնչությամբ տարբերում են հետևյալ դեպքերը.

ա) Այն երկաթուղային գծանցները նշելու համար, որոնք ուղեփակոցներ կամ կիսատուղեփակոցներ ունեն՝ շախմատային կարգով դասավորված երկաթուղու յուրաքանչյուր կողմում, օգտագործվում է A,26 պայմանանշանը:

բ) Ուրիշ երկաթուղային գծանցներ նշելու համար օգտագործվում է A,27 պայմանանշանը, որը ներառում է երկու տարատեսակ՝ A,27 (a ինդեքսով) և A,27 (b ինդեքսով):

գ) Տրամվայի գծի հատումին մոտենալը նախազգուշացնելու համար և այն պայանով, որ այդ հատումը, համաձայն կոնվենցիայի 1-ին հոդվածի բովանդակված սահմանման, չի հանդիսանում երկաթուղային գծանց, կարող է օգտագործվել A,28 պայմանանշանը:

**Ծանոթություն:** Եթե անհրաժեշտ չի դիտվում նախազգուշացնել երկաթուղիներով ավտոճանապարհի հատմանը մոտենալը, որոնցով երկաթուղային երթևեկությունը իրականացվում է շատ փոքր արագությամբ, իսկ ճանապարհային երթևեկությունը կարգավորվում է երկաթուղային փոխադրամիջոցներն ուղեկցող անձի միջոցով, որը ձեռքով անհրաժեշտ ազդանշաններ է տալիս, օգտագործվում է A,20 նշանը՝ նկարագրված 1-ին հավելվածի Բ բաժնում:

#### **Բաժին Բ**

### **Երկաթուղային գծանցների անմիջական հարևանությամբ տեղադրված նշաններ**

B,7 նշանը, որի մասին խոսվում է սույն կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2-րդ կետում, երեք տարատեսակ ունի՝ B,7 (a ինդեքսով), B,7 (b ինդեքսով), B,7 (c ինդեքսով):

B,7 (a ինդեքսով) և B,7 (b ինդեքսով) տարատեսակները սպիտակ կամ դեղին հիմնագույն ունեն՝ կարմիր կամ սև եզրաշերտով. B,7 (c ինդեքսով) տարատեսակը սպիտակ կամ դեղին հիմնագույն ունի՝ սև եզրաշերտով. B,7 (c ինդեքսով) տարատեսակի վրա գրառումները կատարվում են սև տառերով: B,7 (b ինդեքսով) տարատեսակը օգտագործվում է, եթե ուղին առնվազն երկու երկաթուղագիծ ունի. B,7 (c ինդեքսով) տարատեսակի օգտագործման դեպքում լրացուցիչ ցուցանակը կիրառվում է միայն այն պարագայում, եթե ուղին առնվազն երկու երկաթուղագիծ ունի, և այդ դեպքում նրա վրա ցույց է տրվում դրանց քանակը: Խաչի սովորական երկարությունը չպետք է 1,2 մ-ից (4 ֆուտոսից) պակաս լինի: Բավականաչափ տարածության բացակայության դեպքում նշանը կարող է այնպես պատկերվել, որ դրա ծայրերը վերև և ներքև ուղղվեն:

#### **Բաժին Գ**

### **Երկաթուղային գծանցներին մոտ տեղադրված լրացուցիչ նշաններ**

35-րդ հոդվածի 3-րդ կետում հիշատակված վահանակներ են համարվում A,29 (a ինդեքսով), A,29 (b ինդեքսով) և A,29 (c ինդեքսով) նշանները: Շերտերի թեթույունն ուղղված է երթևեկելի հատվածին:

A,29 (b ինդեքսով) և A,29 (c ինդեքսով) նշանների տակ, ինչպես որ պետք է տեղադրել A,29 (a ինդեքսով) նշանի տակ, կարող է տեղադրվել երկաթուղային գծանցին մոտենալը նախազգուշացնող նշան:

**Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին կոնվենցիայի (Վիեննա, 1968թ., նոյեմբերի 8)**

#### **Հավելված 4**

**Պարտադիր պահանջներ ցույց տվող նշաններ՝ բացառությամբ անցումի, կանգառի և կայանումի առավելության իրավունքին վերաբերող նշանների**

**Ծանոթություն:** Անցումի առավելության իրավունքը կարգավորող նշանների վերաբերյալ տես 2-րդ հավելվածը. կանգառին և կայանումին վերաբերող նշանների վերաբերյալ տես 6-րդ հավելվածը:

#### **Բաժին Ա**

**Արգելող կամ սահմանափակող նշաններ**

##### **1. Նշանների և պայմանանշանների բնութագրերը**

ա) Արգելող կամ սահմանափակող նշանները պետք է շրջանաձև լինեն. դրանց տրամագիծը պետք է 0,6 մ-ից (2 ֆունտից) պակաս չլինի բնակելի կետերից դուրս և 0,4 մ-ից (16 դյույմից) պակաս չլինի բնակելի կետերում:

բ) Բացառությամբ այն շեղումների, որոնք նշված են ստորև տվյալ նշանի նկարագրության առնչությամբ, արգելող կամ սահմանափակող նշանները պետք է սպիտակ կամ դեղին հիմնագույն ունենան և լայն կարմիր երիզ, իսկ պայմանանշանները, ինչպես և գրառումները, եթե այդպիսիք կան, պետք է սև կամ կապույտ գույնի լինեն: Թեք շերտերը, եթե այդպիսիք կան, պետք է կարմիր գույնի լինեն և հատեն նշանը ձախից վար աջ:

##### **2. Նշանների նկարագրությունը**

ա) Երթևեկության արգելումը կամ սահմանափակումը

- i) Ցանկացած փոխադրամիջոցի մուտքը արգելելու համար օգտագործվում է C,1 «Մուտքն արգելված է» նշանը: Այդ նշանի երկու տարատեսակ կա՝ C,1 (a ինդեքսով) և C,1 (b ինդեքսով):
- ii) Բոլոր փոխադրամիջոցների՝ երկու ուղղություններով երթևեկության արգելումը ցույց տալու համար օգտագործվում է C,2 «Երթևեկությունը՝ երկու ուղղություններով, արգելված է» նշանը:

- iii) Միայն որոշ տեսակների փոխադրամիջոցների կամ ճանապարհից օգտվողների երթևեկությունը արգելելու համար օգտագործվում է մի նշան, որի պայմանանշանը բաղկացած է այն փոխադրամիջոցների կամ ճանապարհից օգտվողների ուրվանկարից, որոնց համար երթևեկությունն արգելված է: Նշված C,3 (a ինդեքսով), C,3 (b ինդեքսով), C,3 (c ինդեքսով), C,3 (d ինդեքսով), C,3 (e ինդեքսով), C,3 (f ինդեքսով), C,3 (g ինդեքսով), C,3 (h ինդեքսով), C,3 (j ինդեքսով) և C,3 (k ինդեքսով) նշաններն ունեն հետևյալ նշանակությունները:

**C,3 (a ինդեքսով)** - «Բոլոր մեխանիկական փոխադրամիջոցների երթևեկությունը, բացառությամբ առանց սայլակի երկանիվ մոտոցիկլետների, արգելված է»:

**C,3 (b ինդեքսով)** - «Մոտոցիկլետների երթևեկությունն արգելված է»:

**C,3 (c ինդեքսով)** - «Հեծանվային երթևեկությունն արգելված է»:

**C,3 (d ինդեքսով)** - «Կախովի շարժիչով հեծանիվների երթևեկությունն արգելված է»:

**C,3 (e ինդեքսով)** - «Բեռնատար երթևեկությունն արգելված է»:

Տոննայի թվի նշումը կա՛մ փոխադրամիջոցի ուրվանկարի վրա բաց գույնով, կա՛մ, կոնվենցիայի 8-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, C,3 (e ինդեքսով) նշանի տակ գետեղված լրացուցիչ ցուցանակի վրա նշանակում է, որ արգելքը կիրառվում է միայն այն դեպքում, երբ փոխադրամիջոցների կամ փոխադրամիջոցների շարժակազմի թույլատրելի առավելագույն քաշը գերազանցում է նշված թիվը:

**C,3 (f ինդեքսով)** - «Ցանկացած մեխանիկական փոխադրամիջոցի երթևեկությունը, որը կցասայլ է քարշակում, բացի կիսակցասայլից կամ միասունի կցասայլից, արգելված է»:

Տոննայի թվի նշումը կա՛մ կցասայլի ուրվանկարի վրա բաց գույնով, կա՛մ, սույն կոնվենցիայի 8-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, C,3 նշանի տակ գետեղված լրացուցիչ ցուցանակի վրա նշանակում է, որ արգելքը կիրառվում է միայն այն դեպքում, երբ կցասայլի թույլատրելի առավելագույն քաշը գերազանցում է նշված թիվը:

Պայմանավորվող կողմերը այն դեպքում, երբ նրանք նպատակահարմար համարեն, կարող են բեռնատար ավտոմեքենայի հետին մասի ուրվանկարը փոխարինել մարդատար ավտոմեքենայի հետին մասի ուրվանկարով, իսկ կցասայլի ուրվանկարը (այն տեսքով, ինչպես այն պատկերված է)՝ այն կցասայլի ուրվանկարով, որը կարող է կցվել նման ավտոմեքենային:

**C,3 (g ինդեքսով)** - «Հոտիոտների երթևեկությունն արգելված է»:

**C,3 (h ինդեքսով)** - «Լծասայլերի երթևեկությունն արգելված է»:

**C,3 (j ինդեքսով)** - «Ձեռնասայլակների երթևեկությունն արգելված է»:

**C,3 (k ինդեքսով)** - «Ինքնաշարժ գյուղատնտեսական փոխադրամիջոցների երթևեկությունն արգելված է»:

**Ծանոթություն:** Պայմանավորվող կողմերը կարող են որոշել C,3 (a ինդեքսով) - C,3 (k ինդեքսով) նշանների վրա ձախ վերին քառակուսին աջ ստորին քառակուսուն միացնող թեք կարմիր շերտ չգետեղել, կամ, եթե դա չի դժվարացնում պայմանանշանի տեսանելիությունը կամ ընկալումը, չընդհատել շերտը այդ պայմանանշանի մակարդակում:

- iv) Մի քանի տեսակի փոխադրամիջոցների կամ ճանապարհից օգտվողների երթևեկությունն արգելելու համար կարելի է օգտագործել կամ այնքան արգելող նշան, որքան արգելման կարգեր կան, կամ այնպիսի արգելող նշան, որի վրա պատկերված

են այն բոլոր փոխադրամիջոցների կամ ճանապարհից օգտվողների ուրվանկարները, որոնց երթևեկությունն արգելված է: Ստորև նշված C,4 (a ինդեքսով) «Մեխանիկական փոխադրամիջոցների երթևեկությունն արգելված է» և C,4 (b ինդեքսով) «Մեխանիկական փոխադրամիջոցների և լծասայլերի երթևեկությունն արգելված է» նշանները այդպիսի նշանի օրինակներ են հանդիսանում:

Բնակելի կետերից դուրս չի կարելի այնպիսի նշաններ տեղադրել, որոնց վրա երկուսից ավելի ուրվանկար կա, իսկ բնակելի կետերում չի կարելի տեղադրել այնպիսի նշաններ, որոնց վրա երեքից ավելի ուրվանկար կա:

- v) Այն փոխադրամիջոցների երթևեկության արգելումը ցույց տալու համար, որոնց քաշը կամ ծավալը գերազանցում են որոշակի սահմաններ, օգտագործվում են հետևյալ նշանները:

**C,5** - «Այն փոխադրամիջոցների երթևեկությունը, որոնց ծավալային լայնությունը գերազանցում է ... մ-ը (... ֆունտը), արգելվում է»:

**C,6** - «Այն փոխադրամիջոցների երթևեկությունը, որոնց ծավալային բարձրությունը գերազանցում է ... մ-ը (... ֆունտը), արգելվում է»:

**C,7** - «Այն փոխադրամիջոցների երթևեկությունը, որոնց քաշը՝ բեռան հետ, գերազանցում է ... տոննան, արգելվում է»:

**C,8** - «Այն փոխադրամիջոցների երթևեկությունը, որոնց սոնու ծանրաբեռնվածությունը գերազանցում է ... տոննան, արգելվում է»:

**C,9** - «Այն փոխադրամիջոցների կամ փոխադրամիջոցների շարժակազմի երթևեկությունը, որոնց երկարությունը ... մ-ից (ֆունտից) ավելի է, արգելվում է»:

- vi) Նշանի վրա ցույց տրված միջտարածությունը չպահպանող փոխադրամիջոցների երթևեկության արգելումը ցույց տալու համար օգտագործվում է **C,10** «Առանց միմյանցից առնվազն ... մետր (յարդ) միջտարածության պահպանման փոխադրամիջոցների երթևեկությունն արգելված է»:

## **բ) Շրջադարձի արգելումը**

Շրջադարձի (աջ կամ ձախ՝ կախված սլաքի ուղղությունից) արգելումը ցույց տալու համար օգտագործվում է C,11 (a ինդեքսով) «Ձախ շրջադարձն արգելված է» կամ C,11 (b ինդեքսով) «Աջ շրջադարձն արգելված է» նշանը:

## **գ) Հետադարձի արգելումը**

Հետադարձի արգելումը ցույց տալու համար օգտագործվում է C,12 «Հետադարձն արգելվում է» նշանը:

## **դ) Վազանցի արգելումը**

- i) Ցույց տալու համար, որ բացի վազանցին վերաբերող ընդհանուր պահանջներից՝ նախատեսված գոծող կանոններով, ճանապարհներին արգելվում է վազանցը բոլոր մեխանիկական փոխադրամիջոցներին, բացառությամբ երկանիվ հեծանիվների՝ կախովի շարժիչներով, և առանց սայլակի երկանիվ մոտոցիկլետների, օգտագործվում է C,11 (a ինդեքսով) «Վազանցն արգելված է» նշանը: Այդ նշանի երկու տարատեսակ կա՝ C,13 (aa ինդեքսով) և C,13 (ab ինդեքսով):



- ii) Ցույց տալու համար, որ վազանցն արգելվում է միայն բեռնատար փոխադրամիջոցներին, որոնց թույլատրելի առավելագույն քաշը գերազանցում է 3,5 տ (7 700 ֆունտը), օգտագործվում է C,13 (b ինդեքսով) «Բեռնատար փոխադրամիջոցներին վազանցն արգելված է» նշանը: Այդ նշանի երկու տարատեսակ գոյություն ունի՝ C,13 (ba ինդեքսով) և C,13 (bb ինդեքսով):
- iii) Չախակողմյան երթևեկության դեպքում C,13 (aa ինդեքսով) և C,13 (ba ինդեքսով) նշանների վրա ավոմոքենանների գույնը հարկ է համապատասխանաբար փոխել:

**ե) Արագության սահմանափակումը**

Արագության սահմանափակումը ցույց տալու համար օգտագործվում է C,14 «Առավելագույն արագություն՝ սահմանափակված նշված թվով» նշանը: Նշանի վրա նշված թիվը առավելագույն արագությունը ցույց է տալիս տվյալ պետության մեջ փոխադրամիջոցների արագությունը ցույց տվող առավել հաճախ օգտագործվող չափման միավորներով: Արագությունը նշանակող թվից հետո կամ դրա տակ կարող են ավելացվել, օրինակ, «կմ» (կիլոմետր) կամ «մղոն» պայմանանշանները:

Միայն այն փոխադրամիջոցների առնչությամբ կիրարկվող արագության սահմանափակման համար, որոնց առավելագույն թույլատրելի քաշը գերազանցում է որոշակի թիվը, այդ թվի նշումով գրառումը, կոնվենցիայի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, գետեղվում է լրացուցիչ ցուցանակի վրա՝ նշանի տակ:

**զ) Չայնային ազդանշանի արձակման արգելքը**

Չայնային ազդանշանի արձակման արգելքը ցույց տալու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է, ճանապարհատրանսպորտային պատահարներից խուսափելու համար, օգտագործվում է C,15 «Չայնային ազդանշանի արձակումն արգելված է» նշանը: Եթե այդ նշանը տեղադրված չէ բնակելի կետի մուտքի մոտ՝ բնակելի կետի անվանման կողքին կան անմիջապես այդ նշանից հետո, այն պետք է լրացվի 2 տարատեսակի ցուցանակով՝ նկարագրված 7-րդ հավելվածում, որի վրա ցույց է տրվում այն տարածությունը, որտեղ գործում է արգելքը:

Հանձնարարվում է այդ նշանը չտեղադրել բնակելի կետի մուտքի մոտ, եթե արգելքը տարածվում է բոլոր բնակելի կետերի վրա, և նախատեսել, որ բնակելի կետ մտնելիս անվանման ցուցիչ նշանը ցույց տա ճանապարհից օգտվողներին, որ սկսած այդ պահից՝ կիրառվում են տվյալ տարածքի բնակելի կետերում գործող երթևեկության կանոնները:

**է) Անցումն առանց կանգառի արգելված է**

Մաքսատան մերձավորությունը ցույց տալու համար, որտեղ կանգառը պարտադիր է, օգտագործվում է C,16 «Անցումն առանց կանգառի արգելված է» նշանը: Որպես շեղում կոնվենցիայի 8-րդ հոդվածի դրույթների՝ այդ նշանի վրա նշվում է «Մաքսատուն» բառը, ընդ որում գերադասելի է այն նշել երկու լեզվով: Այն Պայմանավորվող կողմերը, որոնք կօգտագործեն C,16 նշանը, պետք է ձգտեն տարածաշրջանային մակարդակում հասնել այն պայմանավորվածության, որ այդ բառը միևնույն լեզվով նշվի բոլոր տեղադրված նշանների վրա:

Այդ նշանը կարող է օգտագործվել նաև առանց կանգառի անցումի արգելման այլ դեպքերը նշելու համար, ընդ որում «Մաքսատուն» բառը փոխարինվում է կանգառի պատճառը ցույց տվող ուրիշ շատ կարճ գրառումով:

**ը) Արգելքի կամ սահմանափակումների վերջը ցույց տվող նշաններ**

- i) Այն տեղը ցույց տալու համար, որտեղ կորցնում են ուժը այն բոլոր արգելքները, որոնց շարժվող փոխադրամիջոցների վարորդները տեղյակ են դարձել արգելող նշանների շնորհիվ, օգտագործվում է C,17 (a ինդեքսով) «Շարժվող փոխադրամիջոցներին վերապահվող բոլոր տեղական բնույթի արգելքների վերջը» նշանը: Այդ նշանը պետք է շրջանաձև լինի՝ սպիտակ կամ դեղին հիմնագույնով, առանց ցանկապատի կամ նեղ սև երիզի, և աջ վերից ձախ վար թեքությամբ անկյունագծային շերտով, որը կարող է սև կամ մուգ մոխրագույն լինել կամ բաղկացած սև կամ մոխրագույն գուգահեռ գծերից:
- ii) Այն տեղը ցույց տալու համար, որտեղ կորցնում են ուժը արգելքները կամ սահմանափակումները՝ տեղեկացված շարժվող փոխադրամիջոցների վարորդներին արգելող կամ սահմանափակող նշանների շնորհիվ, օգտագործվում է C, 17 (b ինդեքսով) «Արագության սահմանափակման վերջը» կամ C, 17 (c ինդեքսով) «Վազանցի արգելման վերջը» նշանը: Այդ նշանները նման են C, 17 (a ինդեքսով) նշանին, բայց դրանց վրա, բացի դրանից, զետեղված է նաև այն արգելքի կամ սահմանափակման բաց մոխրագույն պայմանանշանը, որի ազդեցությունն ընդհատվում է:

Որպես շեղում կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներից՝ սույն «ը» ենթակետում նշված նշանները կարող են տեղադրվել արգելող կամ սահմանափակող նշանի հակառակ երեսին՝ նախատեսված հանդիպակաց ուղղությամբ փոխադրամիջոցի համար:

**Բաժին Բ**

**Թելադրող նշաններ**

**1. Նշանների և պայմանանշանների ընդհանուր բնութագիրը**

ա) Թելադրող նշանները պետք շրջանաձև լինեն. դրանց տրամագիծը չպետք է 0,6 մ-ից (2 ֆունտից) պակաս լինի բնակելի կետերից դուրս և 0,4 մ-ից (16 դյույմից) պակաս՝ բնակելի կետերում: Սակայն 0,3 մ-ից (12 դյույմից) ոչ պակաս տրամագծով նշանները կարող են օգտագործվել լուսային ճանապարհային ազդանշանների համադրությամբ կամ տեղադրվել անվտանգության կղզյակների ուղեայունների վրա:

բ) Այլ ցուցումների բացակայության դեպքում այդ նշանները պետք է երկնագույն լինեն, իսկ պայմանանշանները՝ սպիտակ կամ բաց գույնի, կամ, որպես հնարավոր տարբերակ, նշանները պետք է լինեն սպիտակ գույնի՝ կարմիր երիզով, իսկ պայմանանշանները պետք է սև գույնի լինեն:

**2. Նշանների նկարագրությունը**

**ա) պարտադիր ուղղություն**

Ցույց տալու համար, որ փոխադրամիջոցները պետք է հետևեն տվյալ ուղղությանը կամ միայն որոշակի ուղղությունների, օգտագործվում է D,1 «Պարտադիր ուղղություն» նշանի D,1 (a ինդեքսով) տարատեսակը, որում սլաքը կամ սլաքները ուղղված են համապատասխան ուղղությանը կամ համապատասխան ուղղություններին: Սակայն որպես շեղում սույն բաժնի 1-ին կետի դրույթներից՝ D,1 (a ինդեքսով) նշանի փոխարեն կարող է օգտագործվել D,1 (b ինդեքսով) նշանը: D,1 (b ինդեքսով) նշանը պետք է սև գույնի լինի՝ սպիտակ երիզով, և սպիտակ գույնի պայմանանշան ունենա:

**բ) Խոչընդոտի պարտադիր շրջանցում**

D, 2 «Խոչընդոտի պարտադիր շրջանցում» նշանը, որ, որպես շեղում կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներից, տեղադրվում է անվտանգության կոդակում կամ ճանապարհի որևէ խոչընդոտի առաջ, ցույց է տալիս, որ փոխադրամիջոցները պարտավոր են շրջանցել անվտանգության կոդակը կամ խոչընդոտը սլաքով ցույց տրվող կողմից:

#### **զ) Պարտադիր շրջանաձև շարժում**

D,3 «Պարտադիր շրջանաձև շարժում» նշանը ցույց է տալիս վարորդներին, որ նրանք պետք հետևեն շրջանաձև շարժմանը վերաբերող կանոններին:

Ձախակողմյան երթևեկության դեպքում սլաքները պետք է ուղղված լինեն դեպի հակառակ կողմը:

#### **դ) Պարտադիր հեծանվային արահետ**

D, 4 « Պարտադիր հեծանվային արահետ» նշանը ցույց է տալիս հեծանվորդներին, որ նրանք պարտավոր են օգտվել հեծանվային արահետից, որի սկզբում այն տեղադրված է և ցույց է տալիս ուրիշ փոխադրամիջոցների վարորդներին, որ նրանք իրավունք չունեն օգտվելու այդ արահետից: Սակայն կախովի շարժիչով հեծանիվների վարորդները նույնպես պարտավոր են օգտվել այդ արահետից, եթե դա նախատեսվում է ազգային օրենսդրությամբ կամ թելադրվում է լրացուցիչ ցուցանակով՝ որը բովանդակում է գրառում կամ C,3 (d ինդեքսով) նշանի պայմանանշան:

#### **ե) Պարտադիր հետիոտնային արահետ**

D,5 «Պարտադիր արահետ հետիոտների համար» նշանը ցույց է տալիս հետիոտներին, որ նրանք պարտավոր են օգտվել այն արահետից, որի սկզբում այն տեղադրված է, և ցույց է տալիս ճանապարհից ուրիշ օգտվողներին, որ նրանք իրավունք չունեն օգտվելու այդ արահետից:

#### **զ) Պարտադիր արահետ հեծյալների համար**

D,6 «Պարտադիր արահետ հեծյալների համար» նշանը ցույց է տալիս հեծյալներին, որ նրանք պարտավոր են օգտվել այն արահետից, որի սկզբում այն տեղադրված է, և ցույց է տալիս ճանապարհից ուրիշ օգտվողներին, որ նրանք իրավունք չունեն օգտվել այդ արահետից:

#### **է) Պարտադիր նվազագույն արագություն**

D,7 «Պարտադիր նվազագույն արագություն» նշանը ցույց է տալիս, որ այն ճանապարհով շարժվող փոխադրամիջոցները, որի սկզբում այն տեղադրված է, պետք է ընթանան առնվազն նշված արագությամբ. նշանի վրա նշված թիվը ցույց է տալիս այդ արագությունը տվյալ պետությունում փոխադրամիջոցների արագությունը ցույց տվող առավել հաճախ կիրառվող չափման միավորներով: Արագություն նշանակող թվից հետո կարող են ավելացվել, օրինակ, «կմ» (կիլոմետր) կամ «մղոն» պայմանանշանները:

#### **ը) Պարտադիր նվազագույն արագության վերջը**

D,8 «Պարտադիր նվազագույն արագության վերջը» նշանը ցույց է տալիս D,7 նշանով թելադրվող պարտադիր նվազագույն արագության ընդհատումը: D,8 նշանը նման է D,7 նշանին, բայց դրա վրա թեք կարմիր գիծ է քաշվում՝ աջ վերից ձախ վար:

#### **թ) Հակասահքային շղթաները պարտադիր են**

D,9 «Հակասահքային շղթաները պարտադիր են» նշանը ցույց է տալիս, որ այն ճանապարհով շարժվող փոխադրամիջոցները, որի սկզբում այն տեղադրված է, պարտավոր են առնվազն երկու առաջնային անիվների վրա հակասահքային շղթաներ ունենալ:

**Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին կոնվենցիայի  
(Վիեննա, 1968թ., նոյեմբերի 8)**

**Հավելված 5**

**Տեղեկատու-ցուցիչ նշաններ՝ բացառությամբ կայանմանը վերաբերող նշանների**

**Ծանոթություն:** Կայանմանը վերաբերող տեղեկատու-ցուցիչ նշանների վերաբերյալ տես 6-րդ հավելվածը:

**Ա-Ձ բաժինների նշանների և պայմանանշանների ընդհանուր բնութագրերը  
(Է բաժնի բնութագրերի և պայմանանշանների վերաբերյալ տես այդ բաժինը)**

1. Տեղեկատու-ցուցիչ նշանները սովորաբար ուղղանկյուն են լինում, սակայն ուղղության ցուցիչ նշանները կարող են երկարավուն, սլաքով ավարտվող ուղղանկյան ձև ունենալ, որի երկար կողմը հորիզոնական դիրքում է:
2. Տեղեկատու-ցուցիչ նշանների վրա գետեղվում են սպիտակ կամ բաց գույնի պայմանանշաններ կամ գրառումներ մուգ հիմնագույնի վրա կամ մուգ պայմանանշաններ կամ գրառումներ սպիտակ կամ բաց հիմնագույնի վրա. կարմիր գույնը կարող է օգտագործվել միայն բացառության կարգով և երբեք չպետք է գերակշռի:
- 3.

**Բաժին Ա**

**Ուղղությունների նախնական ցուցիչ նշաններ**

**1. Ընդհանուր դեպք**

E,1 (a ինդեքսով), E,1 (b ինդեքսով) և E,1 (c ինդեքսով) ուղղությունների նախնական ցուցիչ նշանների օրինակներ:

**2. Հատուկ դեպքեր**

ա) Ճանապարհի՝ փակուղի տանող ուղղության նախնական ցուցիչ նշանների օրինակներ՝ E, 2 (a ինդեքսով) և E, 2 (b ինդեքսով):

բ) E, 3՝ ուղղության նախնական ցուցիչ նշանների օրինակ այն երթուղու համար, որին պետք է հետևել, որպեսզի ձախ թեքվել, եթե ձախ շրջադարձը հաջորդ խաչմերուկում արգելված է:

գ) E,4՝ մի քանի գոտիներով ճանապարհի խաչմերուկներում շարքերի նախնական վերադասավորման նշանի օրինակ:

**Բաժին Բ**

**Ուղղությունների ցուցիչ նշաններ**

1. Գեալի բնակելի կետեր ուղղություններ ցույց տվող նշանների օրինակներ՝ E,5 (a ինդեքսով), E,5 (b ինդեքսով), E,5 (c ինդեքսով) և E,5 (d ինդեքսով):
2. Գեալի օդանավակայան ուղղություն ցույց տվող նշանների օրինակներ՝ E, 6 (a ինդեքսով), E,6 (b ինդեքսով) և E,6 (c ինդեքսով):
3. E, 7 նշանը ցույց է տալիս ավտոգրոսաշրջիկների ճամբարի ուղղությունը:
4. E,8 նշանը ցույց է տալիս երիտասարդական տուրիստական հենակետի ուղղությունը:

## **Բաժին Գ**

### **Անվանումների ցուցիչ նշաններ**

Այդ նշանը ձևավորող ուղղանկյան երկար կողմը հորիզոնական դիրքում է:

1. Բնակելի կետի սկիզբը ցույց տվող նշանի օրինակներ՝ E, 9 (a ինդեքսով), E,9 (b ինդեքսով):
2. Բնակելի կետի վերջը ցույց տվող նշանների օրինակներ՝ E,9 (c ինդեքսով) և E,9 (d ինդեքսով):

Որպես շեղում կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներից, այդ նշանները կարող են զետեղվել բնակելի կետերի անվանումների ցուցիչ նշանների հակառակ երեսին:

## **Բաժին Դ**

### **Հաստատող նշաններ**

E, 10 նշանը հաստատող նշանի օրինակ է:

Որպես շեղում կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներից, այդ նշանը կարող է զետեղվել ուրիշ նշանի հակառակ երեսին, որը նախատեսված է հանդիպակաց ուղղությամբ շարժվող փոխադրամիջոցների համար:

## **Բաժին Ե**

### **Հետիոտնային անցում**

E, 11 (a ինդեքսով) «Հետիոտնային անցում» նշանը օգտագործվում է հետիոտներին ու վարորդներին ցույց տալու համար այն տեղը, որտեղ գտնվում է հետիոտնային անցումը:

Երկնագույն կամ սև գույնի վահանակ՝ սպիտակ կամ դեղին գույնի եռնակյունով, սև կամ կապույտ պայմանանշանով. օգտագործվում է A,11 պայմանանշանը:

Սակայն կարելի է նաև օգտագործել E,11 (b ինդեքսով) նշանը, որը անկանոն հնգանկյան ձև ունի՝ երկնագույն հիմնագույնով և սպիտակ պայմանանշանով:

## **Բաժին Զ**

### **Փոխադրամիջոցների վարորդներին օգտակար ցուցումներ տվող այլ նշաններ**

Այդ նշանները պետք է երկնագույն հիմնագույն ունենան:

### **1. «Հիվանդանոց» նշանը**

Այդ նշանն օգտագործվում է փոխադրամիջոցների վարորդներին ցույց տալու համար զգուշավորության միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը, որ պահանջում է բուժական հիմնարկների մոտիկությունը, և մասնավորապես հնարավորինս աղմուկից խուսափելու անհրաժեշտությունը: Այդ E,12 (a ինդեքսով) և E,12 (b ինդեքսով) նշանների երկու տարատեսակ կա:

E,12 (b ինդեքսով) նշանի վրա պատկերված կարմիր խաչը կարող է փոխարինվել է բաժնի 2-րդ կետի «ա» ենթակետում նշված պայմանանշաններից որևէ մեկով:

### **2. «Միակողմանի երթևեկությանը ճանապարհ» նշանը**

Երբ անհրաժեշտ է դիտվում հաստատել ճանապարհից օգտվողների համար, որ նրանք միակողմանի երթևեկությանը ճանապարհին են, կարող են երկու տարբեր «Միակողմանի երթևեկությանը ճանապարհ» նշաններ տեղադրվել:

ա) E,13 (a ինդեքսով) նշան, որ տեղադրվում է առավել կամ պակաս ուղղահայաց ճանապարհի երթևեկելի հատվածի առանցքին. նշանի վահանակը պետք է քառակուսի լինի:

բ) E,13 (b ինդեքսով) նշան, որ տեղադրվում է գրեթե զուգահեռ ճանապարհի երթևեկելի հատվածի առանցքին. նշանի վահանակը իրենից երկարավուն ուղղանկյուն է ներկայացնում, որի երկար կողմը հորիզոնական դիրքում է: E,13 (b ինդեքսով) նշանի սլաքի վրա կարող է ազգային լեզվով կամ պետության ազգային լեզուներից որևէ մեկով գրվել «Միակողմանի երթևեկություն»:

E,13 (a ինդեքսով) և E,13 (b ինդեքսով) նշանները կարող են տեղադրվել անկախ այն հանգամանքից՝ մինչև փողոց մտնելը տեղադրված եղե՞լ են արգելող կամ թելադրող նշաններ:

### **3. «Ճանապարհը փակուղի է տանում» նշանը**

E,14 «Ճանապարհը փակուղի է տանում» նշանը՝ տեղադրված ճանապարհի մտնելու տեղում, ցույց է տալիս, որ ճանապարհը փակուղի է տանում:

### **4. Ավտոմայրուղի մտնելը կամ ավտոմայրուղուց դուրս գալը նախազգուշացնող նշաններ**

E,15 «Ավտոմայրուղի» նշանը պետք է տեղադրվի այն տեղում, որտեղից սկսած կիրառվում են ավտոմայրուղիների երթևեկության հատուկ կանոնները: E,16 «Ավտոմայրուղու վերջը» նշանը պետք է տեղադրվի այն տեղում, որտեղ դադարում են կիրառվել նշված կանոնները:

E,16 նշանը կարելի է նաև օգտագործել և կրկնել ավտոմայրուղու վերջին մոտենալը նախազգուշացնելու համար. այդ կերպ տեղադրված յուրաքանչյուր նշանի ստորին մասում ցույց է տրվում նշանի և ավտոմայրուղու վերջի միջև հեռավորությունը:

### **5. Նշաններ, որոնք նախազգուշացնում են այն ճանապարհ մտնելը կամ դրանից դուրս գալը, որում գործում են ավտոմայրուղիներում կիրառվող երթևեկության կանոնները**

E,17 «Ավտոմայրուղու ճանապարհ» նշանը պետք է տեղադրվի այն տեղում, որտեղից սկսած կիրառվում են ավտոմայրուղիներից տարբեր այն ճանապարհների երթևեկության հատուկ կանոնները, որոնք նախատեսված են ավտոմեքենաների երթևեկության համար և չեն սպասարկում ճանապարհամերձ սեփականություններին: Լրացուցիչ ցուցանակի վրա՝ զետեղված E,17 նշանի

տակ, կարող է ցույց տրվել, որ շեղվելով կանոներից՝ մուտքը ճանապարհամերձ սեփականություններ թույլատրվում է:

E,18 «Ավտոճանապարհի վերջը» նշանը կարելի է նաև օգտագործել և կրկնել ավտոճանապարհի վերջին մոտենալը նախագուշացնելու համար. այդ կերպ տեղադրված յուրաքանչյուր նշանի ստորին մասում ցույց է տրվում նշանի և ավտոճանապարհի վերջի միջև հեռավորությունը:

## **6. Ավտոբուսի կամ տրամվայի կանգառ նշանակող նշաններ**

E,19՝ «Ավտոբուսի կանգառ», E,20 «Տրամվայի կանգառ»:

## **7. «Ճանապարհից օգտվելու հնարավորություն» նշանը**

E,21 «Ճանապարհից օգտվելու հնարավորություն» նշանը տեղադրվում է ցույց տալու համար՝ լեռնային ճանապարհը, մասնավորապես ոլորաններով անցնող, բաց է, թե փակ. այն տեղադրվում է ճանապարհ մտնելիս կամ այն ճանապարհին, որը տանում է դեպի տվյալ անցումը:

Անցումի (լեռնանցքի) անունը գետեղվում է սպիտակ տառերով: Նշանի վրա «Furka» անունը դրված է որպես օրինակ:

1,2 և 3 ցուցանակները հանովի են:

Եթե անցումը փակ է, կիրառվում է կարմիր գույնի 1 ցուցանակը՝ «Փակ» է գրառումով, եթե անցումը բաց է, կիրառվում է կանաչ գույնի ցուցանակը՝ «Բաց է» գրառումով: Գրառումները գետեղվում են սպիտակ ներկով և գերադասելի է՝ մի քանի լեզուներով:

2 և 3 ցուցանակները սպիտակ հիմնագույնով են՝ սև գույնի գրառումներով և պայմանանշաններով:

Եթե լեռնանցքը բաց է, 3 ցուցանակի վրա ոչ մի ցուցում չկա, իսկ 2 ցուցանակի վրա, կախված ճանապարհի վիճակից, կա՛մ ոչ մի ցուցում չկա, կա՛մ պատկերված է D,9 «Հակասահքային շղթաները պարտադիր են» նշանը, կա՛մ գետեղված է E,22 պայմանանշանը, որ նշանակում է «Խորհուրդ է տրվում հակասահքային շղթաներ կամ ձմեռային դողեր կիրառել»: Այդ պայմանանշանը պետք է սև գույնի լինի:

Եթե անցումը փակ է, 3 ցուցանակի վրա ցույց է տրվում այն բնակելի կետի անվանումը, մինչև որը ճանապարհը բաց է, իսկ 2 ցուցանակի վրա, կախված ճանապարհի վիճակից, կա՛մ գետեղվում է «Բաց է մինչև» գրառումը, կամ E,22 պայմանանշանը, կա՛մ D,9 նշանը:

## **Բաժին Է**

**Այնպիսի օբյեկտներ մատնանշող նշաններ, որոնք օգտակար կարող են լինել ճանապարհներից օգտվողների համար**

### **1. Բաժնի նշանների և պայմանանշանների բնութագրերը**

ա) F նշանները պետք երկնագույն կամ կանաչ գույն ունենան. դրանց վրա պատկերված է սպիտակ կամ դեղին ուղղանկյուն, որի վրա պայմանանշան է գետեղված:

բ) Երկնագույն կամ կանաչ շերտի վրա՝ նշանի ստորին մասում, կարող է սպիտակ թվերով ցույց տրվել մինչև նշվող տեղակայանքի կամ մինչ դեպի դա տանող ճանապարհի մուտքի հեռավորությունը: F,5 պայմանանշանով նշանի վրա կարող է նույն կերպ գետեղվել «Հյուրանոց կամ մոթել» գրառումը: Նշանները կարող են նաև տեղադրվել այն ճանապարհը մուտքի մոտ, որը տանում է դեպի այդ տեղակայանքը և այդ երկնագույն կամ կանաչ շերտի վրա՝ նշանի ստորին մասում, կարող է գետեղվել սպիտակ ուղղորդող սլաք: Պայմանանշանը պետք է սև կամ մուգ

կապույտ գույնի լինի՝ բացառությամբ F,1 (a ինդեքսով), F,1 (b ինդեքսով) և F,1 (c ինդեքսով) պայմանանշանների, որոնք պետք է կարմիր գույնի լինեն:

## **2. Պայմանանշանների նկարագրությունը**

ա) «Բուժօգնության կետ» պայմանանշանը

Բուժօգնության կետերը ցույց տալու համար օգտագործվում են համապատասխան պետություններում կիրառվող պայմանանշանները: Այդ պայմանանշանները պետք է կարմիր գույնի լինեն: Այդ պայմանանշանների տարատեսակներ են՝ F,1 (a ինդեքսով), F,1 (b ինդեքսով) և F,1 (c ինդեքսով):

բ) Ուրիշ պայմանանշաններ

F,2 «Տեխասպասարկման կետ»

F,3 «Հեռախոս»

F,4 «Ավտոլցավորման կայան»

F,5 «Հյուրանոց կամ մոթել»

F,6 «Ռեստորան»

F,7 «Բուֆետ կամ սրճարան»

F,8 «Տեղամաս պիկնիկի համար»

F,9 «Տեղամաս հետիոտնային երթուղիների սկզբնական կետերի համար»

F,10 «Ավտոգրոսաշրջիկների ճամբար (քեմպինգ)»

F,11 «Կայանատեղ քեմպինգի կցասայլերի համար»

F, 12 «Տեղամաս ավտոգրոսաշրջիկների ճամբարի համար և քեմպինգի կցասայլերի կայանատեղ»

F, 13 «Երիտասարդական տուրիստական հենակետ»

**Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին կոնվենցիայի  
(Վիեննա, 1968թ., նոյեմբերի 8)**

**Հավելված 6**

**Կանգառին և կայանումին վերաբերող նշաններ**

**Բաժին Ա**

**Կանգառը և կայանումը սահմանափակող նշաններ**

**Նշանների և պայմանանշանների ընդհանուր բնութագրեր**



Այդ նշանները պետք է շրջանաձև լինեն. դրանց տրամագիծը չպետք է 0,6 մ-ից (2 ֆունտից) պակաս լինի բնակելի կետերից դուրս և 0,25 մ-ից (10 դյույմից) պակաս՝ բնակելի կետերում: Սույն հավելվածում ուրիշ ցուցումների բացակայության դեպքում դրանց հիմնագույնը պետք երկնագույն լինի, իսկ երիզը և թեք շերտերը՝ կարմիր:

### **Նշանների նկարագրությունը**

1. ա) Յույց տալու համար այն տեղերը, որտեղ կայանելն արգելված է, օգտագործվում է C,18 «Կայանելն արգելված է» նշանը: Յույց տալու համար այն տեղերը, որտեղ կանգառը և կայանելն արգելված են, օգտագործվում է C,19 «Կանգառը և կայանելն արգելված են» նշանը:

բ) C,18 նշանը կարող է փոխարինվել շրջանաձև, կարմիր երիզով և կարմիր երկայնակի շերտով նշանով, որի սպիտակ կամ դեղին հիմնագույնի վրա սև ներկով պատկերված է P տառը կամ գաղափարագիր, որը տվյալ պետությունում կիրառվում է «Կայանում» նշանակելու համար:

գ) Նշանի տակ գետեղվող լրացուցիչ ցուցանակի գրառումները, կախված հանգամանքներից, կարող են սահմանափակել արգելքը կամ ցույց տալ՝

- i) շաբաթվա կամ ամսվա այն օրերը կամ օրվա ժամանակը, երբ գործում է արգելքը,
- ii) այն ժամանակը, որից հետո C,18 նշանը արգելում է կայանելը, կամ այն ժամանակը, որից հետո C,19 նշանը արգելում է կանգառն ու կայանելը,
- iii) ճանապարհից օգտվողների որոշ կարգերին վերաբերող բացառություններ:

դ) Գրառումները կայանման կամ կանգառի տևողության վերաբերյալ, որի գերազանցումը արգելվում է, կարող են գետեղվել ոչ թե լրացուցիչ ցուցանակի վրա, այլ նշանի կարմիր շրջանի ստորին մասում:

2. ա) Երբ կայանելը թույլատրված է ճանապարհի մեկ մի, մեկ մյուս կողմում, C,18 նշանի փոխարեն օգտագործվում են C,20 (a ինդեքսով) կամ C,20 (b ինդեքսով) «Փոփոխական կայանում» նշանները:

բ) Կայանման արգելքը C, 20 (a ինդեքսով) նշանի կողմից կիրառվում է կենտ օրերին և C, 20 (b ինդեքսով) նշանի կողմից՝ գույգ օրերին, ընդ որում կողմի փոփոխման ժամը որոշվում է ազգային օրենսդրությամբ, և պարտադիր չէ, որ այն կեսգիշեր լինի: Ազգային օրենսդրությունը կարող է որոշել նաև ոչ ամենօրյա կայանումի հերթագայության պարբերականությունը. այդ դեպքում I և II թվերը նշանի վրա փոխարինվում են հերթագայության փուլերը ցույց տվող տարեթվերով, օրինակ՝ 1-15 և 16-31 ամեն ամսվա 1-ից և 16-ից հերթագայության համար:

գ) C,18 նշանը՝ սույն կոնվենցիայի 8-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներին համապատասխան լրացուցիչ գրառումներով, կարող է օգտագործվել այն պետությունների կողմից, որոնք չեն կիրառում C,19, C,20 (a ինդեքսով) և C,20 (b ինդեքսով) նշանները:

3. ա) Բացառությամբ հատուկ դեպքերի, նշանները տեղադրվում են այնպես, որ դրանց սկավառակը ուղղահայաց լինի ճանապարհի առանցքին կամ թեթևակի թեքված լինի դեպի այդ առանցքին ուղղահայաց մակարդակը:

բ) Կայանման բոլոր արգելքները և սահմանափակումները կիրառվում են միայն ճանապարհի այն կողմում, որտեղ տեղադրված են նշանները:

գ) Ուրիշ ցուցումների բացակայության դեպքում, որոնք կարող են տրվել կա՛մ լրացուցիչ ցուցանակի վրա՝ համապատասխան 7-րդ հավելվածի 2-րդ տարատեսակին, որում ցույց է

տրվում այն տարածությունը, որի սահմաններում կիրառվում է արգելքը, կամ սույն կետի «ե» ենթակետում բովանդակող պահանջներին համապատասխան, արգելքները կիրառվում են նշանից սկսած մինչև ճանապարհի մոտակա ելքը:

դ) Այն տեղում տեղադրված նշանի տակ, որտեղից սկսում է կիրառվել արգելքը, կարող է զետեղվել լրացուցիչ ցուցանակ՝ 7-րդ հավելվածում հիշատակված 3 (ա ինդեքսով) կամ 4 (ա ինդեքսով) տարատեսակին համապատասխան: Արգելքը կրկնող նշանների տակ կարող է զետեղվել լրացուցիչ ցուցանակ՝ 7-րդ հավելվածում հիշատակված 3 (բ ինդեքսով) կամ 4 (բ ինդեքսով) տարատեսակին համապատասխան: Այն տեղում, որտեղ արգելքը դադարում է, կարող է տեղադրվել ևս մի արգելող նշան՝ լրացուցիչ ցուցանակով՝ 7-րդ հավելվածում հիշատակված 3 (c ինդեքսով) և 4 (c ինդեքսով) տարատեսակին համապատասխան: 3 տարատեսակի ցուցանակները զետեղվում են ճանապարհի առանցքին զուգահեռ, իսկ 4 տարատեսակի ցուցանակները՝ ուղղահայաց այդ առանցքին: Եթե 3 տարատեսակի ցուցանակների վրա տարածություններ են ցույց տրված, դրանք այն տարածություններն են, որոնցում կիրառվում է արգելքը սլաքով ցույց տրվող ուղղությամբ:

ե) Եթե արգելքի ազդեցությունը ընդհատվում է մինչև ճանապարհի մոտակա ելքը, տեղադրվում է վերը «դ» ենթակետում նկարագրված նշանը՝ լրացուցիչ ցուցանակով, որի վրա ցույց է տրվում արգելքի վերջը: Սակայն երբ արգելքը կիրառվում է միայն կարճ տարածությունում, կարող է տեղադրվել միայն մեկ նշան՝ բաղկացած կամ կարմիր գույնի շրջանից՝ այն տարածության ցուցումով, որի սահմաններում կիրառվում է տվյալ արգելքը, կամ լրացուցիչ 3 տարատեսակի լրացուցիչ ցուցանակից:

զ) Կայանաչափերով (պարկոմետր) սարքավորված տեղերում այդ կայանաչափերի առկայությունը նշանակում է, որ կայանումը վճարովի է, և դրա տևողությունը սահմանափակվում է թույլտված մեխանիզմի աշխատանքի ժամանակով:

է) Սահմանափակ, բայց ոչ վճարովի կայանումների գոտիներում կայանման այդ սահմանափակումը կարող է նշվել ոչ թե C,18 նշաններով՝ լրացուցիչ վահանակով, այլ կապույտ շերտով՝ զետեղված ճանապարհի երկարությամբ դասավորված մոտ 2 մ բարձրությամբ լուսավորման սյուների վրա, ծառերին և այլն, կամ երթևեկելի հատվածի եզրաքարերի վրա ներկված շերտերով:

4. Յուրյց տալու համար բնակելի կետերում այն գոտու մուտքը, որտեղ կայանման տևողությունը սահմանափակ է, անկախ այն հանգամանքից՝ այն վճարովի է, թե անվճար, կարող է տեղադրվել C,21 «Սահմանափակ կայանման գոտի» նշանը:

Այդ նշանի հիմնագույնը, որի վրա զետեղվում է C,18 նշանը, պետք է բաց գույնի լինի:

C,18 նշանը կարող է փոխարինվել E,23 նշանով. այդ դեպքում նշանի հիմնագույնը կարող է երկնագույն լինել:

Ցուցանակի ստորին մասում կարող է լրացուցիչ պատկերվել կայանային սկավառակ կամ կայանչափ՝ տվյալ գոտում կայանումի սահմանափակման պայմանները ցույց տալու համար:

Համապատասխան դեպքերում բուն նշանի կամ C,21 նշանի տակ զետեղված լրացուցիչ ցուցանակի վրա ցույց են տրվում այն օրերն ու օրվա ժամերը, որոնց ընթացքում գործում է սահմանափակումը, և այդ սահմանափակման պայմանները:

## **Բաժին Բ**

### **Կայանումին վերաբերող օգտակար ցուցումներ տվող նշաններ**

#### **1. «Կայանատեղ» նշանը**

E,23 «Կայանատեղ» նշանը, որը կարող է տեղադրվել ճանապարհի առանցքին զուգահեռ, ցույց է տալիս այն տեղերը, որտեղ թույլատրվում է փոխադրամիջոցների կայանումը: Վահանակը քառակուսու ձև ունի: Նրա վրա տառ կամ գաղափագիր է գետեղվում, որը օգտագործվում է համապատասխան պետության մեջ կայանումը ցույց տալու համար: Այդ նշանը երկնագույն հիմնագույն ունի:

Լրացուցիչ վահանակի վրա, որը գետեղվում է նշանի տակ կամ բուն նշանի վրա, կարող են պայմանանշաններ կամ գրառումներ լինել, որոնք ցույց են տալիս կայանատեղ տանող ուղղությունը կամ այն փոխադրամիջոցների տեսակները, որոնց համար է նախատեսված այդ տեղը. այդ գրառումները կարող են սահմանափակել նաև թույլատրված կայանման տևողությունը:

## 2. Սահմանափակ կայանման գոտու ելքը ցույց տվող նշան

Բնակելի կետերում այն գոտու ելքը ցույց տալու համար, որտեղ կայանման տևողությունը սահմանափակ է և որի մուտքը նշված է C,21 նշանով, որում ընդգրկված է C,18 նշանը, օգտագործվում է E,24 նշանը: Այդ նշանը բաղկացած է բաց գույնի քառակուսուց, որում ընդգրկված է C,18 բաց մոխրագույն նշանը և սև կամ մուգ մոխրագույն անկյունագծային շերտ կամ սև զուգահեռ գծեր, որոնք այդպիսի շերտ են ձևավորում: Եթե գոտու մուտքի մոտ C,21 նշաններ են տեղադրվում, որոնք ընդգրկում են E,23 նշանը, ելքը կարող է նշանակվել ցուցանակով՝ անկյունագծային սև կամ մուգ մոխրագույն շերտով և կամ նման շերտ ձևավորող մոխրագույն կամ սև զուգահեռ գծերով, և կայանման սկսվառակով՝ բաց գույնի հիմնագույնի վրա:

**Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին կոմպենցիայի  
(Վիեննա, 1968թ., նոյեմբերի 8)**

**Հավելված 7**

### **Լրացուցիչ ցուցանակներ**

1. Այդ ցուցանակները սպիտակ կամ դեղին հիմնագույն ունեն և սև, կապույտ կամ կարմիր եզրաշերտ, իսկ հեռավորությունը կամ երկարությունը այդ դեպքում նշվում է սև կամ կապույտ թվերով, կամ էլ ցուցանակները ունենում են սև կամ կապույտ հիմնագույն և սպիտակ, դեղին կամ կարմիր եզրաշերտ, իսկ հեռավորությունը կամ երկարությունը այդ դեպքում նշվում է սպիտակ կամ դեղին թվերով:
2. ա) «Նմուշ 1»-ի լրացուցիչ ցուցանակները ցույց են տալիս նշանի և վտագավոր տեղամասի կամ այն գոտու հեռավորությունը, որտեղ կիրառվում են կանոնները:
  - բ) «Նմուշ 2»-ի լրացուցիչ ցուցանակները ցույց են տալիս վտանգավոր տեղամասի կամ այն գոտու երկարությունը, որտեղ կիրառվում է ցուցումը:
  - գ) Լրացուցիչ ցուցանակները գետեղվում են նշանների տակ: Սակայն, ինչ վերաբերում է A (b ինդեքսով) տարատեսակի նախազգուշացնող նշաններին, ապա լրացուցիչ ցուցանակների համար նախատեսված պայմանանշանները կարող են գետեղվել նշանի ստորին մասում:
3. Կայանման սահմանափակմանը կամ արգելքին վերաբերող «Նմուշ 3» և «Նմուշ 4» լրացուցիչ ցուցանակներ են հանդիսանում համապատասխանաբար 3(a ինդեքսով), 3 (b ինդեքսով), 3 (c ինդեքսով), 4 (a ինդեքսով), 4 (b ինդեքսով) և 4(c ինդեքսով) տարատեսակի ցուցանակները (տես 6-րդ հավելվածի Ա բաժնի 3-րդ կետը):

**Ճանապարհային նշանների և ազդանշանների մասին կոնվենցիայի  
(Վիեննա, 1968թ., նոյեմբերի 8)**

**Հավելված 8**

**Ճանապարհների գծանշումը**

Գլուխ I. Ընդհանուր դրույթներ

Գլուխ II. Երկայնակի գծանշում

Գլուխ III. Լայնակի գծանշում

Գլուխ IV Գծանշման այլ տեսակներ

**Գլուխ I**

**Ընդհանուր դրույթներ**

1. Ճանապարհի երթևեկելի հատվածի գծանշումը (ճանապարհների գծանշումը) պետք է անցկացնել այնպիսի նյութերի կիրառմամբ, որոնք սալթաքում չեն առաջացնում, և գծանշումը ճանապարհի մակարդակից 6 մմ-ից ավելի բարձրություն չպետք է ունենա: Եթե ճանապարհի գծանշման համար կոճգամներ (ազույցներ) են օգտագործվում դրանց մասն այլ հարմարանքներ, ապա դրանք ճանապարհի մակարդակից 1,5 սմ-ից ավելի բարձրություն չպետք է ունենան (կամ 2,5 սմ-ից ավելի այն դեպքերում, երբ օգտագործվում են լուսասանդրադարձ կոճգամներ (ազույցներ). դրանց օգտագործումը պետք է բավարարի ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջները:

**Գլուխ II**

**Երկայնակի գծանշում**

**Պայմանաշանների չափսերը**

2. Երկայնակի գծանշման դեպքում անընդհատ և ընդհատվող գծի լայնությունը չպետք է 0,10 մ-ից (0,4 դյույմից) պակաս լինի:
3. Երկու երկայնակի գծերի (կրկնակի գիծ) միջև տարածությունը պետք է կազմի 0,10 մ-ից (4 դյույմից) մինչև 0,18 մ (7 դյույմ):
4. Ընդհատվող գիծը բաղկացած է հավասար երկարությամբ և միմյանցից հավասար հեռավորությամբ գծիկներից: Գծիկների և դրանց ընդմիջումների երկարությունը որոշելիս պետք է հաշվի առնվի ճանապարհի տվյալ հատվածում կամ գոտում փոխադրամիջոցների արագությունը:
5. Բնակելի կետերից դուրս ընդհատվող գիծը պետք է բաղկացած լինի 2 մ-ից (6 ֆունտ 6 դյույմից) մինչև 10 մ (32 ֆունտ) երկարությամբ գծիկներից. սույն հավելվածի 23-րդ

կետում նշված այն գծիկների երկարությունը, որոնք ցույց են տալիս մոտենալը, պետք է 2-3 անգամ գերազանցի ընդհատումների երկարությանը:

6. Բնակելի կետերում գծիկների և դրանց ընդհատումների երկարությունը պետք է ավելի փոքր լինի, քան բնակելի կետերից դուրս նշանակվող գծիկների և դրանց ընդհատումների երկարությունը: Գծիկների երկարությունը կարող է փոքրացվել մինչև 1 մ (3 ֆունտ 4 դյույմ): Սակայն որոշ ոչ մեծ քաղաքային արագընթաց մայրուղիներում երկայնակի գծանշան բնութագրիչները կարող են լինել նույն բնակելի կետերից դուրս կիրառվողները:

#### **Բ. Երթևեկության գոտիների նշումը**

7. Երթևեկության գոտիների գծանշումը անցկացվում է կա՛մ ընդհատվող, կա՛մ անընդհատ գծերով, կամ էլ ուրիշ համապատասխան միջոցներով:

##### **i) Բնակելի կետերից դուրս**

8. Երկկողմանի երթևեկության ճանապարհներին, որոնք շարժման երկու գոտի ունեն, երթևեկելի հատվածի առանցքային գիծը պետք է տարվի երկայնակի գծանշումով: Առանցքային գիծը, որպես կանոն, նշվում է ընդհատվող գծով: Բացառիկ դեպքերում այդ նպատակով կիրառվում է անընդհատ գիծը:
9. Շարժման եռագոտի ճանապարհներին բնականոն տեսանելիությամբ հատվածներում գոտիները, որպես կանոն, պետք է նշվեն ընդհատվող գծերով: Առանձին դեպքերում երթևեկության անվտանգությունը մեծացնելու նպատակով կարող են կիրառվել անընդհատ գծերը կամ էլ ընդհատվող գծերը՝ անցկացված անընդհատ գծերի կողքին:
10. Շարժման երեքից ավելի գոտիներ ունեցող ճանապարհներին շարժման ուղղությունների բաժանարար գիծը պետք է նշվի անընդհատ գծով կամ կրկնակի անընդհատ գծով, բացառությամբ այն դեպքերի, երբ կենտրոնական գոտիներում շարժման ուղղությունը կարող է փոփոխվել: Բացի դրանից, շարժման գոտիները պետք է նշվեն ընդհատվող գծերով (1a և 1b դիագրամներ):

##### **ii) Բնակելի կետերում**

11. Բնակելի կետերում հանձնարարականները՝ շարադրված սույն հավելվածի 8-10-րդ կետերում, տարածվում են երկկողմանի երթևեկության փողոցների վրա և շարժման առնվազն երկու գոտի ունեցող միակողմանի երթևեկությամբ փողոցների վրա:
12. Շարժման գոտիները պետք է նշվեն այն կետերում, որտեղ ճանապարհի երթևեկելի հատվածի լայնությունը սահմանափակված է եզրաքարերի, անվտանգության կղզյակների կամ ուղղորդող կղզյակների առկայության հետևանքով:
13. Մեծ խաչմերուկների (հատկապես կարգավորվող) մոտ, որտեղ ճանապարհի լայնությունը բավարար է երկու կամ մի քանի շարքերով փոխադրամիջոցների շարժման համար, շարժման գոտիները պետք է նշվեն 2-րդ և 3-րդ դիագրամների համաձայն: Այդ դեպքերում գոտիները սահմանազատող գծերը կարող են լրացվել սլաքներով (տես սույն հավելվածի 39-րդ կետը):

#### **Գ. Հատուկ դեպքերի նշումը**

- i) Անընդհատ գծերի կիրառումը

14. Ճանապարհային երթևեկության անվտանգության նպատակով որոշ խաչմերուկներում առանցքային ընդհատվող գծերը (դիագրամ 4) հարկ է փոխարինել կամ լրացնել անընդհատ գծով (դիագրամ 5 և 6):
15. Եթե անհրաժեշտություն է առաջանում արգելել ճանապարհի հակառակ ուղղությամբ շարժման համար նախատեսված հատվածի օգտագործումը այն տեղերում, որտեղ տեսանելիության տարածությունը կրճատված է (ճանապարհների բեկումներում, շրջադարձերում և այլն), կամ այն հատվածներում, որտեղ ճանապարհի երթևեկի հատվածը նեղանում է կամ այլ առանձնահատկություններ ունի, ճանապարհների այն հատվածների համար հրահանգվող սահմանափակումները, որտեղ տեսանելիության հեռավորությունը նվազագույն M տեսանելիության հեռավորությունից փոքր է, պետք է նշվեն անընդհատ գծով՝ անցկացված 7a-16 դիագրամների համաձայն (2): Այն երկրներում, որտեղ դա համապատասխանում է փոխադրամիջոցների կառուցվածքին, 7a - 10a դիագրամներում նշված բարձրությունը աչքի մակարդակում՝ հավասար 1 մ, կարող է մեծացվել մինչև 1,20 մ:
16. Այն մեծությունը, որը հարկ է ընդունել M-ի համար, կախված ճանապարհի բնութագրերից, փոխվում է: 7a, 7b, 8a, 8b, 8c և 8d դիագրամներում ցույց է տրված գծերի անցկացումը համապատասխանաբար շարժման երկու և երեք գոտիներով ճանապարհների բեկման տեղում, որտեղ տեսանելիության հեռավորությունը սահմանափակված է: Այդ դիագրամները համապատասխանում են երկայնակի պրոֆիլին՝ նշված այն էջի վերին մասում, որտեղ դրանք գտնվում են, և M հեռավորությանը՝ որոշված ներքոշարադրյալ 24-րդ կետի համաձայն. A-ն (կամ D-ն) այն կետն է, որտեղ տեսանելիության հեռավորությունը M-ից փոքր է դառնում, այն դեպքում, երբ C-ն (կամ B-ն) այն կետն է, որտեղ տեսանելիության հեռավորությունը կրկին M-ից մեծ է դառնում: (3)
17. Այն դեպքերում, երբ AB և CD հատվածները ծածկում են միմյանց, այսինքն՝ այն դեպքերում, երբ երկու ուղղություններով տեսանելիությունը M տեսանելիության հեռավորությունից մեծ է մինչև ճանապարհի բեկմանը հասնելը, գծերը պետք է դասավորվեն նույն ձևով, ընդ որում անընդհատ գծերը՝ անցկացված ընդհատվող գծի կողքին, չեն շոշափում նրան, ինչպես որ պատկերված է 9, 10a և 10b դրագրամներում:
18. 11a 11b դրագրամները ցույց են տալիս գծերի նշումները նույն հիպոթետիկ շարժման երկու գոտիներով ճանապարհի կեռ հատվածում սահմանափակ տեսանելիության դեպքում:
19. Շարժման երեք գոտիներով ճանապահներին հնարավոր է երկու մեթոդի կիրառում: Դրանք ցույց են տրված 8a, 8b, 8c և 8d դիագրամներում (կամ, պայմանավորված հանգամանքներով, 10a և 10b): 8a և 8b դիագրամները (կամ, պայմանավորված հանգամանքներով, 10a) պետք է կիրառվեն երկանիվ փոխադրամիջոցների նշանակալի երթևեկությամբ ճանապարհների դեպքում, իսկ 8c և 8d (կամ, պայմանավորված հանգամանքներով, 10b) դիագրամը՝ հիմնականում քառանիվ փոխադրամիջոցների երթևեկությամբ ճանապարհների դեպքում: 11c դիագրամը ցույց է տալիս գծերի նշումը նույն հիպոթետիկ շարժման երեք գոտիներով ճանապարհի կեռ հատվածում սահմանափակ տեսանելիության դեպքում:
20. 12, 13 և 14 դիագրամներում ցույց են տրված ճանապարհի երթևեկի հատվածի նեղացումը նշող գծերը:
21. 8a, 8b, 8c, 8d 10a և 10b դիագրամներում շեղ անցումային գծերի թեքությունը առանցքային գծի նկատմամբ 1/20-ից մեծ չպետք է լինի:
22. 13 և 14 դիագրամներում, որոնք պատկերում են գծանշումը ճանապարհի երթևեկի հատվածի լայնության փոփոխության դեպքում, ինչպես նաև 15, 16 և 17 դիագրամներում, որոնք ցույց են տալիս այն խոչընդոտները, որոնք անընդհատ գծի (գծերի) շեղում են պահանջում, գծի (գծերի) այդ շեղումը հիմնականում պետք է 1/50-ից

փոքր լինի մեծ արագության երթևեկությամբ ճանապարհներին և 1/20-ից փոքր այն ճանապարհներին, որտեղ շարժման արագությունը չի գերազանցում 20 կմ/ժ (30 մղոն/ժ): Բացի դրանից, անընդհատ շեղ գծերին շարժման այն ուղղության համար, որի դեպքում դրանք կիրառվում են, պետք է նախորդի անընդհատ գիծ՝ զուգահեռ ճանապարհի երթևեկելի հատվածի առանցքին և երկարությամբ համապատասխան այն տարածությանը, որ անցնում է ավտոմեքենան 1 վայրկյանում միջին արագության դեպքում:

23. Այն դեպքում, երբ ճանապարհի սովորական հատվածում շարժման գոտին ընդհատվող գծով նշելու անհրաժեշտություն չկա, անընդհատ գծին պետք է նախորդի մոտենալը նշող գիծը, որ իրենից ներկայացնում է ընդհատվող գիծ, որի երկարությունը կախված է փոխադրամիջոցների բնականոն արագությունից, այսինքն՝ 50 մ-ից ոչ պակաս: Այն դեպքում երբ ճանապարհի սովորական հատվածում շարժման գոտիները նշվում են ընդհատվող գծերով, անընդհատ գծին ևս պետք է նախորդի մոտենալը նշանակող գիծ՝ փոխադրամիջոցների բնականոն արագությունից կախված երկարությամբ, այսինքն՝ 50 մ-ից ոչ պակաս: Գծանշումը կարող է լրացվել սլաքով կամ մի քանի սլաքներով, որոնք ցույց են տալիս վարորդներին շարժման այն գոտին, որով պետք է ընթանան:

ii) Անընդհատ գծերի կիրառման պայմանները

24. Տեսանելիության հեռավորության ընտրությունը, որը պետք է ընդունվի ճանապարհների այն հատվածները որոշելիս, որտեղ անընդհատ գիծը ցանկալի է կամ ոչ ցանկալի, ինչպես նաև այդ գծի պատշաճ երկարության որոշումը անխուսափելիորեն փոխզիջման արդյունք է: Ստորև բերվող աղյուսակը տալիս է հանձնարարելի M մեծությունը՝ համապատասխան մոտենալու տարբեր արագություններին (4):

Աղյուսակ

M մեծությունների  
մոտեցման արագությունը

100 կմ/ժ (60 մղոն/ժ)...160 մ-ից (480 ֆունտից) մինչև 320 մ (960 ֆունտ)

80 կմ/ժ (50 մղոն/ժ) ... 130 մ-ից (380 ֆունտից) մինչև 260 մ (760 ֆունտ)

65 կմ/ժ (40 մղոն/ժ) ... 90 մ-ից (270 ֆունտից) մինչև 180 մ (540 ֆունտ)

50 կմ/ժ (30 մղոն/ժ) ... 60 մ-ից (180 ֆունտից) մինչև 120 մ (360 ֆունտ):

25. Այդ աղյուսակում չնշված արագությունների համար M-ի համապատասխան մեծությունը հանվում է ընդմիջարկման (ինտերպոլիացիայի) կամ արտամիջարկման (էքստրապոլիացիայի) միջոցով:

#### **Գ. Ճանապարհի երթևեկելի հատվածի սահմանները նշող սահմանագծեր**

26. Ճանապարհի երթևեկելի հատվածի սահմանները նշող գծերի գծանշումը առավելապես բաղկացած է անընդհատ գծից: Այդ գծերի հետ կարող են համադրվել սալիկներ, կոճգամներ կամ լույս անդրադարձնողներ:

## **Ե. Խոչընդոտների նշումը**

27. 15,16 և 17 դիագրամներում պատկերված են այն գծանշման օրինակները, որը պետք է անցկացվի կոլյակների կամ երթևեկելի հատվածի այլ խոչընդոտների շուրջը:

## **Զ. Շրջադարձի գծերը**

28. Որոշ խաչմերուկներում ցանկալի է ցույց տալ վարորդներին՝ ինչպես պետք է արվի ձախ շրջադարձը աջակողմյան երթևեկությամբ երկրներում կամ ինչպես պետք է կատարվի աջ շրջադարձը ձախակողմյան երթևեկությամբ երկրներում:

## **Գլուխ III**

### **Լայնակի գծանշում**

#### **Ա. Ընդհանուր դրույթներ**

29. Հաշվի առնելով տեսողության անկյունը, որի տակ վարորդներին տեսանելի է ճանապարհի գծանշումը, լայնակի նշումները պետք է ավելի լայն լինեն, քան երկայնակիները:

#### **Բ. Կանգ- գծերը**

30. Կանգ-գծի նվազագույն լայնությունը պետք է կազմի 0,2 մ (8 դյույմ), իսկ առավելագույն լայնությունը՝ 0,6 մ (24 դյույմ): Հանձնարարվում է 0,3 մ (12 դյույմ) լայնությունը:

31. Այն դեպքում, երբ այդ գիծը կիրառվում է կանգառ նշանակող ճանապարհային նշանի համադրությամբ, կանգ-գիծը պետք է տարվի այնպես, որ վարորդը, կանգնելով անմիջապես դրանից առաջ, կարողանա հնարավորինս ազատ դիտել երթևեկությունը խաչմերուկի ուրիշ մուտքերում. ընդ որում ուշադրության պետք է առնվեն ուրիշ փոխադրամիջոցների և հետիոտների երթևեկության պահանջները:

32. Կանգ-գծերը կարող են լրացվել երկայնակի գծերով (տես 18 և 19 դիագրամները): Դրանք կարող են լրացվել նաև «ԿԱՆԳ» բառով՝ գետեղված ճանապարհի երթևեկելի հատվածում. նման գծանշման օրինակները տրված են 20 և 21 դիագրամներում: «ԿԱՆԳ» բառի տառերի վերին երիզի և կանգ-գծի միջև հեռավորությունը պետք է կազմի ոչ պակաս, քան 2 մ (6 ֆուտ 7 դյույմ) և ոչ ավելի, քան 25 մ (82 ֆուտ 2 դյույմ):

#### **Գ. Գծեր՝ նշող այն տեղը, որտեղ վարորդները պարտավոր են զիջել ճանապարհը**

33. Յուրաքանչյուր գծի նվազագույն լայնությունը պետք է կազմի 0,2 մ (8 դյույմ), իսկ առավելագույն լայնությունը՝ 0,6 մ (24 դյույմ). եթե երկու գիծ կա, դրանց միջև տարածությունը պետք է կազմի ոչ պակաս, քան 0,3 մ (12 դյույմ): Գիծը կարող է փոխարինվել ճանապարհի կողքին դասավորված եռանկյունիներով, որոնց զազաթներն ուղղված են այն վարորդի կողմը, որը պարտավոր է զիջել ճանապարհը: Այդ եռանկյունիների հիմքը պետք է լինի ոչ պակաս, քան 0,4 մ (16 դյույմ) և ոչ ավելի, քան 0,6 մ (24 դյույմ), և բարձրությունը՝ ոչ պակաս, քան 0,5 մ (24 դյույմ) և ոչ ավելի, քան 0,7 մ (28 դյույմ):ծ

34. Լայնակի գծանշումը պետք է անցկացվի այն նույն պայմաններում, ինչ կանգ-գիծը՝ հիշատակված սույն հավելվածի 31-րդ կետում:



35. 34-րդ կետում նշված գծանշումը կարող է լրացվել եռանկյունիով, որը դրվում է ճանապարհի երթևեկելի հատվածում և որի օրինակը տրվում է դիագրամ 22-ում: Այդ եռանկյունու հիմքի և լայնակի գծանշման միջև տարածությունը պետք է կազմի 2 մ-ից (6 ֆունտ 7 դյույմից) մինչև 25 մ (82 ֆունտ 2 դյույմ): Այդ եռանկյունու հիմքը պետք է լինի ոչ պակաս, քան 1մ (3 ֆունտ 4 դյույմ). դրա բարձրությունը պետք է հիմքից 3 անգամ ավելի մեծ լինի:
36. Այդ լայնակի գծանշումը կարող է լրացվել երկայնակի գծերով:

#### **Դ. Հետիոտնային անցումներ**

37. Հետիոտնային անցումը նշող շերտերի միջև տարածությունը պետք է լինի առնվազն հավասար այդ շերտերի լայնությանը և չպետք է գերազանցի 2 անգամից ավելի: Մի շերտի և շերտերի միջև տարածության ընդհանուր լայնությունը պետք է կազմի 1 մ-ից (3 ֆունտ 4 դյույմից) մինչև 1,4 մ (4 ֆունտ 8 դյույմ): Հետիոտնային անցումների հանձնարարելի նվազագույն լայնությունը պետք է լինի 2,5 մ (8 ֆունտ) այն ճանապարհներին, որտեղ արագությունը սահմանափակվում է 60կմ/ժ-ով, և 4մ (13 ֆունտ) այն ճանապարհներին, որտեղ թույլատրվում է ավելի մեծ արագություն կամ արագությունը չի սահմանափակվում:

#### **Ե. Անցուղիներ հեծանվորդների համար**

38. Հեծանվորդների համար անցուղիները պետք է նշվեն կրկնակի ընդհատվող գծերով: Այդ ընդհատվող գծերը պետք է գերազանցաբար բաղկացած լինեն քառակուսիներից  $(0,4 - 0,6 \text{ մ}) \times (0,4 - 0,6 \text{ մ}) [(16 - 24 \text{ դյույմ}) \times (16 - 24 \text{ դյույմ})]$ : Այդ քառակուսիների միջև տարածությունը պետք է կազմի 0,4 - 0,6 մ (16 - 24 դյույմ): Անցուղու լայնությունը պետք է լինի ոչ պակաս, քան 1,8 մ (6 ֆունտ): Սալիկների և կոճգամների օգտագործում չի հանձնարարվում:

### **Գլուխ IV**

#### **Գծանշումների այլ տեսակներ**

#### **Ա. Սլաքներ**

39. Շարժման բավականաչափ գոտիներով ճանապարհներին, որոնք հնարավորություն են տալիս վերադասավորվել փոխադրամիջոցներին խաչներուկներին մոտենալիս, այն գոտիները, որոնք պետք է օգտագործվեն շարժման համար, կարող են ցույց տրվել սլաքների միջոցով, որոնք գծվում են ճանապարհի երթևեկելի հատվածի մակերեսին (դիագրամներ 2,3,19 և 23): Սլաքները կարող են կիրառվել նաև շարժման ուղղությունը հաստատելու համար միակողմանի երթևեկությանը ճանապարհներին: Այդ սլաքների երկարությունը պետք է լինի ոչ պակաս, քան 2 մ (6 ֆունտ 7 դյույմ): Սլաքների նշումը կարող է լրացվել գրառումներով երթևեկելի հատվածում:

#### **Բ. Չուզանալի շերտեր**

40. 24 և 25 դիագրամներում բերվում են այնպիսի գոտիների օրինակներ, որոնցում արգելվում է անցումը փոխադրամիջոցների համար:

## **Գ. Գրառումներ**

41. Ճանապարհի երթևեկելի հատվածում գրառումները կարող են կիրառվել երթևեկությունը կարգավորելու, ճանապարհներից օգտվողներին նախազգուշացնելու կամ կողմնորոշելու նպատակով: Ընդամին օգտագործվող բառերը պետք է գերազանցաբար կա՛մ բնակելի կետերի անուններ լինեն, կա՛մ ճանապարհների համարներ, կա՛մ միջազգային ասպարեզում ընդունված բառեր (օրինակ՝ «stop», «bus» «taxi»):
42. Տառերը տեսողության շատ փոքր անկյան հեկանքով, որի տակ վարորդներին տեսանելի է գրառումը, պետք է զգալիորեն ձգված լինեն շարժման ուղղության կողմը (տես 20 դիագրամը):
43. Այն դեպքերում, երբ մոտեցման արագությունը գերազանցում է 50կմ/ժ (30 մղոն/ժ), տառերի նվազագույն երկարությունը պետք է կազմի 2,5 մ (8 ֆունտ):

## **Դ. Կանգառի և կայանումի վերաբերող պայմանանշաններ**

44. Կանգառի և կայանումի սահմանափակումները կարող են նշվել եզրաքարերի վրա արված գծանշումներով կամ երթևեկելի հատվածում, կայանատեղերի սահմանները կարող են նշվել համապատասխան գծերով՝ արված ճանապարհի երթևեկելի հատվածի մակերևույթին:

## **Ե. Գծանշում ճանապարհի երթևեկելի հատվածում և դրան հարող կառույցներին**

- i) Այն տեղերը ցույց տվող գծանշում, որտեղ փոխադրամիջոցների կայանումը սահմանափակված է:
45. 26 դիագրամում տրվում է զիգզագաձև գծի օրինակը:
- ii) Պայմանանշաններ խոչընդոտ ներկայացնող առարկաների վրա
46. Խոչընդոտ ներկայացնող առարկաների վրա արված պայմանանշանների օրինակը երբևիցե է 27 դիագրամում:

- 
- 
- (1) Կոնվենցիայի տպագրական եղանակով հրատարակված բնագրի համապատասխան տեղերում կարող են պատկերվել ազդանշանային նշաններ, պայմանանշաններ և ցուցանակներ:
  - (2) Սույն կետում նշված տեսանելիության տարածությունը ենթադրում է մի տարածություն, որտեղ առարկան՝ տեղադրված ճանապարհի մակերևույթից 1մ (3 ֆունտ 4 դյույմ) բարձրությամբ, տեսանելի է երթևեկելի հատվածում գտնվող դիտորդին, որի աչքը նույնպես գտնվում է երթևեկելի հատվածի մակերևույթից 1մ (3 ֆունտ 4 դյույմ) բարձրության վրա:
  - (3) 7 դիագրամում պատկերված գծանշումը կարող է փոխարինվել A-ի և D-ի միջև մի անընդհատ առանցքային գծով՝ առանց կողքին ընդհատվող գիծ քաշելու: Դրան կարող է նախորդել ընդհատվող առանցքային գիծը՝ բաղկացած առնվազն երեք գծիկներից:

Սակայն այդ պարզեցված պայմանանշանը պետք է զգուշավոր և միայն բացառիկ դեպքերում կիրառվի, քանի որ որոշակի տարածությունում այն խանգարում է վարորդին վազանց կատարել, այն դեպքում, երբ կա համապատասխան տեսանելիություն: Թյուրիմացություններից խուսափելու համար հարկ է հնարավորինս խուսափել երկու մեթոդների կիրառումից միևնույն երթուղում կամ միևնույն շրջանի միօրինակ երթուղիներում:

- (4) Այդ հաշվարկի համար ընդունված մոտեցման արագությունը այն շարժման արագությունն է, որը չի գերազանցում փոխադրամիջոցների 85%-ը կամ հիմնական արագությունը, եթե այն ավելի մեծ է: